


ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն



Մարդկային զարգացման
ուիճազգային կենտրոն

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՆԵՐԸ

բուլբուլի համայնք



Ձեռնարկ

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական
ծառայություն

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ
բոլորի համար

Ձեռնարկ

Երևան – 2001

Սույն ձեռնարկը նախապատրաստվել է Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից համատեղ իրականացված ծրագրի շրջանակում: Իրականացված ծրագիրը նպատակ ունի վիճակագրական տվյալների ամենատարբեր օգտագործողներին ներկայացնել ազգային հաշիվների համակարգի ընձեռած հնարավորությունները, մեթոդաբանությունը և օգտագործման ձևերը:

Ձեռնարկի բովանդակությունը մշակվել է և պատրաստվել հրատարակման Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից:

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2001թ.

Հարգելի ընթերցող

Գաղտնիք չէ, որ 90-ական թվականներից Հայաստանը որդեգրել է տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Բնական է, որ ազատական տնտեսակարգին անցումը ենթադրում էր դրան բնորոշ հաշվարկային համակարգի ներդրում, ինչն ուղղված պետք է լիներ ազատական տնտեսակարգի բնութագրիչների բացահայտման ուղղությամբ ցուցանիշների նոր համախմբով երկրի վիճակի հաշվեգրմանը և միջազգային հանրության հետ Հայաստանի կոմունիկացիոն ունակությունների համահարթեցմանը: Վերջինս համընդհանուր գլոբալիզացիայի և շուկաների միջազգայնացման ինտենսիվացող գործընթացների արդի փուլում ձեռք է բերել էական գործոնի նշանակություն: Այլ համակարգերի նկատմամբ տեղեկատվական համակարգերի առաջանցիկ զարգացման արդի աշխարհի բնութագրիչն էր պետ մոտեցրել է երկրների սահմանները, ինչը հնարավորություն է ընձեռել կիրառելու երկրների բացարձակ մեծամասնության համար ցուցանիշների առավել ունիֆիկացված համախումբ կազմող «Ազգային հաշիվների համակարգը»:

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունն արդեն իսկ զգալի աշխատանքներ է իրականացրել մեր երկրում ազգային հաշիվների համակարգի ներդրման, ինչպես նաև այդ նոր վիճակագրական մեթոդաբանությունից օգտվողների շրջանակի քայլ առ քայլ ընդլայնման ուղղությամբ:

Այսպիսով, ամբողջական մակրոտնտեսական ու համադրելի տվյալների տիրապետման, այն է՝ ազգային հաշիվների համակարգի ներդրման առաջին քայլերն արդեն արված են:

Ազգային հաշիվների համակարգը նպատակաուղղված է ողջ տնտեսության արտացոլմանը, իր բնույթով անաչառ է և ուղղված է հանրության ամենալայն շրջանակներին, վիճակագրական տեղեկատվության բոլոր տեսակի սպառողներին: Սակայն, առաջին հերթին, այն ունի գործնական և կիրառական նշանակություն տնտեսավարող սուբյեկտների, քաղաքական որոշումներ կայացնող ատյանների և գիտակրթական շրջանների համար:

2000 թվականին լույս տեսավ «Հայաստանի ազգային հաշիվները. աղյուսակներ, մեթոդաբանություն, վերլուծություն. 1990-1997» ժողովածուն, որը պարունակում է ազգային հաշիվների համակարգի միջազգայնորեն

կիրառվող մեթոդաբանությունների, դրույթները, նշված ժամանակահատվածում արձանագրված ազգային հաշիվների փաստացի ցուցանիշները և դրանց համար հիմք հանդիսացող մեթոդները: Սույն ձեռնարկը հանդիսանում է նշված ժողովածուի տրամաբանական շարունակությունը: Այն առավելապես ուղղված է գործարարներին, հետազոտողներին և նպատակ ունի առավել մատչելի ձևով ներկայացնել ազգային հաշիվների համակարգի էությունը, տնտեսության տարբեր հատվածների փոխկապակցվածությունը, դրանց բացահայտման մեթոդաբանությունը, վեր հանել առօրյա աշխատանքում մակրոտնտեսական ցուցանիշներից օգտվելու հնարավորություններն ու առավելությունները: Հուսով ենք, այս ձեռնարկը կնպաստի վիճակագրական տվյալներից մշտապես օգտվողների թվաքանակի ավելացմանը:

Հարգանքով՝



Ս. Մնացականյան
ՀՀ Ազգային վիճակագրական
ծառայության նախագահ

25 մայիսի 2001թ.

1	Նախարան	6
2	Ազգային հաշիվների համակազմի օգտագործման ուղղությունները	8
3	Ազգային հաշիվների հիմունքները	11
3.1.	Ազգային և ներքին տնտեսություն	11
3.2.	Հիմնական տնտեսական գործակալները և տնտեսության հատվածները	13
3.3.	ՀՆԱ-ն որպես ԱՀՀ-ի առանցքային հասկացություն	18
4	ԱՀՀ-ի կառուցման ընդհանուր դրույթները	26
4.1.1.	Արտադրության հաշիվ	29
4.1.2.	Եկամուտների ձևավորման հաշիվ	32
4.1.3.	Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ.....	37
4.1.4.	Եկամուտների երկրորդական բաշխման հաշիվ.....	42
4.1.5.	Եկամուտների օգտագործման հաշիվ.....	47
4.1.6.	Կապիտալի հետ գործառնությունների հաշիվ.....	50
4.1.7.	Ֆինանսական հաշիվ.....	55
5	Ազգային հաշիվները մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռության շրջանակներում	57
5.1.	Պետական կառավարման մարմիններ	58
5.1.1.	Հիմնական գործառույթը.....	58
5.1.2.	Եկամուտներ	63
5.1.3.	Ծախսեր.....	64
5.1.4.	Պակասուրդ.....	65
5.1.5.	Պակասուրդի ֆինանսավորում	68
5.2.	Ֆինանսական ինստիտուտներ.....	70
5.2.1.	Դրամական բազա	71
5.2.2.	Դրամական զանգված	75
5.3.	Արտաքին հատված.....	78
5.3.1.	Ընթացիկ հաշիվ.....	79
5.3.2.	Կապիտալ հաշիվ և ֆինանսական հաշիվ.....	80
6	Պետական քաղաքականության իրականացման իրավասու մարմինները	85
6.1.	Կենտրոնական կառավարություն	86
6.2.	Կենտրոնական բանկ	89
7	Հավելվածներ	92

1 Նախարան

Շուկայական հարաբերություններին անցնելու և համաչափարհային տնտեսությունն ինտեգրվելու գործընթացն անհրաժեշտություն առաջացրեց վերակառուցել ԱՊՀ երկրների վիճակագրական ցուցանիշների համակարգը՝ համապատասխանեցնելով այն ՄԱԿ-ի վիճակագրական կոմիտեի առաջարկին, որոնք ընդունված են միջազգային պրակտիկայում և կիրառվում են ազատական տնտեսություն ունեցող ավելի քան 150 երկրներում:

Այսօր տնտեսական վիճակագրությամբ և հատկապես ազգային հաշիվների համակարգով հետաքրքրվում է հասարակության մի ստվար հատվածը: Եվ դա բնական է: Մարդկանց ընթացիկ եկամուտներն անմիջականորեն կախվածություն մեջ են ազգային արդյունքից: Սղաճի տեմպով է պայմանավորված ընտանիքների ունեցած հարստության իրական մեծությունը: Ազգային հաշիվների ցուցանիշների վերլուծությունը ոչ միայն բացատրում է տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունների պատճառները և ընդլայնում կանխատեսումների հնարավորությունները, այլ նաև բացահայտում է հասարակության՝ այդ գործընթացի վրա ազդելու հնարավորությունները:

Ինչպես հայտնի է մակրոտնտեսական ցուցանիշները միմյանցից անկախ մեծություններ չեն: Ազգային հաշիվները ոչ այլ ինչ են, քան տնտեսության ընդհանուր հավասարակշռությունը ներկայացնող այնպիսի ձև, որը հնարավորություն է տալիս լավագույնս պատկերացնել մակրոտնտեսական ցուցանիշների այդ փոխկապակցվածությունը: Ազգային հաշիվների համակարգում փոխկապակցված ցուցանիշները շուկայական տնտեսություն ունեցող երկրներում օգտագործվում են մակրոտնտեսական իրավիճակը նկարագրելու և անհրաժեշտ վերլուծություններ կատարելու նպատակով:

ԱՀՀ-ն առաջացել է տնտեսապես առավել զարգացած երկրներում: Այն հիմնված է տնտեսական շրջանառության մոդելի վրա, որտեղ ազգային տնտեսության գործունեությունը նկարագրվում է փակ դրամական հոսքերի տեսքով, որոնք առաջանում են տնտեսության սուբյեկտների միջև դրսևտվող արտադրության, բաշխման և սպառման հարաբերությունների ընթացքում: Սակայն հարկ է նկատի առնել, որ ամեն տարի տեղի են ունենում միլիոնավոր գործառնություններ և հնարավոր չէ դրանք ամբողջությամբ ներառել ազգային հաշիվների համակարգում: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել, թե

ինչ ենք ակնկալում ստանալ ազգային հաշիվներից, որպեսզի բաց չթողնվի այնպիսի տվյալ, որի կարիքը հետազայում կզգացվի:

2 Ազգային հաշիվների համակարգի օգտագործման ուղղութիւնները

Ազգային հաշիվները կարելի է օգտագործել որպէս գործիք՝ հասկանալու համար անցյալի տնտեսական քաղաքականութիւնը, արձանագրելու ձեռքբերումների պատճառները և վերհանելու բացթողումները: Անցյալում արդյունքների հետազոտութիւնը հնարավորութիւն էն տալիս դատել երկրի տնտեսական քաղաքականութեան արդյունավետութեան մասին՝ տնտեսական աճը, գների փոփոխութիւնը, պետական պարտքի մեծութիւնը, ազգային եկամտի կառուցվածքը համեմատութեան մեջ դնելով մյուս երկրների համապատասխան ցուցանիշների հետ:

Այդ իսկ պատճառով կարևոր նշանակութիւն ունի անցած տարիների ազգային հաշիվների փաստացի տվյալների առկայութիւնը, որպէսզի, վերհանելով տնտեսական ցուցանիշների փոփոխման միտումները, կատարվի դրանց խորը և համակողմանի վերլուծութիւն: Միայն այդ պայմաններում հնարավոր կլինի հաջորդ տարիների համար հնարավորին ճիշտ կանխատեսումներ կատարել:

ԱՀՀ-ն փոխկապակցված վիճակագրական ցուցանիշների համալիր է, որը բնութագրում է տնտեսութեան մակրոտնտեսական գործընթացները: Ազգային հաշիվների համակարգը նկարագրում է բոլոր ռեզիդենտ տնտեսավարող միավորների գործունեութիւնն արտադրութեան սկզբնական փուլից մինչև արդյունքի վերջնական սպառումը կամ ամենատարբեր կուտակումների ստեղծումը: Ազգային հաշիվների համակարգի ցուցանիշների փոխկապակցվածութիւնը հիմք է ծառայում մակրոտնտեսական գործընթացի մոդելավորման համար: Համակարգի տվյալները և դրա վրա հիմնված մոդելները հնարավորութիւն են տալիս հիմնավորելու կամ մերժելու այս կամ այն կառավարչական որոշումների ընդունումը կամ ֆինանսական լուծումները տնտեսութեան ցանկացած մակարդակի համար:

Ազգային հաշիվների համակարգը բաղկացած է մակրոտնտեսական հաշիվների, հաշվեկշիռների և աղյուսակների փոխկապակցված, հետևողական և ինտեգրացված համակարգից, որը հիմնված է միջազգայնորեն ընդունված հիմնադրույթների, սահմանումների, դասակարգումների և հաշվապահական կանոնների ամբողջութեան վրա: Այն իրենից ներկայացնում է բազմակողմանի հաշվարկային համակարգ, որտեղ տնտեսական տվյալները համապատասխան

ձևով կազմված և ներկայացված են տնտեսական վերլուծությունների, որոշումների կայացման և քաղաքականություն մշակման համար հարմար տեսքով: Հաշիվներն ինքնին ընդգրկում են տնտեսության գործունեությունների վերաբերյալ՝ որոշակի սկզբունքների և չափանիշների համապատասխան հավաքագրված մեծ քանակությամբ մանրամասն տեղեկատվություն: Դրանք ապահովում են ողջ տնտեսության մեջ, ինչպես նաև տարբեր տնտեսական գործակալների կամ նրանց առանձին խմբերի միջև տեղի ունեցող բարդ տնտեսական գործարքների բազմակողմանի և մանրամասն գրառումը: Գործնականում հաշիվները կազմվում են հաջորդական ժամանակահատվածների համար՝ դրանով իսկ ապահովելով տեղեկատվության անընդհատ հոսքը, որն անհրաժեշտ է ժամանակի ընթացքում տնտեսական իրավիճակի մոնիտորինգի, վերլուծության և գնահատման համար:

Աշխարհի գրեթե բոլոր երկրները կազմում են տարեկան ազգային հաշիվներ, իսկ շատերը նաև եռամսյակային հաշիվներ: Տարեկան ազգային հաշիվներ կազմվում են նաև Հայաստանում, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից սկսվել են նաև եռամսյակային հաշիվների կազմման աշխատանքները: Չնայած եռամսյակային գնահատականները սովորաբար նվազ մանրամասներ են պարունակում, դրանք կարևոր դեր ունեն տնտեսական քաղաքականություն մշակելիս: Վերջիններս հնարավորություն են տալիս իրականացելու տնտեսության վարքագծի առավել մանրամասն վերլուծություն գործարար պարբերաշրջանների շուրջը, քանի որ տարեկան ցուցանիշները «թաքցնում են» գործարար այն պարբերաշրջանները, որոնք մասնավորապես պայմանավորված են սեզոնային գործոններով:

ԱՀՀ-ն իր մեջ ընդգրկում է տեղեկատվություն ոչ միայն տնտեսական գործունեություն, այլ նաև կոնկրետ ժամանակի դրությամբ տնտեսության արտադրական պոտենցիալի և բնակչության բարեկեցություն առկա մակարդակի վերաբերյալ: Եվ վերջինը, ԱՀՀ-ն ընդգրկում է արտաքին հատվածը, որն արտացոլում է տնտեսության և արտերկրի միջև կապերը:

Այս համակարգի հիմնական գործառույթը անցյալում իրականացված տնտեսական գործունեության առավել համապարփակ ու ամբողջական ներկայացումն է, որպեսզի՝

1. պարզորոշ երևա պետության տնտեսական գործունեությունը (տնտեսական քաղաքանության գործառույթ),
2. հնարավորություն ընձեռվի ապագայի կանխատեսումների համար (տնտեսական կանխատեսման գործառույթ):

Ազգային հաշիվների համակարգը հնարավորություն է տալիս լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- հաշվարկել ամփոփ վիճակագրական ցուցանիշներ, որոնք բնութագրում են տնտեսական գործունեության արդյունքները,
- հետազոտություններ կատարել մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների վերաբերյալ,
- վերլուծել երկրի մակրոտնտեսական համամասնությունները:

Ելնելով վերը շարադրյալից ակնհայտ է դառնում, որ Ազգային հաշիվների համակարգը կարող է ունենալ օգտվողների լայն շրջանակ: Պոտենցիալ օգտվողների շարքում կարող են լինել ոչ միայն պետական ամենատարբեր գերատեսչությունների աշխատակիցները, այլև մասնավոր տնտեսավարող սուբյեկտները, հետազոտողները, լրագրողները, տարբեր լոբբինգային խմբերը և, ընդհանրապես, հասարակությունը:

3 Ազգային հաշիվների հիմունքները

3.1. Ազգային և ներքին տնտեսություն

Ազգային հաշիվների համակարգը, փաստորեն, արտացոլում է տնտեսական գործունեությունը, արդյունքները, երևույթները և այլն: Սակայն, ո՞ր տնտեսության: Ընդհանրապես ի՞նչ նկատի ունենք, երբ ասում ենք «Հայաստանի Հանրապետության տնտեսությունում...»: Եթե որևէ արտասահմանյան ֆիրմա արտադրություն է կազմակերպել Հայաստանում, դա Հայաստանի տնտեսության մասնի՞կն է, թե ոչ: Այս և նմանատիպ այլ հարցերին պատասխանելու նպատակով ազգային հաշիվների համակարգում գոյություն ունի հստակ տարանջատում ներքին և ազգային տնտեսություն հասկացությունների միջև: Դրանք ունեն տնտեսագիտական տարբեր նշանակություն և, կախված վերլուծության նպատակից, տարբեր կարևորության աստիճան: Սա հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել նաև հետևյալ հասկացությունները՝ տնտեսական տարածք, տնտեսական շահերի կենտրոն, ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ:

Տնտեսական տարածք ասելով, որպես կանոն, հասկացվում է տվյալ պետության իրավասության տակ գտնվող աշխարհագրական տարածքը, որի ներսում մարդիկ, ապրանքները և դրամը կարող են ազատ տեղաշարժվել: Այս հասկացության մեջ տեղավորվում են նաև օտարերկրյա պետություններում գտնվող այն տարածքները, որոնք սեփականության կամ վարձակալման իրավունքով գտնվում են տվյալ երկրի կառավարության կամ ձեռնարկությունների իրավասության տակ՝ դիվանագիտական, գիտական, ռազմական նպատակներով օգտագործման համար: «Տնտեսական տարածք» հասկացությունն ունի էական տնտեսագիտական նշանակություն: Այն, ըստ էության, պատասխանում է կարևոր այն հարցին, թե տվյալ պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը կոնկրետ որ աշխարհագրական տարածքի վրա է ունենում իր ազդեցությունը, թե ընդունվող նորմատիվ ակտերը, սահմանվող հարկային դրույքաչափերը և այլն որ տարածքի վրա են գործելու:

Տնտեսավարող միավորի համար տնտեսական շահերի կենտրոն է համարվում տվյալ տնտեսական տարածքը, եթե տնտեսավարող միավորին է պատկանում տնտեսական տարածքում գտնվող որևէ կառույց կամ հողատարածք և որտեղ նա կատարում է կամ նպատակ ունի կատարելու նշանակալից

տնտեսական գործունեությունն անորոշ երկար կամ որոշակի, բայց զգալի երկար, ժամանակահատվածում: Այս իմաստով էլ տնտեսական միավորները դասակարգվում են երկու խմբի՝ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների:

Ռեզիդենտը տնտեսավարող միավոր է, որի տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է տվյալ տնտեսական տարածքում: Ընդգծենք, որ «ռեզիդենտ» հասկացությունը չի համընկնում քաղաքացի կամ ազգություն հասկացությունների հետ: Գործնականում, տվյալ երկրի ռեզիդենտ են համարվում այն անձինք, որոնք բնակություն են հաստատել տվյալ տարածքում, բացառությամբ այն սուբյեկտների, որոնք ժամանել են մինչև մեկ տարի ժամանակով, ինչպես նաև այլ երկրների դեսպանության աշխատակիցների, ուսանողների, զինծառայողների և բուժման նպատակով ժամանածների:

Այսպիսով, արդեն կարելի է տարանջատել ներքին տնտեսություն և ազգային տնտեսություն հասկացությունները՝ տալով դրանց կոնկրետ սահմանումները:

Ներքին տնտեսությունն ընդգրկում է տվյալ երկրի տնտեսական տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների տնտեսական գործունեությունը:

Ազգային տնտեսությունն ընդգրկում է բոլոր ռեզիդենտների տնտեսական գործունեությունը, որոնք տեղաբաշխված են, ինչպես տվյալ երկրի տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հաջորդ կարևոր հարցը քննարկվող խնդրի շրջանակում տնտեսական գործունեությունների սահմանումն ու դասակարգումն է: Տնտեսական գործունեությունները բազմապիսի են, և ազգային հաշիվների կառուցման հիմքում ընկած են տնտեսագիտության տեսության այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ արտադրությունը, սպառումը, կուտակումը: Ազգային հաշիվների համակարգի կառուցման համար անհրաժեշտ պայման է նաև այնպիսի հասկացությունների հստակ տարանջատումը, ինչպիսիք են՝ սպառումն ու համախառն կուտակումները, վերջնական ու միջանկյալ սպառումը և այլն: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ վերոհիշյալով չի ավարտվում ազգային հաշիվների համակարգի հասկացությունների փոխկապակցված շարքը, ինչպես նաև սկզբունքների այն համալիրը, որը հնարավորություն է ընձեռում լուծել բարդ մեթոդաբանական խնդիրներ:

Դիտարկենք ազգային հաշիվների համակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները և մեթոդաբանական սկզբունքներն ու կանոնները:

Արտադրական գործունեությունն ազգային հաշիւների համակարգում բնութագրվում է որպէս գործունեություն, որտեղ օգտագործելով արտադրության գործոնները՝ աշխատանք, կապիտալ (ապրանքների և ծառայությունների տեսքով) ստանում են նոր ապրանքներ ու նոր ծառայություններ: Ապրանքներն ու ծառայություններն, իրենց հերթին, լինում են շուկայական և ոչ շուկայական: Վերջիններս տրվում են անվճար կամ չնչին գնով, որը չունի տնտեսական ազդեցություն և էապէս չի ազդում ընդհանուր պահանջարկի վրա:

Ապրանքն աշխատանքի արդյունք է, որն ունի բնաիրային տեսք, իսկ ծառայությունը չունի բնաիրային տեսք, սակայն բավարարում է հասարակական և անձնական պահանջմունքներ:

$$\text{Թողարկումը} = \text{ապրանք} + \text{ծառայություններ}$$

Սպառումը սերտ կապ ունի պահանջմունքների հետ, որոնց էլ պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

- Փիզիոլոգիական պահանջմունքներ՝ կապված մարդու փիզիոլոգիական պահանջմունքների հետ (սնունդ, ջուր, և այլն),
- Հոգևոր պահանջմունքներ՝ կապված մարդու՝ որպէս մտածող էակի բնույթի հետ, որն ընդունակ է ինքնակատարելագործման և ինքնազարգացման (մշակույթ, գիտություն, արվեստ և այլն):

3.2. Հիմնական տնտեսական գործակալները և տնտեսության հատվածները

Ազգային հաշիւների համակարգը, ինչպէս ցանկացած համակարգ, ունի որոշակի կառուցվածք՝ իր բաղադրիչներով ու համապատասխան կապող օղակներով: Այն խմբավորում է տնտեսության կառուցվածքն ըստ տարբեր բնութագրիչների: Ընդ որում, վերջիններն ընտրված են այնպէս, որ խմբավորումները ստանան որոշակի տնտեսագիտական իմաստ, հետագոտողներին ու վերլուծողներին հնարավորություն ընձեռեն առավելագույնս օգտվել դրանցից, արտացոլեն տնտեսության տարբեր հատվածների միջև գոյություն ունեցող կապերը և բացահայտեն հոսքերը:

Տնտեսավարող միավորներն ազգային հաշիվների համակարգում խմբավորվում են ըստ

- տնտեսական գործառնությունների,
- ինստիտուցիոնալ հատվածների,
- ճյուղերի:

Տնտեսավարող միավորների խմբավորումը որոշակի ճյուղում կատարվում է՝ ելնելով դրանց հիմնական արտադրանքի միատեսակությունից: Քանի որ ձեռնարկությունները արտադրում են բազմաթիվ ապրանքատեսակներ, ապա դրանց վերոհիշյալ խմբավորումը կատարվում է տվյալ ձեռնարկության համախառն թողարկման կամ ավելացված արժեքի մեջ տվյալ ապրանքատեսակի ունեցած տեսակարար կշռի գերակայությունը:

Ինստիտուցիոնալ հատվածի խմբավորումը կատարվում է եկամուտների ու ծախսերի, ֆինանսական ակտիվների և պասիվների հոսքերի հետազոտության նպատակով: Ինստիտուցիոնալ հատվածի միավորը իրավաբանական անձ հանդիսացող այն տնտեսավարող սուբյեկտն է, որը տանում է ամբողջական հաշվապահական հաշվառում, կարող է ինքնուրույն որոշումներ ընդունել և տնօրինել իր տրամադրության տակ եղած նյութական ու ֆինանսական ռեսուրսները, ստանձնում է պարտավորություններ, կատարում է տնտեսական գործունեություն: Բացառություն են կազմում տնային տնտեսությունները, որոնք հաշվապահական հաշվառում չեն իրականացնում, սակայն տնօրինում են սեփական ռեսուրսները: Ինստիտուցիոնալ միավորները խմբավորվում են հետևյալ վեց հատվածներում՝

- ոչ ֆինանսական հատված,
- ֆինանսական հատված,
- պետական հատված,
- տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային հաստատություններ,
- տնային տնտեսություններ,
- արտաքին հատված:

Ոչ ֆինանսական հատվածն ընդգրկում է այն ինստիտուցիոնալ միավորները, որոնց հիմնական գործառնությունն ապրանքների և ոչ ֆինանսական ծառայությունների արտադրությունն է այնպիսի գներով, որ ապահովվի

չահույթ: Սակայն որոշակի դեպքերում հնարավոր է, որ ծախսերը գերազանցեն եկամուտներին, և վնասները ծածկվեն պետական սուբսիդիաներով: Այդ միավորների եկամուտները հիմնականում ձևավորվում են արտադրանքի կամ ծառայությունների իրացումից:

Ֆինանսական հատվածում, անկախ սեփականություն ձևից, ընդգրկված են այն ինստիտուցիոնալ միավորները, որոնք զբաղված են գերազանցապես ֆինանսական և ապահովագրական գործառնություններով՝ հետապնդելով առևտրային նպատակներ: Ֆինանսական գործառնություններ ասելով հիմնականում հասկանում ենք ֆինանսական միջնորդության և օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցելու հետ կապված միավորների գործունեությունը: Այս հատվածի ռեսուրսները գոյանում են գերազանցապես վերցված պարտավորություններից և ստացված տոկոսային եկամուտներից: Ապահովագրական ընկերությունների գործունեության ոլորտը, որպես կանոն, ֆինանսական ռիսկերից կամ անկանխատեսելի իրավիճակներից տնտեսավարող միավորների պաշտպանությունն է: Նրանց եկամուտները հիմնականում գոյանում են ապահովագրական պայմանագրերից բխող վճարներից:

Պետական հատվածն են կազմում այն ինստիտուցիոնալ միավորները, որոնք զբաղված են հասարակական պահանջմունքները բավարարող ոչ շուկայական (հասարակական) ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաև ազգային եկամտի վերաբաշխմամբ: Այս հատվածին են պատկանում պետական կազմակերպությունները, որոնք հիմնականում ֆինանսավորվում են պետբյուջեից: Այս հատվածում են նաև պետական արտաբյուջետային հիմնադրամները (օրինակ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը), որոնց ռեսուրսները գոյանում են այս հատվածին չպատկանող ձեռնարկությունների պարտադիր մուծումներից, ինչպես նաև պետական սեփականություն ունեցող գործումից ստացվող եկամուտները:

Տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային հաստատությունները միավորում են այն ինստիտուցիոնալ միավորներին, որոնք զբաղվում են տնային տնտեսություններին ոչ շուկայական ծառայություններ մատուցելով: Այստեղ ընդգրկված են այն կազմակերպությունները, որոնք չեն ֆինանսավորվում պետության կողմից և չեն գտնվում պետության ուղղակի վերահսկողության տակ: Նրանց ռեսուրսները գոյանում են անդամավճարներից, նվիրատվություններից և սեփականությունից ստացվող եկամուտներից:

Տնային տնտեսություն հատվածին են պատկանում տվյալ երկրի ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք կամ անձանց խմբեր, որոնք բնակվում են

միասին և ունեն ընդհանուր բյուջե: Բոլոր տնային տնտեսությունները սպառող են, և, միևնույն ժամանակ, զբաղվում են նաև այնպիսի ձեռնարկատիրական գործունեություններով, որը թե՛ իրավական և թե՛ տնտեսական տեսանկյունից անհնար է տարանջատել տնային տնտեսություններից: Տնային տնտեսությունների արտադրանքն իրացվում է ինչպես տնտեսության ներսում, այնպես էլ նրանից դուրս: Տնային տնտեսությունների ռեսուրսները գոյանում են վարձու աշխատանքից, ձեռնարկատիրական գործունեությունից, ինչպես նաև սեփականությունից ստացվող եկամուտներից ու տրանսֆերտային մուտքերից:

Արտաքին Հատվածն ընդգրկում է արտասահմանյան երկրների ռեզիդենտների գործառնություններն այն չափով, որով դրանք առնչվում են սովյալ երկրի ռեզիդենտների հետ: Վերը թվարկված Հատվածների փոխադարձ կապն այլ երկրների հետ արտացոլելու նպատակով ձևավորվում է պայմանական Հատված՝ «արտերկիր», որը միավորում է բոլոր ինստիտուցիոնալ միավոր ոչ ռեզիդենտներին այն մասում, որտեղ դրանք փոխհամագործակցում են ազգային տնտեսության ռեզիդենտների հետ:

Ազգային հաշիվների համակարգում հաջորդ կարևորագույն դասակարգումը խմբավորումն է ըստ տնտեսական գործառնության, որի տակ հասկացվում է փոխհամաձայնության (պայմանագրային) հիմունքներով կատարվող տնտեսական հոսք երկու տնտեսավարող միավորների միջև: Տնտեսական գործառնությունները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով հետևյալ հատկանիշները՝


ըստ ակտիվների և պարտավորումների հոսքերի ուղղության.

- փոխադարձ, երբ ապրանքների, ծառայությունների կամ դրամական հոսքերը առաջացնում են համարժեք հակադարձ հոսքեր,
- միակողմանի (օրինակ տրանսֆերտներ), երբ վերոհիշյալ հոսքերն ունեն մեկ ուղղություն,

ըստ տնտեսական նշանակության.

- կապիտալ, երբ փոփոխության է ենթարկվում ազգային հարստության կառուցվածքը,
- ընթացիկ, երբ տեղի է ունենում անմիջական սպառում:

Ազգային հաշիվների համակարգում տնտեսական գործառնությունը բաժանվում են երեք հիմնական խմբի՝ գործառնությունների ապրանքների և ծառայությունների հետ, գործառնությունների եկամուտների բաշխման հետ և ֆինանսական գործառնություններ:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1.. Տնտեսական գործառնություններն Ազգային հաշիվների համակարգում

Երկրի տնտեսական գործունեության վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու նպատակով ազգային հաշիվների համակարգում օգտագործվում է փոխկապակցված ցուցանիշների համալիր, որոնք բնութագրում են տարբեր մակարդակի սուբյեկտների գործունեությունը: Ակնհայտ է, որ բոլոր մակարդակների ցուցանիշները պետք է լինեն համադրելի և հաշվարկվեն միևնույն տեսական և մեթոդական հիմունքներով, որպեսզի հնարավոր լինի դրանց ամփոփումն ու առանձին օղակների համեմատական զնահատումը: Ազգային հաշիվների համակարգը տարբերակում է երեք մակարդակ.

- միկրոմակարդակ՝ ըստ առանձին ձեռնարկությունների,
- մեզոմակարդակ՝ ըստ ճյուղերի, հատվածների,
- մակրոմակարդակ՝ ըստ ամբողջ տնտեսության մակարդակի:

Որպես կանոն, մակրոտնտեսական ցուցանիշների զգալի մասը համապատասխանում է ավելի ցածր մակարդակում գտնվող տնտեսավարող սուբյեկտների հաշվարկման տրամաբանությունը:

3.3. ՀՆԱ-ն որպես ԱՅՀ-ի առանցքային հասկացություն

Տնտեսական գործունեություն իրականացնելու համար խիստ կարևորվում է երկրի տնտեսությունը բնութագրող համապարփակ ցուցանիշի տեղեկատվության տիրապետումը: Ակնհայտ է, որ տնտեսավարման ժամանակակից պայմաններում սուբյեկտները, շուկայում մրցակցությունը դիմակայելու, նոր շուկաներ մտնելու ու հնարավոր զարգացումները կանխատեսելու համար, պետք է կարողանան հասկանալ տնտեսության զարգացման արդի միտումներն ու արձանագրվող զարգացումները: Այդ պատճառով նախ անհրաժեշտ է տեղեկանալ թե որոշակի ժամանակահատվածի ընթացքում ինչ և ինչքան է արտադրվում տվյալ տնտեսության մեջ:

Տնտեսության հիմնական գործառույթն առկա սահմանափակ ռեսուրսների պայմաններում պահանջմունքների առավելագույն բավարարումն է: Պահանջ-մունքները բավարարվում են որոշակի ապրանքների և ծառայությունների սպառման միջոցով և, եթե ենթադրենք, որ արտադրվում են պահանջմունքներին համապատասխան ապրանքներ և ծառայություններ, ապա կարելի է պնդել, որ որքան շատ ապրանքներ ու ծառայություններ են արտադրվում, տնտեսությունն այնքան ավելի արդյունավետ է աշխատում: Իհարկե, չպետք է մոռանալ, որ ռեսուրսները տվյալ ժամանակահատվածի համար սահմանափակ են:

Տնտեսության մեջ արտադրվում են տարբեր տիպի ապրանքներ և ծառայություններ, որոնք ծավալային առումով հնարավոր չէ գումարել միմյանց: Ուստի արժեքային արտահայտման անհրաժեշտություն է առաջանում: Այսինքն, եթե արտադրված բոլոր ապրանքները և ծառայությունները բազմապատկենք իրենց գներով և գումարենք, կստացվի մի ագրեգացված մեծություն, որը կբնութագրի տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների մակարդակը:

Երկրի տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշը համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ): Այն օգտագործվում է միջազգային համադրումներ կատարելու, աշխատանքի արտադրողականության և բնակչության բարեկե-

ցուլթյան մակարդակը գնահատելու, տնտեսական արդյունավետութեան բազմապիսի ցուցանիշներ հաշվարկելու նպատակով:

ՀՆԱ-ն որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) երկրի տնտեսական տարածքում արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայութունների գումարային արժեքն է արտահայտված շուկայական գներով:

Պարզաբանենք որոշ հասկացութուններ, որոնց միջոցով արդեն հնարավոր կլինի բացահայտել ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները:

Համախառն թողարկումը որոշակի ժամանակահատվածում ուղղակի տնտեսական կողմից արտադրված նյութական ապրանքների և մատուցված ծառայութունների գումարային արժեքն է՝ ներառյալ ինչպես շուկայական, այնպես էլ ոչ շուկայական ապրանքներն ու ծառայութունները: Այս ցուցանիշը հիմք է հանդիսանում մյուս ցուցանիշների հաշվարկման համար, այդ իսկ պատճառով նրա հաշվարկման ճշտութեան աստիճանից է կախված մնացած բոլոր ցուցանիշների ճշտութունը: Տարբերակվում են երկու տիպի թողարկում՝ շուկայական և ոչ շուկայական: Շուկայական ապրանքների և ծառայութունների թողարկումը ընթացիկ ժամանակաշրջանում ընդգրկում է՝

- շուկայական գներով իրացումը,
- ապրանքների և ծառայութունների բարտերային փոխանակումը,
- աշխատանքի վարձատրութեան փոխարեն բնաիրային տեսքով տրված ապրանքները,
- պահուստավորված նյութական չրջանառու միջոցները:

Ոչ շուկայական թողարկումն ընդգրկում է այն ապրանքներն ու ծառայութունները, որոնք՝

- օգտագործվել են սեփական կարիքների համար,
- փոխանցվել են այլ տնտեսավարող միավորին՝ անվճար կամ այնպիսի ցածր գներով, որը չի ազդում ընդհանուր պահանջարկի վրա:

Համախառն թողարկումն ինքնին տնտեսութեան գործունեութունը բնութագրող ցուցանիշ չէ, քանի որ դրա մեծութեան վրա մեծ ազդեցութուն ունեն արտադրութեան գործընթացում օգտագործվող ապրանքների և ծառայութունների գները: Ապրանքների և ծառայութունների արտադրութեան

ժամանակ օգտագործվող այլ ապրանքներն ու ծառայութիւնները, բացառութեամբ հիմնական կապիտալի սպառման, համարվում են միջանկյալ սպառում: Միջանկյալ սպառումը կազմված է ապրանքների ու ծառայութիւնների արժեքից, որոնք տվյալ ժամանակահատվածում արտադրութեան գործընթացում ամբողջութեամբ սպառվում կամ վերափոխվում են¹:

Ֆիզիկական և բարոյական մաշվածքի արդյունքում հիմնական կապիտալի սպառումը հիմնական կապիտալի արժեքի նվազումն է:

Չուտ մեծությունը = համախառն մեծություն - հիմնական կապիտալի սպառում

Ապրանքների թողարկման զնահատականը տրվում է այն ժամանակաշրջանի շուկայական գներով, որի ընթացքում թողարկվել է արտադրանքը, իսկ ծառայութիւններին՝ դրանց մատուցման ժամանակի շուկայական գներով:

Համախառն թողարկման և միջանկյալ սպառման տարբերութիւնն իրենից ներկայացնում է համախառն ավելացված արժեքը: Համախառն ավելացված արժեքի և հիմնական կապիտալի սպառման տարբերութիւնից ստացվում է զուտ ավելացված արժեքը, որը տնօրինում են արտադրողները և որից, հանելով վարձու աշխատողների աշխատանքի վարձատրութիւնը և արտադրութեան ու ներմուծման զուտ հարկերը, կստանանք ինստիտուցիոնալ միավորների, ճյուղի, հատվածի համախառն շահույթը: Համախառն շահույթի տարատեսակ է տնային տնտեսութիւններին պատկանող չկորպորացված² ձեռնարկութիւնների եկամուտները, քանի որ այն պարունակում է աշխատավարձի տարր, և որը հնարավոր չէ տարանջատել ձեռնարկատիրոջ կամ սեփականատիրոջ եկամուտներից: Այդպիսի եկամուտները կոչվում են խառը եկամուտներ:

ՀՆԱ-ն կարելի է հաշվարկել վերարտադրութեան ցանկացած փուլում համապատասխան մեթոդով՝

- արտադրական մեթոդն օգտագործվում է ապրանքների և ծառայութիւնների արտադրութեան փուլում,
- եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկը կատարվում է բաշխման փուլում,

¹. Միջանկյալ սպառում է համարվում նաև գրոյական արդյունք տվող ֆինանսական միջոցների կողմից անուղղակիորեն չափվող ծառայությունների մատուցումը, որը նույնն է, ինչ նրանց կողմից ստացված զուտ տոկոսային եկամուտները:
². Սեփականատերն ու կառավարիչը նույն անձն է:

- եկամուտների օգտագործման մեթոդը (ծախսային մեթոդ) կիրառվում է եկամուտների ծախսման փուլում:

Արտադրական մեթոդով ՀՆԱ-ն հաշվարկվում է, որպես ճյուղերի և տնտեսության հատվածներներում ստեղծված համախառն ավելացված արժեքների հանրագումար: ՀՆԱ-ի հաշվարկման հիմքում ընկած է եկամուտների ու ծախսերի շրջանառության մոդելը, որը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

Սպառողների ծախսեր = Արտադրության եկամուտներ

Ինչպես արդեն նշվեց, ՀՆԱ-ն վերջնական ապրանքների ու ծառայությունների արժեքն է՝ արտահայտված շուկայական գներով: Սակայն համախառն թողարկումը սկզբնական շրջանում արտացոլվում է արտադրողների գներով, հետո ձևավորվում է հիմնական գինը, որից հետո ավելացվում են բոլոր զուտ անուղղակի հարկերը, որոնց հիմքի վրա էլ ձևավորվում են վերջնական շուկայական գները:

Արտադրողի գինը միավոր ապրանքի կամ ծառայության դիմաց արտադրողի կողմից ստացվող այն գինն է, որը ներառում է ապրանքների վրա դրված հարկերը, չի ներառում ավելացված արժեքի և ներմուծման հարկերը, ինչպես նաև սուբսիդիաները (բացի ներմուծման սուբսիդիաներից):

Հիմնական գինը միավոր արտադրանքի դիմաց արտադրողի ստացած այն գինն է, որը չի ներառում ապրանքային հարկերը, սակայն ընդգրկում է ապրանքային սուբսիդիաները: Այն օգտագործվում է հարկերի և սուբսիդիաների տարբեր դրույքաչափերի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:


ԳՕԱՊՍԿԵՐ 2. Հարկեր և սուբսիդիաներ, որոնք ընդգրկված են (+) կամ ընդգրկված չեն (-)

	Ավելացված արժեք արտադրողի գներով	Ավելացված արժեք հիմնական գներով	ՀՆԱ-ն շուկայական գներով
Ավելացված արժեքի հարկ	-	-	+
Ներմուծման հարկ	-	-	+
Ներմուծման սուբսիդիա	+	+	-
Ապրանքների այլ հարկեր	+	-	+
Ապրանքների այլ սուբսիդիաներ	-	+	-
Արտադրության այլ հարկեր	+	+	+

Արտադրության և ներմուծման հարկերը պարտադիր վճարումներ են, որոնք գանձվում են պետության կողմից ռեզիդենտ տնտեսավարող միավորից՝ կապված արտադրական գործունեների (աշխատանքային, նյութական, բնական ռեսուրսներ) օգտագործման հետ: Այս հարկերը վճարվում են անկախ գոյացած շահույթից:

Արտադրության և ներմուծման հարկերն իրենց հերթին լինում են՝

- ապրանքային հարկեր,
- արտադրության այլ հարկեր:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3 Ուղղակի և անուղղակի հարկերի տարանջատումը

Ապրանքային հարկերը գանձվում են արտադրված ապրանքների և ծառայությունների քանակին կամ արժեքին համապատասխան:

Համախառն ներքին արդյունքի և վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության, արտադրության և ներմուծման զուտ հարկերի վճարման հետ կապված արտադրողի ծախսերի տարբերությունը համարվում է տնտեսության համախառն շահույթ:

Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն որոշվում է որպես սկզբնական եկամուտների գումար, որը ռեզիդենտ-արտադրողի կողմից

բաշխվել է ապրանքների և ծառայությունների արտադրության անմիջական մասնակիցների միջև: Այսինքն դրանք ռեզիդենտ արտադրողի ծախսերն են՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը, արտադրության ու ներմուծման զուտ հարկերը, ինչպես նաև համախառն շահույթն ու խառը եկամուտը: Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկած ՀՆԱ-ն ունի հետևյալ տեսքը՝

$$\text{Համախառն ներքին արդյունքը} = \text{աշխատանքի վարձատրություն} + \text{եկամուտներ սեփականությունից} + \text{ավելացված արժեքի հարկ} + \text{ներմուծման զուտ հարկեր} + \text{հիմնական կապիտալի սպառում}$$

Եկամուտների ձևավորման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս վերլուծել եկամուտների կազմն ու կառուցվածքը: Տնտեսական հետազոտություններ կատարելիս այս մեթոդն ունի կարևոր նշանակություն եկամուտների վերլուծության, ճյուղերի և հատվածների հարկային բեռի համեմատական գնահատականը տալու, տնտեսավարող միավորների ձեռնարկատիրական գործունեությունից և սեփականությունից ստացված եկամուտների համեմատությունից ելնելով շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանը պարզաբանելու և այլ նպատակներով:

Եկամուտների օգտագործման մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն վերջնական սպառման, համախառն կուտակման և ապրանքների ու ծառայությունների զուտ արտահանման գումարն է՝ ճշտված վիճակագրական շեղմամբ.

$$\text{Համախառն ներքին արդյունք} = \text{ապրանքների և ծառայությունների վերջնական սպառում} + \text{համախառը կուտակումներ} + \text{արտահանում} - \text{ներմուծում}$$

Օգտագործման փուլում հաշվարկվող ՀՆԱ-ն ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների գումարն է՝ շուկայական գներով: Այս մեթոդով հաշվարկված ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս վերլուծել վերջնական սպառման և ազգային հարստության մեծացման նպատակով օգտագործված ՀՆԱ-ի համամասնությունները, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:

Չնայած որ տեսականորեն վերը նշված մեթոդներով հաշվարկված ՀՆԱ-ի քանակական մեծությունները պետք է լինեն նույնը, գործնականում դրանք

անխուսափելիորեն տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է տարբեր վիճակագրական աղբյուրներից տվյալների հավաքագրման անհրաժեշտությունը խնդիրներով: Զարգացած վիճակագրական ծառայություններ ունեցող երկրներում տարբեր մեթոդներով հաշվարկված ՀՆԱ-ի մեծությունների տարբերությունը, որպես կանոն, չի գերազանցում 1-2 տոկոսը:

Ինչպես արդեն նշել ենք, համախառն ներքին արդյունքը տվյալ երկրի ներքին տնտեսական գործունեության հայելին է, որը չի արտացոլում երկրի ռեզիդենտների տնտեսական գործունեությունն այլ երկրներում:

Համախառն ազգային արդյունքը շուկայական գներով հաշվարկված սկզբնական եկամուտների գումարն է, որը ստացել են տվյալ երկրի ռեզիդենտները՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցելով իրենց երկրի և արտերկրների ՀՆԱ-ի թողարկմամբ:

Այսպիսով՝ համախառն ազգային արդյունքի և համախառն ներքին արդյունքի տարբերությունը տվյալ երկրի ռեզիդենտների սկզբնական եկամուտների զուտ գումարն է, որը ստացվել է այլ երկրներից: Համախառն ազգային արդյունքի և համախառն ներքին արդյունքի փոխկապվածությունը, ինչպես նաև այլ տնտեսական առանցքային ցուցանիշների կապերը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$\text{Համախառն ներքին արդյունք} = \text{համախառն թողարկում} - \text{միջա}$$

$$\text{ՀՆԱ} = \text{սպառում} + \text{պետական գնումներ} + \text{ներդրումներ} + \text{արտահանում} - \text{ներմուծում}$$

$$\text{համախառն ազգային արդյունք (ՀԱԱ)} = \text{համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)} + \text{ռեզիդենտների ստացված գործոնային եկամուտներ}^3 \text{ (այլ երկրներում)} - \text{ոչ ռեզիդենտների ստացված գործոնային եկամուտներ (տվյալ երկրում)}$$

$$\text{համախառն ազգային տնօրինվող եկամուտ (ՀԱՏԵ)} = \text{ՀԱԱ} + \text{զուտ տրանսֆերտներ արտերկրից}$$

³ Արտադրության գործոնների (աշխատուժ և կապիտալ) օգտագործումից ստացված եկամուտները:

Ջուտ ազգային արդյունք (ՋԱԱ) = ՀԱԱ - ամորտիզացիա

4 ԱՀՀ-ի կառուցման ընդհանուր դրույթները

ԱՀՀ-ի կազմման գործընթացում կիրառվում է հաշվեկշռային մեթոդ, որը հնարավորություն է տալիս բազմակողմանի հետազոտություններ կատարել փոխկապակցված տնտեսական գործունեությունների ու դրանց արդյունքների վերաբերյալ, տալ հիմնավորված առաջարկություններ տնտեսական քաղաքականության վերաբերյալ և կատարել կանխատեսումներ: Նրա հիմքում ընկած է միասնական դրույթներ տնտեսության բոլոր մակարդակների համար, ինչպես նաև եկամուտների ստեղծման, բաշխման, վերաբաշխման և օգտագործման տրամաբանությունը, որոշակի կառուցվածք ունեցող տնտեսական համակարգի և գործունեություն առանձնահատկությունները: Ազգային հաշիվների կառուցման հիմնական սկզբունքը հաշվապահական հաշվառման մեջ կիրառվող մոտեցումներն են: ԱՀՀ-ում կրկնակի գրանցման օգտագործումը հնարավորություն է տալիս տնտեսական ցուցանիշներին տալ որակական նոր կարևոր հատկություն՝ քանակապես գնահատել վիճակագրական մեծությունները ոչ թե իրենց քարացած վիճակում, այլ տնտեսության մեջ տեղի ունեցող գործընթացների փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ:

ԱՀՀ-ի կառուցման հաջորդականությունը կանխորոշվում է վերարտադրության փուլերով: Վերարտադրության ցանկացած փուլում ամբողջ տնտեսության և նրա առանձին հատվածների համար կազմվում է ֆունկցիոնալ հաշիվներ կամ հաշիվների խումբ, որն արտացոլում է տվյալ հատվածի մասնակցությունը հետևյալ տնտեսական գործունեություններում՝

- արտադրության հաշիվ,
- եկամուտների ձևավորման հաշիվ,
- սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ,
- եկամուտների երկրորդային բաշխման հաշիվ,
- եկամուտների օգտագործման հաշիվ,
- կապիտալի հետ գործառնությունների հաշիվ,
- ֆինանսական հաշիվ:

Հաշիվն իրենից ներկայացնում է աղյուսակ, որը կազմված է երկու սյունակից՝ (1) ռեսուրսներ, (2) օգտագործում: Բոլոր հաշիվներում

ուեսուրաները և դրանց օգտագործումը հավասարակշռության մեջ են, ինչը գործնականում հնարավոր է դառնում համապատասխան հաշվեկշռող հողվածի օգտագործման միջոցով:

Հաշվեկշռող հողվածը լինում է ինքնուրույն, սակայն, միևնույն ժամանակ, հաշիվների համար նա հանդիսանում է կապող օղակ՝ նպաստելով միասնական համակարգի գոյացմանը: ԱՀՀ վերարտադրության ցիկլի բոլոր աստիճաններում հաջորդաբար արտացոլում է ֆինանսական հոսքերի և ապրանքների ու ծառայությունների գների շարժը: Վերջնական արդյունքում ստացվում է հաշվեկշռող աղյուսակ, որի մեջ արտացոլվում է ազգային հարստության սկզբնական և վերջնական արժեքը (տես հավելված 6):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. Ազգային հաշիվների համակարգի մեջ ներառվող հիմնական հաշիվների խմբավորումն ըստ միավորների խմբերի

Ֆաշիվներ	Ապրանքներ և ծառայություններ	Արտադրանքներ	Եկամտադրույթի վնասներ	Եկամտադրույթի բաշխում	Եկամտադրույթի օգտագործում	Կապիտալ ծախսեր	Ֆինանսական	Արտաքին տնտեսություն (ընթացիկ գործառնություններ)
Միավորների խմբեր								
Ներքին տնտեսություն, ընդամենը	+	+	+	+	+	+	+	-
Հատվածներ								
Ոչ ֆինանսական ձեռնարկություններ	-	+	+	+	+	+	+	-
Ֆինանսական հաստատություններ	-	+	+	+	+	+	+	-
Պետական հաստատություններ	-	+	+	+	+	+	+	-
Տնային տնտեսություններից սպասարկող հասարակական կազմակերպություններ	-	+	+	+	+	+	+	-
Տնային տնտեսություններ	-	+	+	+	+	+	+	-

Մնացյալ աշխարհ	-	-	-	-	-	+	+	+
Ճյուղեր	-	+	+	-	-	-	-	-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ԱԳՅ-ի ընդհանուր կառուցվածքը
Հոսքերի հաշիվներ⁴.

Հաշիվներ	Օգտագործում	Ռեսուրսներ
Արտադրության հաշիվ	Միջանկյալ սպառում <i>Ավելացված արժեք</i>	Թողարկում <i>Ավելացված արժեք</i>
Եկամուտների ձևավորման հաշիվ	Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն Արտադրության և ներմուծման հարկեր <i>Շահույթ / համախառն եկամուտ</i>	<i>Շահույթ / համախառն եկամուտ</i>
Եկամուտների առաջնային բաշխում	Եկամուտ սեփականությունից (տրված) <i>Առաջնային եկամուտների սալդո</i>	Եկամուտ սեփականությունից (ստացված) Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն Արտադրության և ներմուծման հարկեր՝ հանած սուբսիդիաներ <i>Առաջնային եկամուտների սալդո</i>
Եկամուտների երկրորդային բաշխում	Ընթացիկ հարկեր եկամտի, հարստության և այլնի վրա Սոցիալական ապահովագրության հատկացումներ Սոցիալական նպաստներ (բացի բնեղեն սոցիալական տրանսֆերտների) Այլ ընթացիկ տրանսֆերտներ <i>Տնօրինվող եկամուտ</i>	Ընթացիկ հարկեր եկամտի, հարստության և այլնի վրա Սոցիալական ապահովագրության հատկացումներ Սոցիալական նպաստներ (բացի բնեղեն սոցիալական տրանսֆերտների) Այլ ընթացիկ տրանսֆերտներ <i>Տնօրինվող եկամուտ</i>
Տնօրինվող եկամտի օգտագործման հաշիվ	Ծախսեր վերջնական սպառման վրա Խնայողություններ	

⁴ Ազգային հաշիվների համակարգը բաղկացած է հաջորդական փոխկապակցված հաշիվներից, ինչն ապահովում է դրանց միջև փոխկապակցվածության հերթականությունը. «Օգտագործում» սյունակի յուրաքանչյուր հաշվի վերջին հոդվածը հանդիսանում է հաշվեկշռող հոդված, որը տեղափոխվում է հաջորդ հաշվի «Ռեսուրսներ» հոդվածի առաջին հոդված:

Կապիտալի հետ գործառնությունների օգտագործման հաշիվ	Հիմնական կապիտալի համախառն կուտակում Նյութական շրջանառում միջոցների պաշարների փոփոխություն՝ հանած հիմնական կապիտալի սպառումը Արժեքների զուտ ձեռքբերում Հողի և այլ չարտադրված ակտիվների զուտ ձեռքբերում	Խնայողություններ Կապիտալ տրանսֆերտներ (ստացված)՝ հանած կապիտալ տրանսֆերտներ (տրված)
	<i>Ջուտ վարկեր / զուտ պարտքեր</i>	<i>Ջուտ վարկեր / զուտ պարտքեր</i>
Ֆինանսական հաշիվ	Ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերում	Ֆինանսական պասիվների զուտ ձեռքբերում

4.1.1. Արտադրության հաշիվ

Արտադրության հաշիվը տնտեսական զարգացումների բնութագրման տեսանկյունից ունի էական նշանակություն: Կառուցման տեսանկյունից այն նաև ամենաաշխատատարն է: Նրա կառուցման համար տեղեկատվության հավաքագրման և մշակման ուղղությամբ պահանջվում է մեծածավալ աշխատանք: Արտադրական հաշվի կառուցվածքն ունի հետևյալ տեսքը.

Օգտագործում	Ռեսուրսներ
Միջանկյալ սպառում ՀՆԱ շուկայական գներով	Ապրանքների և ծառայությունների թողարկում Ապրանքների և ներմուծման զուտ հարկեր

Արտադրության հաշվում ապրանքների և ծառայությունների արտադրանքը հաշվարկվում է ինչպես հիմնական, այնպես էլ շուկայական գներով: Շուկայական գներով հաշվարկված համախառն թողարկումը համարվում է հիմնական ցուցանիշ, որը հետագայում օգտագործվում է միջանկյալ սպառման, կուտակման և արտահանման հաշվարկների համար: Սակայն համախառն թողարկումը հիմնական գներով նույնպես ունի կարևոր նշանակություն: Նրա մեծությունը կախված է հարկերից և սուբսիդիաներից, այն օգտագործվում է ճյուղերի համախառն թողարկման ցուցանիշի՝ ինչպես միջճյուղային, այնպես էլ վերջնական գնահատման նպատակով: Եթե դրանք

գնահատենք շուկայական գներով, ապա հարկերի տարբեր դրույքաչափերի պատճառով այն կենթարկվեր զգալի շեղումների: Արտադրություն հաշիվներում հաշվեկշռող հողվածք հանդիսանում է համախառն ներքին արդյունքը, որն, ինչպես արդեն նշել ենք, տնտեսության զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշն է, որը ներառում է ռեզինդենտների և ոչ ռեզինդենտների արտադրական գործունեությունը տվյալ երկրի տնտեսական տարածքում: Ավելի ցածր մակարդակներում՝ ճյուղերում, հատվածներում, ձեռնարկություններում, համախառն թողարկման և միջանկյալ սպառման տարբերությունը համապատասխան մակարդակի համախառն ավելացված արժեքն է: Վերջինի հիման վրա որոշվում է ճյուղի, հատվածի, տնտեսավարող միավորի ներդրումը համախառն ներքին արդյունքի ստեղծման գործում: Արտադրական հաշվի ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատել ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռները՝ համադրելով ՀՆԱ-ն, ավելացված արժեքը և միջանկյալ սպառումը, հաշվարկել արդյունավետության գնահատան ցուցանիշներ:

Ինչպես այս հաշվի, այնպես էլ հաջորդ հաշիվների համար ցուցադրման նպատակով հետագա գլուխներում կկատարվեն պարզ վերլուծություններ՝ հիմք ընդունելով Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված 1990-1997 թվականների ազգային հաշիվների տվյալները:

Արտադրության հաշվի-վերլուծական

Տնտեսության արտադրական գործունեության արդյունքի գնահատականների և վերլուծությունների համար զգալի տեղեկատվություն են տալիս արտադրության հաշվի ցուցանիշները: Այսպես օրինակ, վերլուծելով Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված «Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997թթ» գիրքը՝ ռեսուրսների օգտագործման կառուցվածքում կարելի է նկատել հստակ արտահայտված միտումներ: Հայաստանի տնտեսության մեջ միջանկյալ սպառումը թողարկման կառուցվածքում 1994 թվականից ի վեր ունի նվազման միտում՝ տարեկան միջին հաշվով 2.9 տոկոսային կետով, սակայն նկատվում է նաև, որ նվազման տեմպերը դանդաղում են: Նույն կառուցվածքում համախառն ավելացված արժեքն ունի տատանողական բնույթ, որը միջինում կազմում է 50 տոկոս: Միջանկյալ սպառման նվազման արդյունքում աճում է զուտ հարկերի տեսակարար կշիռը: Այս դիտարկումներն արժեքավոր են կանխատեսումներ կատարելու համար: Կարելի է ենթադրել, որ ապագայում զուտ հարկերի տեսակարար կշիռը կկայունանա, և աճ տեղի կունենա «ավելացված արժեքի» հողվածում:

Գործնական օրինակ 1

Ձեռնարկությունը իրացված արտադրանքից ստացել է 800 հազ դրամ հասույթ և մուծել է 160 հազ դրամ ավելացված արժեքի հարկ, ինչպես նաև 10 հազ դրամ ներմուծման տուրք: Արտադրանքի մի քանի տեսակների համար կառավարությունը սահմանել է գներ, որոնք ավելի փոքր են, քան այդ արտադրանքի ինքնարժեքը, որի համար կառավարությունը սուբսիդավորել է դրանք 6 հազ դրամ գումարով: Անավարտ արտադրանքի ծավալը տարվա սկզբում կազմել է 16 հազ դրամ, իսկ տարվա վերջին՝ 18 հազ դրամ, չիրացված արտադրանքը, համապատասխանաբար՝ 100 հազ դրամ և 120 հազ դրամ: Տվյալ ձեռնարկությանը մեկ այլ ձեռնարկություն մատուցել է ծառայություններ, որի համար վճարվել է 300 հազ դրամ, որից 60 հազ դրամը՝ ավելացված արժեքի հարկ:

Որոշել երկու ձեռնարկությունների համար համախառն արտադրանքը հիմնական և արտադրողի գներով և անցում կատարել արտադրողի գներից՝ հիմնական գներին:

Լուծում:

Թողարկումը հիմնական գներով = իրացումից ստացված եկամուտներ -ապրանքային հարկեր + սուբսիդիաներ + անավարտ արտադրանքի փոփոխություն + չիրացված արտադրանքի փոփոխություն:

Համախառն թողարկումը հիմնական գներով ձեռնարկությունների համար կլինի՝

$$\text{I ձեռնարկություն } 800 - 160 - 10 + 6 + (18 - 16) + (120 - 100) = 658$$

$$\text{II ձեռնարկություն } 300 - 60 = 240$$

Թողարկումը արտադրողի գներով = իրացումից ստացված եկամուտներ -ավելացված արժեքի հարկ + անավարտ արտադրանքի փոփոխություն + չիրացված արտադրանքի փոփոխություն:

$$\text{I ձեռնարկություն } 800 - 160 + (18 - 16) + (120 - 100) = 662$$

$$\text{II ձեռնարկություն } 300 - 60 = 240$$

Համախառն թողարկումը հիմնական գներով = թողարկումը արտադրողի գներով – ներմուծման տուրք + սուբսիդիաներ:

I ձեռնարկություն 662 - 10 + 6 = 658

II ձեռնարկություն 300 - 60 = 240

4.1.2. Եկամուտների ձևավորման հաշիվ

Եկամուտների հաշիվը կենտրոնական դեր ունի ազգային հաշիվների համակարգում, այն կապող օղակ է հանդիսանում արտադրությունից ստացված սկզբնական արդյունքի և վերջնական հաշվի միջև, որտեղ գրանցված են ֆինանսական ակտիվների և պասիվների փոփոխությունը: Այստեղ են ընդգրկվում եկամուտների չրջանառության երեք հիմնական փուլերը՝ եկամուտների ձևավորումը, բաշխումն ու վերաբաշխումը, ինչպես նաև եկամուտների օգտագործումը: Այս հաշիվները կառուցված են ոչ միայն ողջ տնտեսություն, այլ նաև ներքին օղակների՝ տնտեսական հատվածների և տնտեսավարող միավորների համար: Հաշիվները ցույց են տալիս, թե ինչ բաղադրիչներից է կազմված համախառն ավելացված արժեքը կամ համախառն ներքին արդյունքը, և թե փոխհատուցման ենթակա ինչ ծախսեր են կատարվել արտադրության գործընթացում:

Այդ նպատակով արդեն հաշվարկված համախառն ներքին արդյունքը՝ ամբողջ տնտեսության համար կամ համախառն ավելացված արժեքը՝ ճյուղերի և հատվածների համար, տեղադրվում է համապատասխան «ռեսուրսներ» սյունակում: «Օգտագործում» սյունակում տեղադրվում են արտադրողների կողմից կատարված ծախսերը, այն է՝ վարձու աշխատողների վարձատրություն, արտադրության և ներմուծման զուտ հարկեր: Այդ սյունակում է տեղադրվում նաև հաշվեկշռող հոդվածը՝ «համախառն շահույթը» կամ «խառը եկամուտները», որը և հանդիսանում է արտադրողների եկամուտը:


Եկամուտների ձևավորման հաշիվը տնտեսության ճյուղերի և հատվածների համար ունի հետևյալ տեսքը.

Օգտագործում	Ռեսուրսներ
Վարձու աշխատողների վարձատրություն Արտադրության այլ զուտ հարկեր Համախառն շահույթ / համախառն խառը եկամուտ	Համախառն ավելացված արժեք

Ողջ տնտեսութեան համախառն շահույթը կարելի է ստանալ գումարելով կա՛մ հատվածների, կա՛մ ճյուղերի համախառն շահույթները: Եկամուտների ձևավորման «օգտագործում» սյունակում հաշվի են առնվում արտադրութեան այլ հարկերը (բացառելով սուբսիդիաները), քանի որ նրանք են հանդիսանում ավելացված արժեքի բաղադրիչներ, եթե հաշվարկը կատարվում է հիմնական գներով:

Եթե համախառն շահույթից հանենք հիմնական կապիտալի սպառումը, ապա կստանանք զուտ շահույթը:

«Վարձու աշխատողների վարձատրութիւն» հոդվածում ընդգրկված են այն բոլոր ծախսերը, որոնք արտադրողները վճարում են վարձակալած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ աշխատողներին:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. Վարձու աշխատողների աշխատավարձի տարրերը

Դրամային արտահայտությամբ աշխատավարձն ընդգրկում է հետևյալ տարրերը.

- Աշխատավարձ, որը տրվում է կատարված աշխատանքի դիմաց ըստ գործավճարի և տարիֆային սանդղակի,
- պարգևատրման բնույթի վճարներ,
- փոխհատուցման բնույթի վճարներ, կապված աշխատանքային ռեժիմի, աշխատանքի պայմանների հետ,
- օրենքով հաստատված ոչ աշխատանքային ժամանակի համար վճարներ,

- աշխատավարձ այն աշխատողներին, որոնք սովորում են աշխատանքից կտրված, որակավորման բարձրացման և կադրերի պատրաստման համար,
- կարգավորման նպատակով աշխատանքի հավելումներ (գների փոփոխման հետևանքով բնակվարձի, տրանսպորտային ծախսեր և այլն)
- վարձու աշխատողներին տրվող տոկոսային վճարներ, նվերներ և այլն,
- հայտնագործությունների, աշխատանքի ռացիոնալիզացումի, տեխնիկական առաջադիմությունների գերդրումների վճարներ:

Վարձատրույթյունը կարող է լինել ոչ միայն դրամային, այլ նաև բնաիրային տեսքով, ինչն առավել տարածված է անցումային երկրներում:

Բնաիրային տեսքով վարձատրույթյունը կարող է լինել ցանկացած սպառողական ապրանք կամ ծառայություն, որն աշխատանքների համար ահրաժեշտություն չի ներկայացնում, սակայն կարող է օգտագործվել վարձու աշխատողի կամ նրա ընտանիքի կողմից՝ սեփական պահանջմունքները բավարարելու համար: Ապրանքներով վարձատրույթյունը գնահատվում է շուկայական գներով նույնիսկ այն դեպքում, երբ ապրանքները տրվում են ցածր գներով կամ ինքնարժեքով:

Առանձնակի դժվարություն է ներկայացնում վարձու աշխատողների և ինքնազբաղվածների տարանջատումը: Դա իր աղբյուրությունն է թողնում տնտեսական հատվածներում վարձու աշխատողների վարձատրույթյան գնահատման ճշտության վրա: Անձը համարվում է վարձու աշխատող, եթե նա ունի կամավոր կնքված համաձայնություն իր և ձեռնարկության միջև առ այն, որ նա կստանա վարձատրույթյուն իր աշխատանքի դիմաց: Ինքնազբաղված են համարվում այն անձինք, որոնց ունեցած ձեռնարկությունները չեն տեղավորվում ո՛չ իրավաբանական անձի, ո՛չ տնտեսական միավորի կարգավիճակի մեջ: Ինքնազբաղվածները ստանում են խառը եկամուտ և ոչ թե վարձու աշխատողի աշխատավարձ:

Եկամուտների ձևավորման հաշիվ-վերլուծական

Եկամուտների ձևավորման հաշիվը հնարավորություն է տալիս վերլուծել ինչպես տնտեսության ճյուղերում և հատվածներում, այնպես էլ ողջ տնտեսության մասշտաբով

սկզբնական եկամուտների ձևավորման աղբյուրները, դրա փոփոխման միտումները, որոնց հիման վրա հնարավոր է կատարել կանխատեսումներ: Ողջ տնտեսության մակարդակով կատարված եկամուտների ձևավորման հաշվի ռեսուրսային մասում, ինչպես նշվել է, գրանցվում է համախառն ներքին արդյունքը, որը սկսած 1994 թվականից Հայաստանի Հանրապետությունում ունի աճողական բնույթ: Նրա միջին տարեկան աճը կազմել է 5.37 տոկոս և կազմել 1994 թվականի նկատմամբ 144.3 տոկոս: Սակայն 1990-94 թվականներին այն նվազել է 54.25 տոկոսով, տարեկան միջինում 14.3 տոկոս և 2000թ. այն կազմում է 1989 թվականի մակարդակի 66 տոկոսը: Եթե շարունակվի տնտեսական աճը նույն միջին տեմպերով, ապա 1989 թվականի մակարդակին մեր տնտեսությունը կհասնի 8 տարի հետո:

Եկամուտների ձևավորման Հաշվի օգտագործում սյունակի կառուցվածքը տրված է հետևյալ աղյուսակում:

	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	միջին քառակուսային շեղում
Համախառն ներքին արդյունք	100	100	100	100	100	100	100	100	
Օգտագործում									
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	57.4	52.5	38.4	41.8	41.5	39.3	40	41.8	14.5
Արտադրություն և ներմուծում, այդ թվում	17.8	8.1	8.96	6	5.8	5.4	6.7	9.2	1.8
• ապրանքների և ներմուծման հարկեր	14.8	7.5	8.8	5.9	4.3	4.1	5.8	8.3	1.9
• արտադրության այլ հարկեր	3	0.6	0.16	0.1	1.5	2.3	0.9	0.9	0.5
Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ, այդ թվում	6.9	1.9	0.64	0.94	1.1	0.4	0.3	0.4	0.9
• ապրանքների և ներմուծման սուբսիդիաներ	6.9	1.9	0.64	0.94	1.1	0.4	0.3	0.4	0.9
• արտադրության այլ սուբսիդիաներ	-	-	-	-	-	-	-	-	-

Արտադրության համախառն շահույթը և համախառն խառն եկամուտներ	31.7	41.3	53.28	53.14	53.8	55.7	53.6	49.4	4.8
---	------	------	-------	-------	------	------	------	------	-----

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Եթե հաշվի չառնվեն 1990 թվականի ցուցանիշները, ապա կարելի է պնդել, որ մնացած տարիների համար նրանք բավական կայուն են: Շեղումներ են նկատվում «վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության» և «համախառն շահույթի» հոդվածներում, սակայն պարզորոշ երևում է առաջինների կայուն աճը վերջին երեք տարիների համար՝ ի հաշիվ երկրորդի կայուն նվազման, որը բավարար հիմք է տալիս կանխատեսումների համար:

Ողջ տնտեսության համար արված այս հետևությունը ավելի կոնկրետ տեսք կունենա ճյուղերի և հատվածների կտրվածքով:

Գործնական օրինակ 2

Հեռակալ տվյալների հիման վրա հաշվարկել եկամուտների ձևավորման հաշվի հոդվածների արժեքը, եթե համախառն ավելացված արժեքը վերցված է օրինակ 1-ից:

Աշխատավարձ – 160

Վճարումներ գովազդի դիմաց – 18

Աշխատողների պարգևատրում – 20

Սարքավորումների վարձակալություն – 16

Աշխատանքի վայրում սնունդ – 10

Աշխատողներին անհատույց տրամադրելու նպատակով տուրիստական ուղեգրերի ձեռք բերում – 6

Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին 20

Գույքահարկ – 30

Վճարումներ աշխատողներին ուսումնական հաստատություններում սովորելու համար – 4

Վճարումներ կապի ծառայությունների դիմաց – 16

Ապահովագրական վճարներ – 4

Պետության կողմից փոխհատուցում – 2

Լուծում

Աշխատավարձը = հիմնական աշխատավարձ + պարգևատրում + սնունդ + տուրիստական ուղեգրեր = 160 + 20 + 10 + 6 = 196

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն =
 աշխատավարձ + հատկացումներ սոցիալական
 ապահովագրության հիմնադրամին + պայմանական
 փոխանցումներ սոցիալական ապահովագրության պետական
 հիմնադրամ = 196 + 20 + 4 = 220

Արտադրության այլ զուտ հարկեր = գույքահարկ -
 արտադրության այլ սուբսիդիաներ = 30 - 2 = 28


Ոչ ֆինանսական հաստատությունների համար եկամուտների
 ձևավորման հաշվում հաշվեկշռող հողված է համարվում
 համախառն շահույթը, որը մեր օրինակում հաշվարկվում է
 հետևյալ կերպ`

Համախառն շահույթ = համախառն ավելացված արժեք/442/ -
 վարձու աշխատողների վարձատրություն/220/ - արտադրության
 այլ զուտ հարկեր/28/ = 442-220-28= 194

Օգտագործում	Ռեսուրսներ
Վարձու աշխատողների վարձատրություն 220	Համախառն ավելացված արժեք 442
Արտադրության այլ զուտ հարկեր 28	
Համախառն շահույթ 194 / =442- 220-28/	

4.1.3. Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ

Սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը ցույց է տալիս, թե ինչպես են բաշխվում սկզբնական եկամուտներն այն ստացողների միջև: Այդ հաշիվը վեր է հանում տնտեսական հատվածների եկամուտների այն տեսակները, որոնք ստացվում են ոչ թե արտադրական գործունեության, այլ վերաբաշխման գործառնությունների արդյունքում:



ԳԾԱՊԱՏԿԵՐՑ Սկզբնական եկամուտների կառուցվածքը

Տվյալ հաշվի ռեսուրսային մասում նախորդ՝ «եկամուտների ձևավորման» հաշվից փոխանցվում է հաշվեկշռող հոդվածը՝ «Համախառն շահույթ և համախառն խառը եկամուտ»՝ համապատասխան տնտեսական հատվածների համար: Սակայն ստացված շահույթը (եկամուտը) ոչ ամբողջությամբ է մնում արտադրողների տնօրինության տակ:

Վերջիններս պետք է հատկացումներ կատարեն շահույթից (եկամուտից) արտադրության գործընթացում փոխառու ֆինանսական միջոցների, հողի և այլ ոչ ֆինանսական նյութական ակտիվների օգտագործման համար ի օգուտ այդ ակտիվների սեփականատերերի: Այդ հատկացումները ԱՀՀ-ում դիտարկվում են որպես եկամուտներ սեփականությունից (վճարված կամ ստացված):

«Օգտագործում» բաժնում ցույց են տրվում սեփականությունից ստացված եկամուտները, որոնք վճարվել են համապատասխան հատվածների կողմից. ինչպես օրինակ՝ շահաբաժիններ, տոկոսներ՝ ավանդներից, փոխառություններից և վարկերից, վճարներ՝ հողի օգտագործման, օգտակար հանածոների պաշարների, անտառային և տարածությունների շահագործման համար և այլն: Միաժամանակ, ռեսուրսային մասում այդ նույն գումարները գրանցվում են որպես սեփականությունից գոյացած եկամուտներ՝ ստացված այլ հատվածների տնտեսավարող միավորների կողմից: Օրինակ, բանկերի կողմից վճարվող տոկոսները կարտացոլվեն «Օգտագործման» հաշիվներում ըստ բոլոր հատվածների, բացի «Ֆինանսական հաստատություններ»

Հատվածի, իսկ բոլոր Հատվածների կողմից վճարված տոկոսների Հանրագումարը կարտացոլվի որպես սեփականութունից եկամուտներ, ստացված «Ֆինանսական Հաստատություններ» Հատվածի կողմից այդ Հատվածի Հաշվի «Ռեսուրսներ» բաժնում:

Եկամուտների ձևավորման Հաշվում աշխատանքի վարձատրությունը արտացոլված էր «Օգտագործում» բաժնում, որպես արտադրող-ռեզիդենտների կողմից վարձու աշխատողներին տրված գումար: Սկզբնական եկամուտների բաշխման Հաշվում այն արտացոլվում է ռեսուրսային մասում որպես «Տնային տնտեսությունների կողմից» ստացված գումար:

Եկամուտների ձևավորման Հաշվում «Օգտագործում» բաժնում արտադրության և ներմուծման Հարկերը արտացոլված են որպես տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարված գումարներ, իսկ եկամուտների սկզբնական բաշխման Հաշվում դրանք արտացոլվում են որպես «Պետական Հաստատություններ» Հատվածի կողմից ստացված եկամուտներ:

Այսպիսով, սկզբնական եկամուտների բաշխման Հաշվում ըստ յուրաքանչյուր Հատվածի կարտացոլվեն առանձին ցուցանիշներ: Օրինակ, «Պետական մարմիններ» Հատվածի Համար ռեսուրսային մասում արտացոլվում են սեփականությունից ստացված եկամուտները, արտադրության և ներմուծման Հարկերը (չներառած սուբսիդիաները), շահույթը, իսկ «Օգտագործում» բաժնում՝ սեփականությունից վճարվող եկամուտները:

«Ոչ ֆինանսական ձեռնարկություններ» և «Ֆինանսական Հաստատություններ» Հատվածների Համար ռեսուրսային մասում չեն կատարվում գրանցումներ աշխատանքի վարձատրության և Հարկերի վերաբերյալ: «Տնային տնտեսություններ» Հատվածի ռեսուրսները ձևավորվում են խառը եկամտի, աշխատանքի վարձատրության, սեփականությունից ստացված եկամուտների տեսքով: Սկզբնական եկամուտների բաշխման Հաշվի Հաշվեկշռող Հոդվածը համախառն սկզբնական եկամուտների տարբերությունն է, որը ցույց է տալիս սկզբնական եկամուտների գումարը, որը մնում է յուրաքանչյուր Հատվածի մոտ արտադրության հետ կապված բոլոր ծախսերը Հաշվի առնելուց հետո:

Սկզբնական եկամուտների բաշխման Հաշիվը, որի Հաշվեկշռող Հոդվածը Համախառն ազգային արդյունքն է, և որի մեջ ընդգրկվող ցուցանիշները հիմնականում վերցվում են եկամուտների ձևավորման բաժնի «օգտագործում»

սյունակից, բացառությամբ գործոնային եկամուտներից, վերլուծության առումով չի տալիս բավականաչափ նյութ, քանի որ գործոնային եկամուտներն ունեն շատ չնչին ազդեցություն ՀՀ տնտեսության վրա: Նշենք միայն, որ մինչև 1993 թվականը գործոնային եկամուտները կամ այլ արտահայտությամբ՝ սեփականությունից ստացված եկամուտները, որպես այդպիսին, բացակայում են: 1993-1995 թվականներին զուտ գործոնային եկամուտներն ունեին չնչին մեծություն և, ինչը որևէ կարևոր է, բացասական էին: Սկսած 1996-1997 թվականներին հանրապետություն մուտք է գործել ավելի շատ եկամուտ քան փոխանցվել է, համապատասխանաբար 1 և 1.2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի ընդամենը 0.18 և 0.15 տոկոսը:

Գործնական օրինակ 3

Նախորդ հաշիվների և հետևյալ տվյալների հիման վրա «Ոչ ֆինանսական ձեռնարկություններ» հատվածի համար կառուցել սկզբնական եկամուտների հաշիվ (պայմանական միավորներով):

Վարկի դիմաց վճարված տոկոսներ - 4

Ձեռնարկության աշխատակիցներին վճարված շահաբաժիններ - 6

Վարձավճար հողի օգտագործման դիմաց - 14

Բանկային հաշիվներից ստացված տոկոսներ - 14

Լուծում:

Սեփականությունից ստացված եկամուտները կազմում են 14 (բանկային հաշիվների գծով ստացված տոկոսներ), սեփականությունից ստացված եկամուտների փոխանցումները՝ 24 (վարձավճար հողի օգտագործման դիմաց՝ 14, վարկի դիմաց վճարված տոկոսներ՝ 4, ձեռնարկության աշխատակիցներին վճարված շահաբաժիններ՝ 6):

Այս դեպքում «Ոչ ֆինանսական ձեռնարկություններ» հատվածի սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը կունենա հետևյալ տեսքը.

Օգտագործում	Ռեսուրսներ
«Սեփականությունից եկամուտներ» - վճարված 24	«Համախառն շահույթ» 194 «Սեփականությունից եկամուտներ»

Եթե ղիտարկենք սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը ողջ տնտեսուծայան մակարդակով, ապա «ռեսուրսներ» և «օգտագործում» բաժիններում կարտացոլվեն միայն արտերկրից ստացված և արտերկիր վճարված սկզբնական եկամուտները: Այս դեպքում ողջ տնտեսուծայան համար սկզբնական եկամուտների բաշխման հաշվում պետք է արտացոլվեն ռեզիդենտների կողմից արտերկրից ստացված հետևյալ սկզբնական եկամուտները.

- աշխատանքի ղիմաց վարձատրուծյուն՝ ռեզիդենտ-աշխատողներին ոչ ռեզիդենտ-տնտեսական միավորների կողմից,
- ոչ ռեզիդենտ-տնտեսական միավորների կողմից պետուծյանը վճարված արտաղրուծյան հարկեր,
- սեփականուծյունից եկամուտներ՝ ստացված արտաքին հատվածից (երկրի ռեզիդենտների կողմից արտերկրների կառավարուծյուններին, բանկերին, ընկերուծյուններին տրամաղրված վարկերի ղիմաց տոկոսներ. ռեզիդենտների կողմից բաժնետիրական կապիտաղում մասնակցուծյան ղիմաց արտասահմանից ստացվող շահաբաժիններ և այլ եկամուտներ. ուղղակի օտարերկրյա ներղրումներով ձեռնարկուծյունների ռեինվեստավորվող եկամուտներ և այլն):

Նման ձևով համախմբված հաշվում իրենց արտացողումը պետք է գտնեն սվյալ երկրի ռեզիդենտների կողմից այլ երկիր փոխանցվող համանման սկզբնական եկամուտները: Տվյալ երկրի ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտներից ստացվող սկզբնական եկամուտների և ոչ ռեզիդենտներին վճարվող սկզբնական եկամուտների միջև տարբերուծյունը կոչվում է արտաքին հատվածից ստացված սկզբնական եկամուտների սաղգո:

Ամբողջ տնտեսուծյան համար սկզբնական եկամուտների բաշխման հաշվի (սկզբնական եկամուտների տարբերուծյուն) հավասարակղող հողվածը համախառն աղգային եկամուտն է:

ՀԱԱ = ՀՆԱ + «Արտերկրից» ստացված և «արտերկիր» փոխանցված սկզբնական եկամուտների տարբերություն

Այդ դեպքում սկզբնական եկամուտների բաշխման հաշիվը ողջ տնտեսությունից համար կունենա հետևյալ տեսքը՝

Օգտագործում	Ռեսուրսներ
<p>«Արտերկիր» - սեփականությունից ստացված եկամուտներ</p> <p>Համախառն ազգային արդյունք</p>	<p>Տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ</p> <p>Վարձու աշխատողների աշխատավարձ</p> <p>Արտադրության և ներմուծման հարկեր</p> <p>Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ</p> <p>Եկամուտներ սեփականությունից՝ ստացված «արտերկրից»</p>

4. 1 .4. Եկամուտների երկրորդական բաշխման հաշիվ

Վերաբաշխման գործառնությունների կարևոր խումբ են հանդիսանում տրանսֆերտները, այսինքն անհատույց հիմքի վրա ինստիտուցիոնալ մեկ միավորից մյուսին ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային տեսքով փոխանցվող եկամուտները: Տրանսֆերտի դեպքում տեղի է ունենում ակտիվների, ապրանքների և ծառայությունների միակողմանի շարժ: Տրանսֆերտների օրինակ են հանդիսանում վճարումները բյուջեից (նպաստներ, կենսաթոշակներ, կրթաթոշակներ), կամավոր մուծումները, մարդասիրական օգնությունները, նվիրատվությունները և այլն:

Տրանսֆերտները դասակարգվում են ընթացիկի և կապիտալի: Ընթացիկ տրանսֆերտներ են համարվում այն գործառնությունները, որոնք իրականացվում են քիչ թե շատ կանոնավոր ձևով և կապված են տնտեսավարող միավորների ընթացիկ եկամուտների ավելացման կամ փոքրացման հետ. մասնավորապես՝ եկամտից և գույքից գանձվող հարկեր, փաստացի հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին, ամենատարբեր ապահովագրական վճարումներ, փոխհատուցումներ, սոցիալական ապահովու-

թյան նպաստներ, կամավոր վճարներ, նվերներ, մարդասիրական օգնություն, տուգանքներ, տույժեր և այլն:

Կապիտալ տրանսֆերտները կապված են մեկ միավորից մյուսին փոխանցվող կապիտալի և խնայողությունների հետ (խնայողությունների կամ երկարաժամկետ ծախսերի ֆինանսավորման համար)․ բյուջեից սուբսիդիաներ կապիտալ ներդրումների համար, պարտքերի դուրս գրում (ինստիտուցիոնալ միավորներին), շուկայականից ցածր գնով հիմնական միջոցների վաճառք կամ դրանց անհատույց փոխանցում:

Բնաիրային տեսքով ընթացիկ և կապիտալ տրանսֆերտներ են հանդիսանում, օրինակ, կապիտալի նկատմամբ սեփականություն իրավունքների փոխանցումը, տնային տնտեսություններին մշակույթի, առողջապահության, կրթության և սպորտի բնագավառներում անվճար կամ ցածր գներով տրամադրվող առանձին ծառայությունները:

Ընթացիկ տրանսֆերտները ցույց են տրվում եկամուտների վերաբաշխման հաշվում (եկամուտների երկրորդական բաշխում), իսկ կապիտալ տրանսֆերտները՝ կապիտալի հետ գործառնությունների հաշվում:

Վերաբաշխված գործառնությունների արտացոլման համար կազմվում է եկամտի երկրորդական բաշխման հաշիվը:

Օգտագործում	Ռեսուրսներ
Տնտեսավարող միավորների կողմից փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ Համախառն տնօրինվող եկամուտ	Համախառն սկզբնական եկամուտների սալդո Տնտեսավարող միավորների կողմից ստացված ընթացիկ տրանսֆերտներ
Ընդամենը	Ընդամենը

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. Եկամուտների երկրորդական բաշխումն ըստ հատվածների

Եկամուտների երկրորդական բաշխման հաշվում արտացոլվում են տնտեսության մեկ հատվածից մյուսին փոխանցվող ընթացիկ տրանսֆերտները: Օրինակ՝ փաստացի հատկացումները սոցիալական ապահովագրություն հիմնադրամին, որոնք ցույց են տրվում «Աշխատանքի վարձատրություն» հոդվածի սկզբնական եկամուտների ձևավորման և բաշխման հաշիվներում, այստեղ դիտարկվում են որպես տրանսֆերտներ, որոնք փոխանցվում են սոցիալական ապահովագրության կազմակերպություններին տնային տնտեսու-

թյունների (աշխատողների) կողմից՝ հետագայում իրենց կենսաթոշակներ և այլ նպաստներ վճարելու համար:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումները, որոնք արտացոլվում են եկամուտների ձևավորման և սկզբնական եկամուտների բաշխման հաշիվներում՝ որպես վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաղկացուցիչ մաս, եկամուտների երկրորդական բաշխման հաշվում ցույց են տրվում որպես աշխատողների կողմից ոչ ֆինանսական կազմակերպությունների, ֆինանսական հաստատությունների (կամ տնտեսության այլ հատվածներին, որոնց մեջ մտնում է գործատուն) սոցիալական ապահովագրության պայմանական միջոցների հաշվին կատարվող հատկացումներ և որպես այդ միջոցներից տնային տնտեսություններին վճարվող սոցիալական նպաստներ:

Եկամուտների երկրորդական բաշխման հաշվի հավասարակշռող հոդվածը (հատվածի համար) համախառն տնօրինվող եկամուտն է (հատվածի սկզբնական եկամուտների տարբերություն գումարած եկամուտների վերաբաշխման արդյունքում հատվածի կողմից ստացված և փոխանցված ընթացիկ տրանսֆերտների տարբերություն): Համախառն տնօրինվող եկամուտն այն վերջնական եկամուտն է, որը տնօրինվում է տնային տնտեսությունների կողմից իրենց՝ վերջնական սպառման և խնայողությունների ֆինանսավորման նպատակով (առանց իրենց կանխիկ դրամի քանակի փոքրացման, ակտիվների իրացման և պասիվների ավելացման):

Եկամուտների բաշխման հաշվի վերլուծական

Ի տարբերություն սկզբնական եկամուտների բաշխման հաշվի, եկամուտների երկրորդական բաշխման հաշիվը տալիս է բավականին վերլուծական նյութ, քանի որ ներկայումս տրանսֆերտները տնտեսության վրա ունեն գգալի ազդեցություն:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. Ընթացիկ եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով

	1992	1993	1994	1995	1996	1997
համախառն ազգային եկամուտ	100	100	100	100	100	100
ստացված ընթացիկ տրանսֆերտներ	0.16	11.3	18.5	13.1	9.8	11.5
փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ	-	-	0.37	0.13	0.91	2.1
զուտ ընթացիկ տրանսֆերտներ (նլրդ դրամ)	-	-	33.9	68.0	59.0	75.0

զուտ ընթացիկ տրանսֆերտներ (մլն ԱՄՆ դոլար)	-	-	117.3	167.5	142.7	152.8
--	---	---	-------	-------	-------	-------

Ինչպես երևում է աղյուսակից, չնայած այն բանի, որ ստացված տրանսֆերտների մեծությունն ունի տատանողական բնույթ, սակայն բացարձակ արտահայտությամբ այն ունի շեշտված աճողական բնույթ, և կանխատեսումների համար նպատակահարմար է վերցնել հենց վերջինս: Սակայն պետք է հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում նրա աճի տեմպերը կդանդաղեն: Արտերկրներից ստացված տրանսֆերտները կազմում են տնտեսության ամբողջ տրանսֆերտների 14.7-ը: Տվյալ հաշվի հաշվեկշռող հոդվածը՝ համախառն տնօրինվող եկամուտը, 11.6 տոկոսով ավելին է, քան տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ն:

Գործնական օրինակ 4

Օգտագործելով նախորդ օրինակների, ինչպես նաև ներքոհիշյալ տվյալները, կառուցենք «Ոչ ֆինանսական կազմակերպություններ» հաստի երկրորդական բաշխման հաշիվը

- Շահութահարկ - 40
- Ապահովագրական փոխատուցումներ - 12
- Ստացված տուգանքներ - 6
- Ապահովագրական տույժեր - 16
- Ապահովագրության ծառայությունների համար վճարումներ - 4
- Վճարված տուգանքներ - 8

Լուծում:

Ըստ մեր պայմանական օրինակի ստացված ընթացիկ տրանսֆերտները կազմում են.

Ապահովագրական փոխհատուցումներ + Ստացված տուգանքներ + Պայմանականորեն հաշվարկված հատկացումները սոցիալական ապահովագրության հիմնադրամին = 12+6+4 = 22

Ապահովագրական տույժերը, որոնք արտացոլվում են երկրորդական բաշխման հաշվում փոխանցված ընթացիկ տրանսֆերտների կազմում, պետք է ցույց տրվեն բացառությամբ դրանց այն մասով, որն ընդգրկում է ապահովագրական ընկերությունների ծառայությունների դիմաց վճարումները:

Հետևաբար, ըստ օրինակի տվյալների, փոխանցված ընթացիկ տրանսֆերտները հաշվարկվում են հետևյալ կերպ.

Ձուտ ապահովագրական տույժեր = Ապահովագրական տույժեր
 –Ապահովագրական ծառայությունների դիմաց վճարումներ =
 $16-4 = 12$

Ձուտ ապահովագրական տույժեր (12) + Շահութահարկ (40) +
 +Պայմանականորեն հաշվարկված հատկացումները
 սոցիալական ապահովագրության հիմնադրամին (4) + Վճարված
 տուգանքներ (8) = $12+40+4+8=64$,

Այսպիսով, «Ոչ ֆինանսական կազմակերպություններ»
 հատվածի եկամուտների երկրորդական բաշխման հաշիվն
 ունի հետևյալ տեսքը.

Օգտագործում	Ռեսուրսներ
Փոխանցված ընթացիկ տրանսֆերտներ 64	Համախառն սկզբնական եկամուտների սալդո 184
Համախառն տնօրինվող եկամուտ $142 / =184+22-64/$	Ստացված ընթացիկ տրանսֆերտներ 22

Եկամուտների երկրորդական բաշխման համախմբված հաշվում ողջ տնտեսության մակարդակով «Ռեսուրսներ» մասում արտացոլվում են համախառն ազգային արդյունքը, «արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտները, իսկ «Օգտագործման» մեջ՝ «արտերկիր» փոխանցված ընթացիկ տրանսֆերտները: Այս դեպքում հավասարակշռող հոդված է հանդիսանում համախառն ազգային տնօրինվող եկամուտը:

Համախառն ազգային տնօրինվող եկամուտը (ՀԱՏԵ) կապված է համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) հետ հետևյալ հարաբերակցությամբ.

$$\text{ՀԱՏԵ} = \text{ՀԱԱ} + \text{«Արտերկրից» ստացված ընթացիկ տրանսֆերտների տարբերություն}$$

Օգտագործում	Ռեսուրսներ
Ընթացիկ տրանսֆերտներ՝ փոխանցված «արտերկիր»	Սկզբնական եկամուտների սալդո
Համախառն ազգային տնօրինվող եկամուտ	Ընթացիկ տրանսֆերտներ՝ ստացված «արտերկրից»
Ընդամենը	Ընդամենը

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. Տնտեսության համար եկամուտների երկրորդական բաշխման հաշիվ

Եկամտի երկրորդական բաշխման տվյալ հաշիվները թույլ են տալիս որոշել ապրանքների և ծառայությունների նկատմամբ ամբողջական վճարունակ պահանջարկը, շուկայի սպառողական ներուժը, նրա տարողությունը:

Մեկ շնչի հաշվով տնօրինվող եկամուտը հանդիսանում է բնակչության կենսամակարդակի առավել ընդգրկուն ցուցանիշ:

Բնակչության կենսամակարդակի դինամիկայի վերլուծության մեջ օգտագործում են տնօրինվող եկամտի անվանական և փաստացի ցուցանիշները:

4.1.5. Եկամուտների օգտագործման հաշիվ

Եկամուտների հաշիվը եզրափակվում է եկամուտների օգտագործման հաշիվները: Տվյալ հաշվի նպատակն է հանդիսանում ցույց տալ, թե տնտեսության մակարդակով վերջնական սպառման և խնայողությունների համար ինչպես է օգտագործվում ազգային տնօրինվող եկամուտը. հատվածների մակարդակով ինչպես են տնային տնտեսությունները, պետական կառավարման մարմինները և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները բաշխում իրենց տնօրինվող եկամուտը վերջնական սպառման և խնայողությունների ծախսերի միջև:

Ամբողջ տնտեսության մակարդակով հաշվի ռեսուրսային մասում արտացոլվում է համախան ազգային տնօրինվող եկամուտը, որը փոխանցվել է այստեղ եկամտի երկրորդական բաշխման հաշվից (հատվածների մակարդակով՝ տնօրինվող եկամտի ծավալը): Օգտագործման մասում արտացոլվում են տնային տնտեսությունների, պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերը:

Ինստիտուցիոնալ միավորների վերջնական սպառման ծախսերը ներկայացվում են ըստ անհատական և կոլեկտիվ սպառման խմբերի: Դրանք արտացոլվում են ըստ «սպառումը ֆինանսավորողի» սկզբունքի, այսինքն առնչվում են այն անհատական միավորներին, որոնք ծախսեր են կատարում: Այսպես, բյուջետային կազմակերպությունների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերը, որոնք տրամադրվում են տնային տնտեսություններին որպես բնաիրային տեսքով

սոցիալական տրանսֆերտներ, այս հաշվում արտացոլվում են որպես պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսեր:

Ազգային վերջնական սպառումն իրենից ներկայացնում է անմիջականորեն մարդկանց անհատական և կոլեկտիվ սպառման բավարարման համար օգտագործվող ապրանքների և ծառայությունների արժեքը: Այն ընդգրկում է.

- սպառողների տարբեր խմբերի սպառողական ծախսեր, որոնք խմբավորվում են ըստ ֆինանսավորողների:
- տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր,
- տնային տնտեսությունները սպասարկող հասարակական կազմակերպությունների և պետական հաստատությունների ծախսեր:

Տնտեսության համար բոլոր ինստիտուցիոնալ միավորների վերջնական սպառման ծախսերի գումարը հավասար է փաստացի սպառման գումարին: Սակայն առանձին հատվածների համար տվյալ հավասարությունը չի պահպանվում:

Քանի որ ոչ ֆինանսական հատվածը վերջնական սպառման ծախսեր չի կատարում, ապա տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվում տնօրինվող եկամուտներ և խնայողություններ ցուցանիչները համընկնում են (գործնական օրինակ 4-ում այն հավասար է 142 հազար դրամի):

Եկամուտների օգտագործման հաշվի վերլուծական

Եկամուտների օգտագործման հաշվում արտացոլվում են նախորդ հաշվից եղած համախառն տնօրինվող եկամուտների օգտագործման ուղղությունները:

ԳԾԱՊՍԿԵՐ 12. Եկամուտների օգտագործման հաշվի կառուցվածքը

	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997
Համախառն տնօրինվող եկամուտ	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Վերջնական սպառման ծախսեր	66,3	75,6	112,0	99,4	89,6	104,0	102,4	104,8
տնային տնտեսություններ	48,5	56,9	93,3	82,8	79,9	94,0	92,0	94,3
պետ. հիմնարկներին և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպություններ	17,8	18,8	18,7	16,6	9,8	10,0	10,4	10,5

Համախառն խնայողություններ	33,7	24,4	-12,0	0,6	10,4	-4,0	-2,4	-4,8
ՀՆԱ	100,0	100,0	99,8	89,9	84,7	88,6	91,7	91,3

Ինչպես երևում է աղյուսակից, համախառն տնօրինվող եկամուտների կառուցվածքում վերջնական սպառման ծախսերը 1994 թվականից ունեն աճի միտում և սկսած 1995 թվականից այն ավելի բարձր է, քան տնօրինվող եկամուտներինը: ՀՆԱ-տնօրինվող եկամուտներ հարաբերակցությունը փոքր է 1-ից, ինչը նշանակում է, որ չկատարելով նույնիսկ կուտակում համախառն կապիտալում, ներքին տնտեսությունն ի գործու չէ բավարարել իր սպառողական պահանջույթներն առանց արտաքին տրանսֆերտների և վարկավորման: Սակայն կատարելով առաջին անհրաժեշտության կուտակումներ համախառն կապիտալում՝ մեր տնտեսությունն արդեն սկսած 1990 թվականից վերցնում է փոխառություններ:

Համախառն ազգային խնայողությունները: Այս հոդվածը հիմնականում Հափասարակչող բնույթ ունի: Այն որոշվում է որպես Համախառն ազգային տնօրինվող եկամտի և ազգային վերջնական սպառման միջև տարբերություն: Համախառն ազգային խնայողություններից հանելով հիմնական միջոցների սպառումը՝ ստանում ենք ազգային զուտ խնայողությունները:

Այստեղ թերևս կարելի է մի պահ շեղվել սույն ձեռնարկի առջև դրված բուն խնդիրներից՝ նշելու համար ԱՀՀ-ում տեղ գտած որոշակի անհամապատասխանություններ: Այսպես՝ պաշարների փոփոխությունը հանդիսանում է ներդրումների հիմնական երկու բաղադրիչներից մեկը, որոնք գրանցվում են ազգային հաշիվներում, սակայն դրանով չի սահմանափակվում ներդրումների բոլոր տարատեսակները, քանի որ իրականում, տնտեսագիտական իմաստով ներդրումներ են համարվում երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարված ծախսումները, որոնք ավելացնում են տնտեսության արտադրական հնարավորությունները: Այնպիսի սպառողական ապրանքներն ինչպիսիք են ավտոմեքենաները, սառնարանները, լվացքի մեքենաները և այլն, որոնք բավարարում են ներդրումների սահմանմանը ներկայացվող պահանջներին և նրանց վրա կատարված ծախսումները պետք համարվեն ներդրումային ծախսումներ: Սակայն, որպես կանոն, ազգային հաշիվներում դրանք հաշվառվում են որպես սպառողական ապրանքներ: Հարստության այնպիսի տարատեսակները, որոնք չեն վերարտադրվում և ժամանակի ընթացքում սպառվում են (հանքանյութեր, ջրային ռեսուրսներ) տնտեսագիտական իմաստով պետք է համարվեն ներդրումներ բացասական նշանով,

սակայն այդ հանգամանքը նույնպես հաշվի չի առնվում ազգային հաշիվներում:

Պաշտոնական վիճակագրության մեջ չեն հաշվառվում բազմապիսի ոչ նյութական կապիտալի տարատեսակներ, որոնք պետք է որ ավելացվեն հիմնական կապիտալ հոդվածում: Բարձր որակավորում ունեցող աշխատուժն իրենից ներկայացնում է «մարդկային կապիտալ», քանի որ այն բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը: Բազմաթիվ գիտական աշխատուժյուններում ներդրումների տնտեսական արդյունավետությունն ուղղակիորեն կապվում է մարդկային կապիտալի հետ: Բայց և այնպես, ինչպես երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարված ծախսերը, այնպես էլ ներդրումները, որոնք կատարվում են մասնագետների որակավորումը բարձրացնելու ուղղությամբ ազգային հաշիվներում հաշվառվում են որպես սպառողական ծախսեր և ոչ թե ներդրումներ: Գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերը նույնպես ներդրումների տարատեսակ են՝ կատարված ոչ նյութական միջոցներում, քանի որ կատարելագործված տեխնոլոգիաները կարելի է դիտարկել որպես հիմնական միջոցների մաս:

Վերը թվարկված պատճառներից ելնելով կարելի է պնդել, որ տնտեսությունում ներդրումային ծախսերը, որպես կանոն, զուտ տնտեսագիտական տեսանկյունից զգալիորեն ցածր են, իսկ սպառողական ծախսերը համապատասխանաբար բարձր են գնահատված: Եթե հաշվառվի երկարաժամկետ օգտագործման նպատակով սպառողական ապրանքները, գիտական հետազոտությունների և մշակումների, կրթության միջոցով որակավորման բարձրացմանն ուղղված, ինչպես նաև առողջապահության վրա կատարված ծախսերը, ապա ներդրումային ծախսերը ՀՆԱ-ի կառուցվածքում կարող են բարձրանալ ավելի քան երկու անգամ⁵:

4.1.6. Կապիտալի հետ գործառնությունների հաշիվ

Մինչ այժմ ներկայացված հաշիվները (արտադրության հաշիվ, եկամուտների ձևավորման հաշիվ, սկզբնական եկամուտների բաշխման հաշիվ, եկամուտների երկրորդական բաշխման հաշիվ և եկամուտների օգտագործման

⁵ Այս և համանման եզրակացությունները հեղինակների կարծիքն են արտահայտում և պարտադիր չէ, որ համընկնեն ՀՀ ԱՎԾ պաշտոնական դիրքորոշման հետ:

Հաշիվ) ԱՀՀ-ում դասակարգվում են որպես ընթացիկ Հաշիվներ, քանզի այն բոլորն, ինչ արտացոլվում է դրանցում, վերաբերում է Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվող գործառնություններին:

Կապիտալի հետ գործառնությունների Հաշիվը (կապիտալ ծախսերի Հաշիվ) նախատեսված է հիմնական և շրջանառու միջոցների, ոչ նյութական և ֆինանսական ակտիվների, ինչպես նաև դրա ֆինանսավորման աղբյուրների իրական կուտակման գործընթացը բնութագրելու համար: Այդ Հաշվում արտացոլվում է ինստիտուցիոնալ ռեզիդենտ - միավորների կողմից ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների արժեքը կամ դրանց դուրս գրումը, ինչպես նաև ցույց է տրվում խնայողությունների և տրանսֆերտների Հաշվին սեփական կապիտալի գուտ արժեքի փոփոխությունը:

ԱՀՀ-ում ակտիվները դասակարգվում են ` ֆինանսականի և ոչ ֆինանսականի, արտադրականի և ոչ արտադրականի, նյութականի և ոչ նյութականի:

Հիմնական կապիտալ են հանդիսանում արտադրական նյութերը և ոչ նյութական ակտիվները. հիմնական կապիտալի նյութական մասը՝ արտադրության գործընթացում անընդհատ կամ բազմաթիվ անգամ մասնակցող և դրանց միջոցով պատրաստվող արտադրանքին կամ մատուցվող ծառայությունն իրենց արժեքը ըստ մաշվածքի աստիճանի մաս-մաս փոխանցող հիմնական միջոցները: Միևնույն ժամանակ հիմնական կապիտալին են վերաբերում մրգերի և կաթնամթերքի արտադրության նպատակով աճեցվող ծառերն ու բույսերը անասունները, ինչպես նաև այնպիսի ոչ նյութական ապրանքները, ինչպիսիք են ծրագրային ապահովումը և գեղարվեստական ստեղծագործությունների բնօրինակները:

Հիմնական միջոցները ընդգրկում են հետևյալ նյութական ակտիվները՝

- շենքեր և շինություններ,
- մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ,
- տոհմային անասուններ, խաղողի այգիներ և այլ տնկարկներ, որոնք օգտագործվում են բազմաթիվ անգամ արտադրանք ստանալու նպատակով:

Ոչ նյութական հիմնական միջոցներն ընդգրկում են

- ծախսեր երկրաբանա-հետախուզական աշխատանքների վրա,
- ծախսեր համակարգիչների ծրագրային ապահովման և տվյալների բազաների վրա,
- գրականության և գեղարվեստական ստեղծագործությունների բնօրինակներ, ֆիլմեր, ձայնագրություններ, ձեռագրեր և այլն, որոնք հանդիսանում են դրանց տպագրանակի հիմք:

Նյութական շրջանառու միջոցների պաշարներն ընդգրկում են տնտեսավարող միավորների մոտ տվյալ պահին առկա բոլոր ապրանքները, որոնք չեն ընդգրկվել հիմնական կապիտալի համախառն կուտակման մեջ: Դրանք ընդգրկում են հետևյալ տեսակի ակտիվները՝

- արտադրական պահուստներ,
- անավարտ արտադրություն,
- պատրաստի արտադրանք,
- վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ,
- պետական նյութական պահուստներ:

Արժեքներն ընդգրկում են թանկարժեք մետաղները և քարերը, հնաոճ իրերը, հավաքածուները և գեղարվեստի այլ ստեղծագործությունները: Դրանք, որպես կանոն, պահվում են որպես խնայողության միջոց: Այս դեպքում ենթադրվում է, որ դրանց իրական արժեքը (արժեքը գների ընդհանուր մակարդակի նկատմամբ) ժամանակի ընթացքում չի փոքրանում:

Ամբողջ տնտեսության համար կապիտալ հաշվի ռեսուրսային մասի հիմնական ցուցանիշը՝ ազգային խնայողությունները տեղափոխվում է նախորդ՝ եկամուտների օգտագործման հաշվից: Այս ցուցանիշը տնօրինվող եկամուտների այն մասն է, որը մնացել է վերջնական սպառումից հետո:

Օգտագործում	Ռեսուրսներ
<p>Հիմնական միջոցների համախառն կուտակում</p> <p>Նյութական շրջանառու միջոցների պահուստների փոփոխություն</p> <p>Կապիտալ տրանսֆերտներ՝ վճարված «այլ աշխարհին»</p>	<p>Համախառն ազգային խնայողություններ</p> <p>Կապիտալ տրանսֆերտներ՝ ստացված «արտերկրից»</p>

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. Կապիտալ գործառնությունների հաշիվը

Հաշվի ռեսուրսային մասում բացի «խնայողությունների» ցուցանիշից կա նաև «արտերկրից» ստացված կապիտալ տրանսֆերտների ցուցանիշը. որը ստացվում է դրանց հատկացողների կապիտալից կամ խնայողություններից համախառն կուտակման կամ երկարաժամկետ բնույթի ծախսերի (ոչ նյութական կամ ֆինանսական ակտիվների ձեռք բերման համար) ֆինանսավորման նպատակով:

Ամբողջ տնտեսության մակարդակով կապիտալ ծախսերի ռեսուրսային մասում արտացոլվում են միայն այլ երկրներից տնտեսավարող ռեզիդենտ միավորներին հատկացվող կապիտալ տրանսֆերտները, օրինակ՝ միջազգային կազմակերպությունների համար շենքերի և այլ օբյեկտների շինարարության համար հատկացվող սուբսիդիաներ, ինչպես նաև կապիտալ բնույթի չփոխհատուցվող հատկացումներ և նվերներ, այսինքն հիմնական միջոցներին վերաբերող, կապիտալից հարկերի մուտքեր, ոչ ռեզիդենտների կողմից նվիրատվություններ, ժառանգություն և այլն:

Նյութական շրջանառու միջոցների պաշարները ընդգրկում են տնտեսավարող միավորների մոտ տվյալ պահին առկա ողջ արտադրանքը, որը չի ընդգրկվում հիմնական միջոցների համախառն կուտակման մեջ: Նյութական շրջանառու միջոցների պաշարներում ընդգրկվում են.

- արդյունաբերական արտադրանքի պաշարներ (հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, վառելիք և պատրաստի արտադրանք),
- հավաքված բերքից գյուղատնտեսական արտադրանքի պաշարներ,
- պետական նյութական ռեզերվների պաշարներ:

Այս հաշվի հաշվեկշռող հոդվածը՝ «զուտ վարկավորումը» կամ «զուտ փոխառությունը» ցույց է տալիս ամբողջ տնտեսության գործունեության արդյունքը: Եթե այն դրական մեծություն է, ապա ցույց է տալիս, թե որքան ռեսուրս է տրամադրել տվյալ երկիրը արտերկիր և հակառակը:

Նախորդ օրինակների և ներքոհիշյալ տվյալների հիման վրա կառուցել կապիտալ հաշիվ ոչ ֆինանսական տնտեսական հատվածի համար.

Կապիտալ շինարարության ծախսեր -30

Սարքավորումների ձեռք բերում - 50

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական պաշարները - 100

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին պաշարները - 120

Պետական բյուջեից ստացված կապիտալ տրանսֆերտներ - 80

Լուծում:

Հիմնական կապիտալի համախառը կուտակումները կլինեն՝

կապիտալ շինարարության ծախսեր + սարքավորումների ձեռք բերում= 50+30= 80

նյութական շրջանառու միջոցների փոփոխությունը կհաշվարկվի հետևյալ գումարելիներով՝

արտադրական պաշարների փոփոխություն (120-100) + անավարտ արտադրության փոփոխություն (2) + պատրաստի ապրանքների պաշարի փոփոխություն (20) = 20+2+20=42

Այսպիսով համախառը կուտակման ընդհանուր մեծությունը կլինի

80+42=122

Կապիտալ հաշվի հաշվեկշռող հոդվածը կլինի.

Համախառը խնայողություններ + ստացված և փոխառված կապիտալ տրանսֆերտների սալդո – հիմնական կապիտալի համախառը կուտակում + նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն = 142 + 80 – 80 –42=100

Ակտիվների փոփոխություն

Պասիվների փոփոխություն

համախառը կուտակումներ հիմնական միջոցներում 80
նյութական շրջանառու միջոցների փոփոխություն 42
գուտ վարկավորում 100

Համախառը խնայողություններ 142
ստացված կապիտալ տրանսֆերտներ 80

Ֆինանսական հաշիվն արտացոլում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ ինստիտուցիոնալ միավորների գործառնությունները, որոնք տեղի են ունենում ինչպես ռեզիդենտ միավորների միջև, այնպես էլ ռեզիդենտների և արտաքին հատվածի ոչ ռեզիդենտ միավորների միջև: Ֆինանսական հաշիվը մշակվում է ինչպես ողջ տնտեսությունից համար, այնպես էլ ըստ հատվածների:

Ինչպես արդեն նշվել է, տնտեսական գործառնությունները կարող են լինել ֆինանսական և ոչ ֆինանսական: Ֆինանսական են հանդիսանում բոլոր այն գործառնությունները, որոնք կապված են ֆինանսական ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման, այդ թվում նաև ֆինանսական պարտավորությունների առաջացման և վերացման հետ:

Ֆինանսական ակտիվների տարբերությունը ոչ ֆինանսական ակտիվներից կայանում է նրանում, որ դրանք, որպես կանոն, իրենցից ներկայացնում են պահանջներ այլ ինստիտուցիոնալ միավորների նկատմամբ, այսինքն դրանց հակադրվում են այլ միավորների ֆինանսական պարտավորությունները: Այդ միավորներից մեկը հանդիսանում է վարկատու, մյուսը՝ վարկառու (պարտատեր):

Կապիտալի հետ գործառնությունների հաշվի հաշվեկշռային ցուցանիշ է հանդիսանում «զուտ վակավորում»/«զուտ փոխառություն» հոդվածը, որը հանդիսանում է կապող օղակ ֆինանսական և այլ հաշիվների միջև: Այլ խոսքերով, ֆինանսական հաշիվը թույլ է տալիս կապել ապրանքների և ծառայությունների արտադրությանը, եկամուտների ձևավորմանը, եկամուտների բաշխմանը, վերաբաշխմանը և օգտագործմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունը վերաբերող տնտեսությունից գործունեությունից արդյունքները ֆինանսական արդյունքների հետ: «Ձուտ վակավորում»/«զուտ փոխառություն» հաշվեկշռող հոդվածը կապիտալի հետ գործառնությունների հաշվից փոխադրվում է ֆինանսական հակառակ նշանով: Այս հաշիվը հանդիսանում է կուտակային, քանի որ այն ցույց է տալիս հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած ակտիվների և պասիվների փոփոխությունը: Այն կապող օղակի դեր է տանում հաշվեկշռային ակտիվների և պասիվների ժամանակաշրջանի սկզբնական և վերջնական վիճակի միջև: Այս հաշիվը ցույց է տալիս ֆինանսական միջոցների վերաբաշխումը տնտեսությունից վարկառու և վարկատու

Հատվածների միջև: Սակայն այն չի բացահայտում, թե ով ում ֆինանսավորեց: Պարզաբանելու համար այդ հարցը՝ անհրաժեշտ կլինի կառուցել ֆինանսական հոսքերի նոր առավել մանրամասնեցված հաշիվ:

Ֆինանսական ակտիվների դասակարգում: Ֆինանսական հաշվում առանձնանում են ֆինանսական ակտիվների հետևյալ հիմնական կատեգորիաները՝

- մոնետար ոսկի և փոխառությունների հատուկ իրավունքներ.
- կանխիկ դրամ և դեպոզիտներ.
- արժեթղթեր՝ բացառությամբ բաժնետոմսերը.
- փոխառություններ.
- բաժնետոմսեր և կապիտալում մասնակցության այլ տեսակի շահաբաժիններ.
- ապահովագրական տեխնիկական պահուստներ.
- վարկատուների և վարկառուների այլ հաշիվներ:

ակտիվների փոփոխություն	գործառնություններ և հաշվեկշռող հոդվածներ	պասիվների փոփոխություն
	<p>Ջուտ վարկավորում/+/ զուտ փոխառություն/-/ մոնետար ոսկի և փոխառության հատուկ իրավունքներ.</p> <p>կանխիկ դրամ և դեպոզիտներ</p> <p>արժեթղթեր՝ բացառությամբ բաժնետոմսերը.</p> <p>փոխառություններ.</p> <p>բաժնետոմսեր և կապիտալում մասնակցության այլ տեսակի շահաբաժիններ.</p> <p>ապահովագրական տեխնիկական ռեզերվներ.</p> <p>վարկատուների և վարկառուների այլ հաշիվներ:</p>	

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. Ֆինանսական հաշիվ

Նշենք նաև, որ ֆինանսական հաշիվը Հայաստանի Հանրապետության համար առայժմ հաշվարկված չէ:

5 Ազգային հաշիվները մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռության շրջանակներում

Ազգային հաշիվները հասարակութային տարբեր անդամներին արժեքավոր տեղեկություն են տալիս տնտեսութային մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին և վիճակագրական բազա նախապատրաստում կանխատեսումներ կատարելու համար: Այլ կերպ՝ ազգային հաշիվները տեղակատվություն են պարունակում տնտեսավարող սուբյեկտների՝ նախկինում ընդունած որոշումների մասին, ինչպես նաև արտացոլում են տնտեսական կապերի դինամիկան:

Ազգային հաշիվները կազմվում են՝ ելնելով դրանց նկատմամբ ձևավորված պահանջարկից: Եթե խմբավորենք այդ պահանջարկ ներկայացնողներին, կունենաք հետևյալ պատկերը՝

- մակրոմակարդակում՝ պետական քաղաքականություն մշակողներ և վերլուծողներ, ֆինանսական քաղաքականություն մշակողներ, արտերկրյա տնտեսավարող սուբյեկտներ,
- միկրոմակարդակում՝ ձեռնարկատերեր, ամենատարբեր բնույթի և ուղղվածության տնտեսավարող սուբյեկտների մարքեթինգային ու հետազոտական ծառայություններ և այլն:

Ազգային հաշիվների համակարգը հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել մակրոտնտեսագիտության և ազգային հաշվետարության միջև: Վերը քննարկված հարաբերությունների հիմնական կրողները տնտեսության մակրոմակարդակում գործող ինստիտուցիոնալ միավորներն են, մասնավորապես, պետական կառավարման համակարգը, ֆինանսական ինստիտուտները, տնային տնտեսությունները և արտաքին հատվածի տնտեսական միավորները: Այսինքն, ազգային հաշիվների գործնական օգտագործման համար անհրաժեշտ է պատկերացում կազմել վերը նշված ինստիտուցիոնալ միավորների գործառնությունների ընդգրկման չրջանակի, առանձին հատվածների գործունեությունը արտացոլող ցուցանիշների, աղյուսակների, հաշվեկշիռների շուրջ: Ելնելով այս հանգամանքից սույն ձեռնարկում կքննարկվեն նաև տնտեսության յուրաքանչյուր հատվածի ընդգրկման չրջանակները, հիմնական

գործառույթները, նրանց գործունեությունն ամփոփող հաշիվների ընդհանուր նկարագիրը, մեթոդաբանությունն ու առանձնահատկությունները:

Մասնավորապես, քննության կառնվին պետական կառավարման, ֆինանսական, արտաքին հատվածների առանձնահատկությունները, դրանց փոխկապակցվածությունն ու դերը մակրոտնտեսական ընդհանուր հավասարակշռության ապահովման գործընթացում: Նյութի մատչելիությունն ապահովելու նպատակով համապատասխան մասերում կբացատրվեն նաև առանձին մարկորտնտեսական հասկացություններ ու կապեր, ինչը, թերևս, կնպաստի նկարագրվող երևույթների փոխադարձ կապի ու պայմանավորվածության բացահայտմանը:

5.1. Պետական կառավարման մարմիններ

5.1.1. Հիմնական գործառույթը

Յուրաքանչյուր տնտեսության մեջ պետական կառավարման մարմինների դերը տարբեր է և հիմնականում պայմանավորված է պետության կողմից մյուս տնտեսավարող գործակալներին մատուցվող ծառայությունների յուրահատկությամբ: Պետությունը կարող է վերապահված լինել տնտեսական որոշումներ ընդունելու դեր ոչ միայն հասարակական ծառայությունների մատուցման բնագավառում, այլ նաև ընդհանրապես նյութական և ոչ նյութական բարիքների արտադրության և բաշխման ժամանակ: Չքննարկելով պետության տնտեսական միջամտության այս կամ այն աստիճանի առավելությունները և թերությունները՝ պարզապես կարելի է նշել, քանի դեռ պետության՝ որպես տնտեսական գործակալի, ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթաններն ավելի թույլ են, քան մասնավոր հատվածինը, պետությունը զբաղվում է հիմնականում հասարակական ծառայությունների մատուցմամբ: Միևնույն ժամանակ, պետք է նշել նաև, որ տնտեսական համակարգի արմատական փոփոխությունների ժամանակ պետությունը կարող են վերապահվել նաև լրացուցիչ գործառույթներ:

Ընդհանուր առմամբ պետական կառավարման մարմիններն իրականացնում են հետևյալ առանցքային գործառույթները՝

1. Շուկայական համակարգի զարգացմանն ու դրա գործունեությունն արդյունավետության բարձրացմանն ուղղված գործառույթներ

1.1. Շուկայական համակարգի արդյունավետ գործունեությանը նպաստող իրավական դաշտի ստեղծում. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունն ունի մենաշնորհ իրավական ակտերի ընդունման և դրանց պատշաճ կատարման ընթացքը վերահսկելու գործում՝ կարևորվում է պետության՝ որպես շուկայական տնտեսությանը հատուկ իրավական համակարգի ստեղծողի դերը:

1.2. Մրցակցության պաշտպանություն. Շուկայական տնտեսության գոյության և արդյունավետ գործունեության հիմք է ծառայում մրցակցությունը, քանի որ շուկայական տնտեսությունում մրցակցությամբ է պայմանավորված ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Մրցակցության պաշտպանության գործառույթը սերտորեն շահկապված է նախորդ գործառույթի՝ իրավական դաշտի ստեղծման հետ: Շուկայական տնտեսության գործունեության մեխանիզմի հիմնաքարը մրցակցությունն է և պետական կառավարման մարմիններն իրենց ընդունած նորմատիվ ակտերով նպաստում են մրցակցության ապահովմանը:

2. Շուկայական համակարգի գործունեությունն ուժեղացնող և զարգացնող գործառույթներ

2.1. Եկամուտների և հարստության վերաբաշխում. Այս գործառույթի իրականացման միջոցով պետական կառավարման մարմինները ձգտում են հավասար մեկնարկային պայմաններ ապահովել հասարակության բոլոր անդամների համար:

2.2. Ռեսուրսների հոսքերի անուղղակի կարգավորում. Պետական կառավարման մարմինները կարգավորում են նյութական և մարդկային ռեսուրսների հոսքերը տնտեսության ճյուղերի և ոլորտների միջև՝ որոշակի զարգացման ծրագրերին համապատասխան: Նման կարգավորումը հիմնականում կատարվում է օրենսդրական ճանապարհով, մասնավորապես՝ հարկային և նմանատիպ այլ արտոնությունների սահմանման միջոցով:

2.3. Տնտեսության կայունացում, այսինքն՝ տնտեսական կոնյունկտուրայի տատանումների հետևանքով առաջացող սղաճի և գործազրկության մակարդակի վերահսկում, ինչպես նաև տնտեսական աճի խթանում:


Պետք է նշել, որ պետական կառավարման արդյունավետությունը կարևոր է երկրի զարգացման համար: Պետական կառավարման արդյունավետության նախապայմանների շարքում կարելի է առանձնացնել պետական համակարգի թափանցելիությունը⁶, պետական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, մասնավոր հատվածի գործունեության տնտեսական և կարգավորիչ միջավայրերի կայունությունը և այլն:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է ասել, որ պետական հատվածի գլխավոր բնութագրիչներն են՝

⁶ Պետական համակարգի թափանցելիությունը սահմանվում է իբրև պետության կառուցվածքի և գործառույթների, հարկաբյուջետային քաղաքականության նպատակների, պետական հատվածի վիճակագրության և հարկաբյուջետային կանխատեսումների բաց և մատչելի լինելը՝ հասարակության համար:

- *օժտված է հարկադիր ուժ ցուցաբերելու ունակությամբ՝ ներառյալ հարկման և տնտեսական հարաբերությունների կարգավորման իրավասությունները,*
- *մշակում և իրագործում է որոշակի պետական քաղաքականություն,*
- *արտադրում է ապրանքներ և մատուցում է ոչ շուկայական ծառայություններ,*
- *կարող է իրականացնել ռեսուրսների բաշխում՝ հասարակության տարբեր խմբերի միջև,*
- *գործում է ոչ առևտրային հիմքերի վրա:*

Ինչպես հետևում է վերը նշվածից, ամբողջ տնտեսության և նրա առանձին հատվածների վրա պետությունը զգալի ազդեցություն է թողնում և նրա գործառնությունների թողած ազդեցությունը վերլուծելու համար, կարևոր է նախ պարզել, թե ինչ ենք հասկանում պետական հատված ասելով, այսինքն, կարողանալ տարանջատել պետական հատվածում ընդգրկված ինստիտուցիոնալ միավորները⁷: Պետական հատվածում ընդգրկված միավորներն, ըստ էության, կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի միջոցով՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. Տնտեսության սխեմատիկ կառուցվածքը

⁷ Այս բաժնում «պետական հատված» հասկացությունը չպետք է շփոթել ԱՀՀ-ի նույնանուն հասկացության հետ, քանի որ այստեղ դասակարգումը կատարված է ըստ սեփականության ձևի:

Ոչ ֆինանսական պետական հատվածն ընդգրկում է պետական կառավարման մարմիններ հատվածը և բոլոր պետական ոչ ֆինանսական հաստատությունները:

Ոչ դրամական պետական հատվածն ընդգրկում է ոչ ֆինանսական պետական հատվածը և բոլոր պետական ֆինանսական հաստատությունները՝ բացառությամբ կենտրոնական բանկի և այլ պետական բանկերի:

Պետական ոչ ֆինանսական հաստատություններն ընդգրկում են՝

պետության տնօրինության և/կամ վերահսկողության տակ գտնվող ձեռնարկությունները, որոնք

- հասարակությունը ապրանքների և ծառայությունների մեծածավալ վաճառք են իրականացնում,
- հանդիսանում են առևտրային կազմակերպություններ:

Պետական ոչ ֆինանսական հաստատությունները չեն ընդգրկվում պետական կառավարման մարմիններ հատվածում, քանի որ

- վերջիններս իրականացնում են գործառնություններ, որոնք հատուկ չեն պետական կառավարման մարմիններին,
- նրանք, ի տարբերություն պետական կառավարման մարմինների հատվածի, հետապնդում են այլ նպատակներ (չահույթի ստացում, ապրանքների և ծառայությունների արտադրություն):

Պետական ֆինանսական հաստատություններն են՝ պետության տնօրինության և/կամ վերահսկողության տակ գտնվող այն ֆինանսական հաստատությունները, որոնք՝

- ստանձնում են պարտավորություններ, շուկայում ձեռք են բերում ֆինանսական ակտիվներ, հանդես գալիս որպես ֆինանսական միջնորդ կամ մատուցում այլ ֆինանսական ծառայություններ, և
- կարող են իրականացնել դրամավարկային գործառույթներ:

Պետական ֆինանսական հաստատությունները նույնպես չեն ընդգրկվում պետական կառավարման մարմիններ հատվածում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15-ից երևում է, որ պետական հատվածում ընդգրկված են ինչպես ֆինանսական ինստիտուտներ, այնպես էլ առևտրային գործառույթներով օժտված միավորներ: Սակայն պետական հատվածի հիմնական գործառույթն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից: Ելնելով վերը նշվածից մենք հիմնականում կանդրադառնանք պետական կառավարման մարմիններին:

Փաստորեն պետական կառավարման մարմինները մատուցում են հասարակական ծառայություններ, և իրենց գործառնությունների իրականացման և հետապնդվող նպատակների ձեռքբերման համար հավաքագրում են ֆինանսական միջոցներ: Պետությունը կարող է հարկեր սահմանել, կամ արտասահմանյան երկրներից և միջազգային կազմակերպություններից շնորհներ ստանալ: Այն կարող է նաև իր կողմից հասարակությունը մատուցվող ապրանքների և ծառայությունների դիմաց վճարներ գանձել, ինչպես նաև ստանալ շահույթ կամ տոկոս՝ ներդրումներից: Վերջին միտքը հիմք է ծառայում պետական բյուջեի՝ որպես պետական կառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի և դրանց ֆինանսավորման աղբյուրները արտացոլող հաշվեկշռի ուսումնասիրման համար:

Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի կազմման, քննարկման, հաստատման և կատարման աշխատանքները կոչվում են բյուջետային գործընթաց և կանոնակարգվում են օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով: Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքերի զարգացման ծրագրերին համապատասխան: Տվյալ տարվա բյուջետային գործընթացն սկսվում է բյուջետային համակարգի մասին օրենքով սահմանված ժամկետում և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատման օրը:

Ինչպես արդեն նշվել է, պետական բյուջեն կարելի է ներկայացնել որպես մի հաշվեկշիռ, որտեղ արտացոլված են պետական կառավարման մարմինների դրական և բացասական ֆինանսական հոսքերը՝ եկամուտները և ծախսերը, ինչպես նաև պակասուրդը (երբեմն նաև ավելցուկը): Պետական բյուջեն համառոտ ներկայացված է հավելված 2-ում:

Եթե պետությունն զբաղվում է հասարակական ծառայությունների մատուցմամբ, ապա որո՞նք են դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ստեղծման աղբյուրները: Այլ կերպ ասած, անհրաժեշտություն է առաջանում ծանոթանալ պետության եկամուտներ հասկացության հետ: Եկամուտներն ընդհանրապես փոխանակային և տրանսֆերտային (բազմակողմանի և միակողմանի) գործարքների ամբողջություն են, որի արդյունքում մեծանում է զուտ ակտիվների մեծությունը, որն էլ ինստիտուցիոնալ միավորի ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերությունն է: Պետական ֆինանսների վիճակագրության մեջ պետության եկամուտները ներկայացվում են հարկերի, սոցիալական ապահովագրության վճարումների (համախմբված բյուջեի համար), գրանտների և այլ եկամուտների միջոցով:

Պետական բյուջեի եկամտային մասի կարևորագույն բաղադրիչը հարկային եկամուտներն են: Հարկերը պետության կողմից իր կարիքները հոգալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կուտակելու նպատակով պարտադիր գանձվող դրամական միջոցներն են: Հարկերն իրենց հերթին դասակարգվում են ըստ հարկման բազայի (ավելացված արժեքի հարկ, շահութահարկ և այլն): Երկրորդ հիմնական բաղադրիչը տուրքերն են: Տուրքերը, հարկերի նման, ևս հարկադրաբար պետական բյուջե գանձվող վճարներ են, սակայն, ի տարբերություն հարկերի, այս դեպքում գանձումը կատարվում է որոշակի ծառայություններից օգտվելու դիմաց:

Ոչ հարկային եկամուտները հիմնականում ներառում են կապիտալի գործառնություններից եկամուտները, այսինքն պետական սեփականություն հանդիսացող ակտիվների կառավարումից ստացվող մուտքերից:

Պետական եկամուտների վերջին խումբը պաշտոնական տրանսֆերտներն են, որոնք ներառում են օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից անհատույց տրամադրված միջոցները:

Գործարքներ	Բնութագրիչներ
Հարկեր	պարտադիր անհատույց փոխանցումներ
Սոցիալական վճարներ	պարտադիր «հատուցվող» փոխանցումներ
Ոչ հարկային եկամուտներ	

<ul style="list-style-type: none"> • Սեփականությունից ստացված եկամուտներ 	առևտրային փոխանակում
<ul style="list-style-type: none"> • Ապրանքների և ծառայությունների վաճառք 	առևտրային փոխանակում
Պաշտոնական տրանսֆերտներ (շնորհներ)	կամավոր անհատույց փոխանցումներ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16. Եկամուտների հետ կապված գործարքների բնութագրիչներ

5.1.3. Ծախսեր

Պետական ֆինանսաների վիճակագրության համակարգում օգտագործվում է ծախսերի երկու դասակարգում՝ տնտեսագիտական և գործառնական: Ծախսերի տնտեսագիտական դասակարգումը հիմնված է գործարքների օբյեկտի վրա: Գործառնական դասակարգումը ցույց է տալիս այն նպատակը կամ գործառույթն, որի համար կատարվում են ծախսերը՝ առողջապահություն, կրթություն, պաշտպանություն և այլն: Տնտեսագիտական դասակարգման առաջին սկզբունքը գործարքների տարբերակումն է փոխանակային (երկկողմանի կամ բազմակողմանի) և տրանսֆերտային (միակողմանի): Փոխանակային գործարքների օրինակներ են աշխատավարձը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տրանսֆերտային են՝ գրանտները, սուբսիդիաները և այլն: Որտեղ՝

- *աշխատավարձ. պետական կառավարման համակարգում ընդգրկված աշխատողների աշխատավարձը, վճարվող սոցիալական վճարումները և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումները,*
- *ապրանքների և ծառայությունների ձեռքբերում. տնտեսության այլ հատվածներից ձեռքբերված ապրանքների և ծառայությունների արժեքը ճշգրտված՝ պաշարների փոփոխությամբ,*
- *տոկոսավճարներ. տնտեսության այլ հատվածներից, ներառյալ արտաքին հատվածը, փոխառնված միջոցների օգտագործման համար պետության կողմից այդ հատվածներին վճարումները,*
- *տրանսֆերտներ. մեկ ինստիտուցիոնալ միավորի կողմից մեկ այլ ինստիտուցիոնալ միավորին անհատույց կերպով*

տրամադրվող ապրանքներ, ծառայություններ և ակտիվներ:
Պետություն կողմից տրվող տրանսֆերտներն ընդգրկում են

- սոցիալական նպաստներ. պետության կողմից տնային տնտեսություններին տրվող վճարներ, ինչպիսիք են՝ գործազրկության, հիվանդության և ընտանեկան նպաստները,
- սուբսիդիաներ. պետության կողմից ձեռնարկություններին տրվող վճարներ, թողարկման մակարդակի կամ վաճառքի գների վրա ազդելու նպատակով,
- շնորհներ. ընթացիկ կամ կապիտալ նպատակներով պետության կողմից՝ պետական այլ միավորներին կամ դեպի արտասահման փոխանցվող դրամական, ապրանքային (ծառայությունների տեսքով) տրանսֆերտներ:
 - կապիտալ ծախսեր. ներառում են այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը,
 - զուտ վարկավորում. կառավարության կողմից տնտեսավարող այլ սուբյեկտներին տրվող վարկերի և դրանց մարումից ստացվող մուտքերի տարբերությունն է,
 - այլ ծախսեր:

5.1.4. Պակասուրդ.

Այն դեպքում, երբ ծախսերը գերազանցում են եկամուտների մակարդակը, առաջանում է պետական բյուջեի պակասուրդ, որը պետք է ֆինանսավորվի ներքին և արտաքին աղբյուրների հաշվին: Պակասուրդը ցույց է տալիս պետական հատվածի փոխառության պահանջը: Այն նաև պակասուրդի ամենահասկանալի և հաճախ կիրառելի չափն է, քանի որ ներառում է ֆինանսական ռեսուրսների գծով պետական հատվածի զուտ պահանջը: Պայմանական պակասուրդը հավասար է ընդհանուր եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների ու ընդհանուր ծախսերի և զուտ վարկավորման տարբերությանը:

Կարելի է ենթադրել, թե երկրի տնտեսության համար լավագույն տարբերակը առանց պակասուրդի բյուջեի առկայությունն է: Ճիշտ է

երկարաժամկետ հատվածում պետությունը պետք է աշխատի ունենալ հաշվեկշռված բյուջե, սակայն կարճաժամկետ հատվածում հաճախ անհրաժեշտություն է առաջանում ունենալ բյուջեի պակասուրդ, երբեմն էլ ավելցուկ: Հարցն այստեղ կայանում է ոչ թե պակասուրդին դրական կամ բացասական զնահատական տալու մեջ, այլ դրա՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի ուսումնասիրության և վերլուծության մեջ՝ հատկապես ազգային հաշիվների հետ կապի ենթատեքստում: Բյուջեի պակասուրդը ցույց է տալիս պետական հատվածի խնայողությունների և ներդրումների տարբերությունը: Ընդհանուր սահմանմամբ խնայողությունները համախառն տնօրինվող եկամտի և ընթացիկ ծախսերի տարբերությունն են: Այդ դեպքում պետական հատվածի համար կստանանք՝

$$\begin{aligned} & \text{Պետական հատվածի համախառն տնօրինվող եկամուտը} = \\ & \text{հարկային եկամուտներ} + \text{զուտ գործոնային եկամուտ (ոչ} \\ & \text{հարկային եկամուտներ – ներքին և արտաքին տոկոսավճարներ)} \\ & + \text{զուտ տրանսֆերտներ (ստացված պաշտոնական} \\ & \text{տրանսֆերտներ – վճարված տրանսֆերտներ)} \\ & \text{Պետական հատվածի խնայողությունները} = \text{համախառն} \\ & \text{տնօրինվող եկամուտ – պետական գնումներ (աշխատավարձ} + \\ & \text{ապրանքների և ծառայությունների ձեռքբերում)} \end{aligned}$$

Մյուս կողմից, հայտնի է որ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերությունը պակասուրդն է: Ակնհայտ է, որ՝

$$\begin{aligned} & \text{Պետական հատվածի խնայողություններ – Պետական} \\ & \text{ներդրումներ (կապիտալ ներդրումներ + զուտ վարկավորում)} = \\ & \text{Պակասուրդ} \end{aligned}$$

Միևնույն ժամանակ պետական հատվածի խնայողությունները հավասար են ընթացիկ եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությանը⁸, որն անվանում են ընթացիկ պակասուրդ (ընթացիկ հաշվի պակասուրդ՝ պետական հատվածի համար): Այն հաճախ օգտագործվում է որպես պետական խնայողությունների և, հետևաբար, տնտեսության ընդհանուր խնայողության մեջ պետության մասնակցության չափի միջոց:

Պակասուրդի ֆինանսավորումը ենթադրում է պարտքի մեծացում, և հանգեցնում է պարտքի սպասարկման անհրաժեշտության՝ վարկերի և

⁸ Գրանում կհամոզվեք դիտելով պետական խնայողությունների բանաձևը:

պակասուրդի ֆինանսավորման այլ գործիքների մարում՝ տոկոսավճարներով հանդերձ:

Առաջնային (անտոկոս) պակասուրդը չափում է ընթացիկ դիսկրեցիոն⁹ հարկաբյուջետային քաղաքականությունից ազդեցությունը՝ բացառելով տոկոսավճարները պակասուրդի մեծությունից: Պակասուրդի այս տեսակը ցույց է տալիս, թե որքանով են կառավարության ընթացիկ հարկաբյուջետային գործառնություններն ազդում կառավարության գուտ պարտքի վրա: Այն կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով՝

$$\text{Առաջնային պակասուրդ} = \text{Պակասուրդ} - \text{արտաքին և ներքին տոկոսավճարներ}$$

Գործառնական պակասուրդը կարելի է ներկայացնել որպես պակասուրդի և տոկոսավճարների սղաճային բաղադրիչի տարբերություն կամ, որը նույնն է, առաջնային պակասուրդի և տոկոսավճարների իրական բաղադրիչի գումար: Սղաճը նվազեցնում է պետական պարտքի չմարված մասի իրական արժեքը, թեև վարկատուները փոխհատուցում են այն ավելի բարձր անվանական տոկոսադրույքների միջոցով: Այս փոխհատուցումը հաճախ անվանում են «դրամավարկային ճշգրտում»: Գործառնական պակասուրդի գաղափարը լայնորեն տարածված է բարձր սղաճ և մեծ պետական պարտք ունեցող երկրներում, քանի որ այն չափում է, թե որքանով է սովյալ տարվա հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում պետական պարտքի իրական մեծությունից վրա: Գործառնական պակասուրդը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևերով՝

$$\text{Գործառնական պակասուրդ} = \text{Պակասուրդ} - \text{Տոկոսավճարների սղաճային բաղադրիչ,}$$

կամ

$$\text{Գործառնական պակասուրդ} = \text{Առաջնային պակասուրդ} + \text{Տոկոսավճարների իրական բաղադրիչ}$$

⁹ Լատիներեն Discreto՝ հաղթողի հայեցողություն, գործող ըստ հայեցողության

5.1.5. Պակասուրդի ֆինանսավորում.

Պետական բյուջեի պակասուրդի մակրոտնտեսական ազդեցությունը մեծ մասամբ կախված է դրա ֆինանսավորման ուղիներից: Գոյություն ունեն պակասուրդի ֆինանսավորման հետևյալ չորս աղբյուրները՝

- փոխառություններ կենտրոնական բանկից (պակասուրդի «մոնետարիզացիա»),
- փոխառություններ առևտրային բանկերից,
- փոխառություններ ներքին ոչ բանկային համակարգից,
- արտաքին փոխառություններ:

Ընդհանուր դեպքում, ֆինանսավորման յուրաքանչյուր տարատեսակը կապված է մակրոտնտեսական անհաշվեկշռվածության որոշակի ձևի հետ: Այսպես, օրինակ, կենտրոնական բանկից կառավարության ուղղակի վարկավորումը մեծացնում է դրամական առաջարկը, ինչն իր հետ բերում է սղաճ: Արտաքին փոխառությունները վատթարացնում են արտաքին պարտքի վիճակը, մեծացնում ընթացիկ հաշվի պակասուրդը: Մեծ ծավալի ներքին փոխառությունները մեծացնում են տոկոսադրույքների մակարդակը և արտամղում մասնավոր ներդրումները: Իսկ գործնականում պակասուրդի ֆինանսավորման այս այլընտրանքների և դրանց հետևանքների կապերը կարող են լինել ավելի բարդ:

Կառավարության փոխառությունները կենտրոնական բանկից մեծացնում են դրամական բազան: Գների ընթացիկ մակարդակի պայմաններում գոյություն ունեցող պահանջարկը գերազանցող դրամի առաջարկը բարձրացնում է գների ձևավորված մակարդակը: Ի տարբերություն կենտրոնական բանկից վերցված վարկերի, պետական բյուջեի պակասուրդը ծածկելու համար առևտրային բանկերից կատարված փոխառությունները ուղղակիորեն չեն բերում դրամական բազային փոփոխությանը: Սակայն, եթե կենտրոնական բանկը զուգահեռաբար լրացուցիչ ֆինանսավորում է առևտրային բանկերին, ապա նման փոխառությունը նույնանում է կենտրոնական բանկից վերցված վարկերի հետ: Իսկ եթե կենտրոնական բանկը չի փոփոխում դրամական բազայի մակարդակը, ապա առևտրային բանկերը ստիպված են լինում նվազեցնել մասնավոր հատվածի վարկավորումը՝ պետական հատվածին վարկավորելու համար: Այս երևույթը, որն անվանում են մասնավոր ներդրումների արտամղում, տեղի է ունենում հիմնականում

տոկոսադրույքների բարձրացման միջոցով: Պակասուրդի ֆինանսավորման ոչ բանկային եղանակի դեպքում ֆինանսավորումը կատարվում է պետական ներքին պարտավորությունների թողարկման միջոցով: Ոչ բանկային ֆինանսավորումը թույլ է տալիս կարճաժամկետ հատվածում ծածկել պակասուրդը՝ առանց մեծացնելու դրամական բազան կամ նվազեցնելու արտաքին պահուստները: Այդ իսկ պատճառով ոչ բանկային ֆինանսավորումը համարվում է պակասուրդի ֆինանսավորման արդյունավետ եղանակ, որը թույլ է տալիս խուսափել սղաճից և արտաքին ճգնաժամերից, սակայն դրա հաճախակի կիրառումն ունենում է իր բացասական հետևանքները: Առաջին՝ պակասուրդի ֆինանսավորումը պարտատոմսերի միջոցով ավելի շուտ կարող է հետաձգել սղաճը, եթե պետական պարտքի մակարդակը չլինի խիստ վերահսկելի: Երկրորդ՝ ինչպես բանկային, այնպես էլ ոչ բանկային ֆինանսավորումը արտամղող ազդեցություն է ունենում մասնավոր հատվածի վրա՝ ազդելով տոկոսադրույքների վրա: Սակայն տնտեսական աճը կաշկանդում է ոչ միայն տոկոսադրույքների բարձրացումը, այլ նաև այդ բարձր տոկոսադրույքներով տեղաբաշխված պարտատոմսերի հետագա սպասարկումը, փաստորեն, մեծացնում է հաջորդ տարիների պետական բյուջեի պակասուրդի մեծությունը:

Կառավարությունը կարող է պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորել արտաքին միջոցների հաշվին: Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին փոխառությունների հաշվին հանգեցնում է արտարժույթային միջոցների ներհոսք երկիր, որի արդյունքում արժեքավորվում է իրական փոխարժեքը՝ նվազեցնելով հայրենական արտադրության ապրանքների և ծառայությունների մրցունակությունը:

Եթե բյուջետային հաշիվները տարվում են կուտակային սկզբունքով, ապա ի հայտ է գալիս ֆինանսավորման մեկ այլ ձև՝ պարտքի կուտակում: Անցումային փուլում գտնվող մի շարք տնտեսություններում կառավարությունները մեծ պարտքեր են կուտակել, որի արդյունքում դրամարկղային սկզբունքով հաշվարկված պակասուրդը էականորեն ցածր է կուտակային սկզբունքով հաշվարկված պակասուրդից: Այն դեպքում, երբ կառավարությունը մարում է պարտքերը, կուտակային սկզբունքով հաշվարկված պակասուրդը փոքր է դառնում կանխիկ պակասուրդից: Հարկ է նշել, որ պարտքի կուտակումը պակասուրդի ֆինանսավորման հարկադրական միջոց է, որից անհրաժեշտ է խուսափել:

5.2. Ֆինանսական ինստիտուտներ

Տնտեսության ֆինանսական հատվածը բանկային համակարգի և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների ամբողջությունն է:

Ֆինանսական ինստիտուտներն այն հաստատություններն են, որոնք գործունեություն են ծավալում ֆինանսական շուկայում և հիմնականում իրականացնում են ֆինանսական գործառնություններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ձեռք բերումը: Ֆինանսական ինստիտուտների հիմնական գործառնությունը տարբեր տեսակի փոխառություններ տրամադրելու միջոցով տնտեսական գործակալների համար իրացվելի և «կեղծ» իրացվելի ակտիվների ստեղծումն ու պահպանումն է: Ընդհանուր առմամբ, ֆինանսական ինստիտուտները կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խմբում ընդգրկվում են այն ինստիտուտները, որոնք ստեղծում են տնտեսությանն անհրաժեշտ վճարելամիջոցները, կամ այլ կերպ ասած՝ «փող» ստեղծողներն են, իսկ երկրորդում՝ ոչ բանկային ֆինանսական ինստիտուտները:

Երկրի մասշտաբով ֆինանսական ինստիտուտները ներառում են՝

1. դրամավարկային կարգավորման մարմինները,
2. առևտրային բանկերը,
3. մասնագիտացված ֆինանսական ինստիտուտները.
 - 3.1. այլ բանկային ինստիտուտներ.
 - 3.1.1. ներդրումային բանկեր,
 - 3.1.2. ապահովագրական ընկերություններ,
 - 3.1.3. խնայողական հաստատություններ,
 - 3.1.4. այլ բանկային մասնագիտացված ֆինանսական ինստիտուտներ,
 - 3.2. ոչ բանկային ֆինանսական ինստիտուտներ.
 - 3.2.1. կենսաթոշակային հիմնադրամներ,
 - 3.2.2. ներդրումային ընկերություններ,
 - 3.2.3. այլ ոչ բանկային մասնագիտացված ֆինանսական ինստիտուտներ:

Դրամավարկային կարգավորման մարմինները և առևտրային բանկերը կազմում են երկրի դրամական համակարգը, վերջինիս և այլ բանկային ինստիտուտների միացությունը կազմում է բանկային համակարգը, իսկ այլ բանկային և ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների միացությունը՝ ոչ դրամական ֆինանսական ինստիտուտները: Այսպիսով՝ կարելի է ասել, որ

տնտեսությունների ֆինանսական հատվածը դրամական համակարգի և ոչ դրամական ֆինանսական ինստիտուտների ամբողջությունն է:

Դրամական վիճակագրությունը հիմնականում ուսումնասիրում է տնտեսությունում փողի առաջարկի բնույթը, այն ձևավորող բանկային հաստատությունների գործունեությունը:

Ինչպես հայտնի է, փողի առաջարկի ձևավորողը հանդիսանում է բանկային համակարգը, որը, երկաստիճանության սկզբունքի պայմաններում իր մեջ ներառում է կենտրոնական բանկը՝ որպես դրամավարկային կարգավորման մարմին, և առևտրային բանկերի համակարգը: Այս հաստատությունների հաշվապահական հաշվեկշիռներն էլ հենց հանդիսանում են փողի առաջարկի բնույթի ուսումնասիրման աղբյուրները:

Տարբերակվում է փողի առաջարկի կամ դրամական ագրեգատների 2 մակարդակ՝ փողի «նեղ» իմաստով առաջարկ կամ դրամական բազա, և փողի «լայն» իմաստով առաջարկ կամ դրամական զանգված:

Ընդհանրապես, փողը հանդիսանում է պարտավորություն, կանխիկ փողը հանդիսանում է կենտրոնական բանկի պարտավորությունը, ավանդները, որոնք նույնպես դիտարկվում են որպես փող (կեղծ փող), հանդիսանում են առևտրային բանկերի պարտավորությունը:

Բայց, միևնույն ժամանակ, բանկային համակարգի ոչ բոլոր պարտավորությունները կարելի է դիտարկել որպես փող կամ փողային պարտավորություն: Փողային պարտավորություն են հանդիսանում այն պարտավորությունները, որոնք կարող են կատարել փողին բնորոշ գործառույթները: Այսինքն՝ անհրաժեշտություն է առաջանում կենտրոնական բանկի կամ առևտրային բանկերի հաշվեկշռի պասիվից առանձնացնել այն հաշիվները, որոնք իրենց բնույթով բնութագրվում են որպես փողային պարտավորություններ:

5.2.1. Դրամական բազա

Դրամական բազան հաշվարկվում է կենտրոնական բանկի հաշվեկշռային ցուցանիշներից:

Կենտրոնական բանկի հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.

ԱԿՏԻՎՆԵՐ	ՊԱՍԻՎՆԵՐ
Արտաքին ակտիվներ	Դրամական բազա
Պահանջներ կենտրոնական կառավարության նկատմամբ	Արտաքին պարտավորություններ
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	Կենտրոնական կառավարության պահանջներ
Այլ ակտիվներ	Այլ հաշիվներ

Կենտրոնական բանկի ակտիվները կարելի է դասակարգել.

ա) Միջազգային պահուստներ (արտաքին ակտիվներ), որոնք ներառում են պետութային SDR¹⁰-ով միջոցները, դիրքը արժույթի միջազգային հիմնադրամում (ԱՄՆ, ռուս և արտասահմանյան փոխարկելի արտարժույթով պաշարները,

բ) պահանջներ կենտրոնական կառավարության նկատմամբ,

գ) պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ,

դ) այլ ակտիվներ¹¹ .:

Պասիվային հիմնական տարրը պահուստային փողն է (դրամական բազան): Այն կարող է դիտվել նաև որպես դրամավարկային կարգավորման մարմինների զուտ ակտիվների հանրագումար: Պահուստային փողը ներառում է՝

- 1. Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը,*
- 2. Բանկերի պահուստները (առևտրային բանկերի կանխիկ, գումարած՝ դրամավարկային կարգավորման մարմիններում նրանց պարտադիր, ավելցուկային, այդ թվում արտարժույթային պահուստներ):*
- 3. Տնտեսութային մյուս ճյուղերի ցպահանջ հաշիվները (բացի կենտրոնական կառավարության և բանկերի հաշիվներից):*

Պասիվային հաջորդ հոդվածն արտաքին պարտավորություններն են, որոնք ներառում են ոչ ռեզիդենտների նկատմամբ օտարերկրյա կամ ազգային արտարժույթով բոլոր պարտավորությունները:

¹⁰ Special Drawing Rights (անգլ.)՝ փոխառնելիության հատուկ իրավունք

¹¹ Ներառում են միջազգային ստանդարտներին չհամապատասխանող ոսկին, օտարերկրյա բանկերում դրամավարկային կարգավորման մարմինների դեպոզիտների, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի (արտարժույթով և ազգային դրամով), ԱՄՆ-ում ունեցած միջոցների, պետական արժեթղթերի և կառավարությանը տրամադրված վարկի, դրամավարկային կարգավորման մարմինների առևտրային բանկերում ունեցած դեպոզիտների, բանկերին տրամադրված վարկերի, թղթակցային հաշիվների, ռեպո համաձայնագրերի համար հաշվարկված տոկոսները, հիմնական միջոցները և այլն

Այլ պատիվներում ներառվում են դրամավարկային կարգավորման մարմինների կողմից ներգրաված ղեկավարների և վարկերի, հակադարձ ռեպո գործարքների համար հաշվարկված տոկոսավճարները, դրամավարկային կարգավորման մարմինների կապիտալ հաշիվը, էմիսիայից եկամուտները, ինչպես նաև պահուստային փողի տեսքով չդիտարկվող այլ պարտավորություններ:

Կենտրոնական բանկի համար փողային պարտավորություններ են դիտարկվում միայն.

- կանխիկ դրամը ԿԲ-ից դուրս,
- առևտրային բանկերի թղթակցային հաշիվները կենտրոնական բանկում (որոնք հիմնականում պարտադիր պահուստավորման նպատակով են),
- այլ հաշիվները:

Փողային պարտավորություններ չեն դիտարկվում ոչ ռեզիդենտների հաշիվները, ղեկավարները և վարկերը, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը:

Դրամային վիճակագրությունը տալիս է ոչ միայն փողային պարտավորությունների նկարագիրը, այլ նաև այդ պարտավորությունների գործառնական նկարագրությունը: ԿԲ գործառնությունները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ.

- կառավարության հետ կապված գործառնություններ (վարկերի տրամադրում և մարում, ավանդների ընդունում, երկրորդային շուկայում պետական արժեթղթերի գնում),
- բանկերին վարկերի (այլ պահանջների) տրամադրում և մարում,
- արտարժույթի գնման և վաճառքի գործառնություններ,
- ԿԲ գործառնական և վարչական խնդիրների հետ կապված գործառնություններ:

Որպեսզի բացահայտենք, թե կառավարությանը վարկ տրամադրելով փողի առաջարկը ինչքանով է մեծացել, պետք է հաշվարկենք կառավարության նկատմամբ գուտ պահանջների փոփոխությունը:

Նույն կերպ, որպեսզի տեսնենք, թե արտարժույթային գործառնություններով ինչքան դրամական բազա է ստեղծվել, պետք է կենտրոնական բանկի տրամադրություն տակ գտնվող արտարժույթային ամբողջ միջոցներից (Համախառն Արտաքին Պահուստներ) հանենք ոչ ռեզիդենտներից ստացված վարկերը և ավանդները՝ արդյունքում ստանալով գուտ արտահայտություն մտնեսությունից գնված կամ վաճառված արտարժույթի քանակությունը (Զուտ Արտաքին Ակտիվներ) և այդ չափով էլ գնահատենք դրամական բազայի ձևավորման մեջ արտարժույթային գործառնությունների դերը: Եթե ԶԱԱ-ի մեծությունը տվյալ պահին դրական է, ապա դա նշանակում է, որ ԿԲ-ը տնտեսությունից արտարժույթ գնելով մեծացրել է փողի առաջարկը և հակառակը:

Բանկերի հետ փոխհարաբերությունների ժամանակ, բանկերի պարտավորություններ են դիտարկվում կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերին տրամադրված վարկերի բոլոր տեսակները: Բայց այստեղ պետք է հիշել, որ առևտրային բանկերի գուտ պարտավորություններ ստանալու համար բանկերի թղթակցային հաշիվները (պարտադիր պահուստավորումը) «գուտ» չեն արվում բանկերին տրամադրված վարկերի հետ, քանի որ, ինչպես նշվեց վերևում, բանկերի թղթակցային հաշիվները հանդիսանում են կենտրոնական բանկի համար փողային պարտավորություն և ենթակա չեն հետագա տեղաշարժման:

Կենտրոնական բանկը կարող է ազդել փողի առաջարկի վրա, նաև իր այն գործառնություններով, որոնք կապված են ծախսեր և եկամուտներ հաշիվների հետ: Օրինակ՝ աշխատավարձը, կապիտալ ծախսերը և այլ գործառնական ու վարչական ծախսերը մեծացնում են դրամական բազան, իսկ տրամադրված վարկերի դիմաց ստացված տոկոսները (բանկերից և կառավարությունից), ընդհակառակը, փոքրացնում են: Այդ բոլոր գործառնությունները արտացոլվում են այլ հաշիվներ հոդվածում: Դրանց ազդեցությունը սովորաբար փոքր է լինում և այդ պատճառով էլ այդ հաշիվներով ԿԲ գործառնությունները չեն հանդիսանում քաղաքականության տարր:

Այսպիսով, դրամական բազայի ձևավորման ուղղություններն իրենց մեջ ներառում են ԶԱԱ և ԶՆԱ-երը: Վերջինս, ինչպես նշվեց, բաղկացած է կառավարության, բանկերի և այլ հաշիվների գծով փոխհարաբերությունների հանրագումարից:

Դրամական բազայի վերջնական տեսքը ստանալու համար կենտրոնական բանկի հաշվեկշռի պասիվում թողնում ենք միայն դրամային

պարտավորությունները, իսկ մնացած հաշիվները տեղափոխում ենք հաշվեկշռի ակտիվային մաս, որից հետո դրանք դարձնում ենք «զուտ» ակտիվային համապատասխան հաշիվների հետ. մասնավորապես, ա/ կենտրոնական բանկի արտարժույթային համախառն պարտավորությունները համախառն ակտիվների հետ՝ տարբերությունը գրելով որպես ԶԱԱ, բ/ կառավարության դեպոզիտները կառավարությանն տրամադրված վարկերի և կենտրոնական բանկում առկա պետական արժեթղթերի հանրագումարի հետ՝ տարբերությունը գրելով, որպես ԶՆԱ-ի մաս կազմող կառավարության զուտ պարտավորություններ կենտրոնական բանկի նկատմամբ:

Այսպիսով դրամական բազան կրնդունի հետևյալ ամբողջական տեսքը՝

Դրամական բազա (ձևավորման ուղղությունները)	Դրամական բազա
ԶԱԱ	
ԶՆԱ	կանխիկ դրամը ԿԲ-ից դուրս
<ul style="list-style-type: none"> կառավարություն 	բանկերի թղթակցային հաշիվներ
<ul style="list-style-type: none"> բանկեր 	այլ հաշիվներ
<ul style="list-style-type: none"> զուտ այլ ակտիվներ 	

Դրամական բազան անվանում են ռեզերվային փող, քանի որ կանխիկը հանդիսանում է տնտեսության ռեզերվը, իսկ թղթակցային հաշիվները հանդիսանում են բանկային համակարգի պահուստները կենտրոնական բանկում: Ամփոփելով նշենք, որ դրամական բազան հանդիսանում է բացարձակապես կենտրոնական բանկի հաշվեկշռային ցուցանիշներով կազմվող ազրեզատ, հետևաբար, դրամական բազայի մեծությունը որոշվում է կենտրոնական բանկի գործառնություններով, այն է, դրամավարկային գործիքներով:

5.2.2. Դրամական գանգված

Դրամական զանգվածն իրենից ներկայացնում է լայն իմաստով փողի առաջարկը, որը ստացվում է ամբողջ բանկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշներից: Ամբողջ բանկային համակարգի հաշվեկշիռը ստանալու համար անհրաժեշտ է համախմբել դրամավարկային կարգավորման մարմինների և առևտրային բանկերի հաշվեկշիռները:

Առևտրային բանկերը տնտեսությունն անհրաժեշտ փողի (կեղծ փողի) հիմնական ստեղծողներն են, քանի որ նրանք, որոշելով իրենց պահուստների և վարկային ներդրումների ծավալները, մեծ ազդեցություն են ունենում փողի առաջարկի վրա: Այս հատկությամբ էլ առևտրային բանկերը տարբերվում են այլ ֆինանսական ինստիտուտներից:

Առևտրային բանկերի հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.

ԱԿՏԻՎՆԵՐ	ՊԱՍԻՎՆԵՐ
Պահուստներ	Ցպահանջ դեպոզիտներ
Այլ պահանջներ կենտրոնական բանկի նկատմամբ	Ժամկետային և խնայողական դեպոզիտներ
Արտաքին ակտիվներ	Արտաքին պասիվներ
Պահանջներ կենտրոնական կառավարության նկատմամբ	Կենտրոնական բանկի պահանջներ
Պահանջներ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ	Կենտրոնական կառավարության պահանջներ
Պահանջներ մասնավոր հատվածի նկատմամբ	Պետական կենսաթոշակային հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների պահանջներ
Պահանջներ ոչ դրամական ֆինանսական ինստիտուտների նկատմամբ	Ոչ դրամական ֆինանսական ինստիտուտների պահանջներ
Այլ ակտիվներ	Այլ հաշիվներ

Առևտրային բանկերի պահուստները նրանց իրացվելի ակտիվներն են, որոնց մեջ ընդգրկվում են արժույթային պաշարները և դեպոզիտները դրամավարկային կարգավորման մարմիններում, այսինքն՝ պահուստների մեջ մտնում են կանխիկ փողը՝ դրամարկղում, ինչպես նաև նրանց պարտադիր և ավելցուկային հաշիվները՝ կենտրոնական բանկում:

Արտաքին ակտիվները կարող են լինել ինչպես կանխիկ, այնպես էլ կեղծ դրամական ձևով: Այստեղ ներառվում են այնպիսի հաշիվներ, ինչպիսիք են՝ դեպոզիտներն արտասահմանյան բանկերում, ոչ ռեզիդենտների թողարկած արժեթղթերը և նրանց հատկացված վարկերը:

Կենտրոնական կառավարության նկատմամբ պահանջները սովորաբար ներառում են կառավարության թողարկած արժեթղթերի հետ կապված պահանջները, ինչպես նաև կառավարությանը հատկացված վարկերը:

Արտաքին պասիվներն առևտրային բանկերի պարտավորություններն են ոչ ռեզիդենտներին, ինչպիսիք են ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվները, այլ ոչ ռեզիդենտների դեպոզիտները և այլն՝ անկախ արժույթից:

Դրամավարկային կարգավորման մարմինների և առևտրային բանկերի հաշվեկշիռների համախմբումից հաշվարկվում է դրամական զանգվածը՝ այսինքն փողի առաջարկը:

Այն նույնպես ունի ձևավորման ուղղություններ, որը հանդիսանում է ամբողջ բանկային համակարգի ԶԱԱ և ԶՆԱ-ը (դրանք ստացվում են նույն ձևով, ինչ որ կենտրոնական բանկի դեպոզիտ): Իսկ դրամական զանգվածը հանդիսանում է տնտեսության նկատմամբ բանկային համակարգի պարտավորությունները կամ այսպես կոչված փողային պարտավորությունները: Դրանք են.

- կանխիկ դրամը բանկային համակարգից դուրս,
- տնային տնտեսությունների և տնտեսավարող սուբյեկտների դեպոզիտներն առևտրային բանկերում:

Ինչպես կարելի է տեսնել, դրամական զանգվածում առևտրային բանկերի թղթակցային հաշիվների փոխարեն մենք տեսնում ենք տնտեսության ավանդները:

Տարբերություններ կան նաև դրամական զանգվածի ձևավորման ուղղություններում.

Դրամական զանգվածի ուղղությունները զանգված (փողային մաս)	Դրամական
ԶԱԱ	բանկային համակարգից դուրս կանխիկ
ԶՆԱ	
• տնտեսությանը տրված վարկեր	ռեզիդենտների ավանդները
• կառավարության պարտավորություն.	
• այլ հաշիվներ	

5.3. Արտաքին հաստիք

Տարվա ընթացքում մի երկրի ռեզիդենտները կատարում են մի շարք գործարքներ մի այլ երկրի ռեզիդենտների հետ. ապրանքերի և ծառայությունների ներմուծում և արտահանում, կանխիկ վճարումներ ու մարումներ, ոսկու առք ու վաճառք, նվիրատվություններ, վարկեր ու ներդրումներ և այլն: Այս բոլոր գործառնությունները որոշակի ձևով միմյանց հետ փոխկապակցված են և բոլորը միասին կազմում են երկրի վճարային հաշվեկշիռը: Փաստորեն արտաքին առևտուրը կարգավորելու համար հարկավոր է հստակ տեղեկատվություն երկրի միջազգային գործառնությունների վերաբերյալ, ինչը հնարավոր է ստանալ միայն վճարային հաշվեկշիռից: Առավել ևս, որ վճարային հաշվեկշռի միջազգային ստանդարտներին համապատասխան կազմումը հնարավորություն է տալիս տարբեր երկրների արտաքին գործառնություններին վերաբերվող տեղակատվությունը համադրելի դարձնել:

Երկրի վճարային հաշվեկշիռը, որպես որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարի) ներքին և օտարերկրյա ռեզիդենտների միջև կատարվող բոլոր տնտեսական գործառնությունների վիճակագրական դասակարգումն է, որն ի վիճակի է ցույց տալ այդ երկրի միջազգային տնտեսական ամբողջական դիրքը: Այս տեսակետից վճարային հաշվեկշիռը, մասնավորապես, շատ օգտակար է այն պետական մարմինների համար, որոնք ուղղակիորեն պատասխանատու են երկրի արտաքին տնտեսական կայունության համար: Երկրի վճարային հաշվեկշիռը կարող է և ունի մեծ ազդեցություն նաև մասնավոր հատվածում ներգրավված մարդկանց վրա: Միջազգային առևտրում փորձ ձեռք բերած ձեռնարկատերը կամ ներդրողը, ներքին արտահանողը, բորսայի դիլերները պարզապես չեն կարող անտարբեր մնալ երկրների վճարային հաշվեկշիռներում արձանագրվող ընթացիկ միտումներին:

Վճարային հաշվեկշիռը սովորաբար բաժանվում է երկու մասի՝ ընթացիկ հաշվի, կապիտալի և ֆինանսական հաշվի: Անկախ նրանից, թե ինչ արժույթով է իրականացվել տվյալ գործարքը, ընդունված է այն վճարային հաշվեկշռում գրանցել տեղական արժույթով: Սակայն, եթե երկրի արժույթը շատ անկայուն է, ապա տնտեսական վերլուծությունների համար նպատակահարմար կլինի ունենալ վճարային հաշվեկշիռ՝ արտահայտված մշտական գործընկեր երկրի արտարժույթով կամ այլ կայուն փոխարկելի

արտարժույթով: Հայաստանի Հանրապետությունում այն կազմվում է ԱՄՆ դոլարով և հայկական դրամով:

Վճարային հաշվեկշիռը և միջազգային ներդրումային դիրքը¹² հիմնականում ենթարկվում է հաշվապահական հաշվառման ընդհանուր կանոններին, պարզապես անհրաժեշտ է ակտիվային մասը տեղափոխել հաշվեկշռի աջ մաս (հորիզոնական հաշվեկշռից անցում կատարել ուղղահայաց հաշվեկշռի) և խմբավորել ըստ ընթացիկ, կապիտալի ու ֆինանսական գործառնությունների (միաժամանակ հիշել որ ակտիվային տեղափոխության արդյունքում ակտիվների ավելացումը դիտարկվում է որպես դեբետային չրջանառություն և հակառակը): Արդյունքում վճարային հաշվեկշռի բոլոր հոդվածների գումարը հավասարվում է գրոյի: Այժմ ներկայացնենք վճարային հաշվեկշռի հիմնական դասակարգումների համառոտ նկարագրությունը:

5.3.1. Ընթացիկ հաշիվ

Ոչ ֆինանսական ակտիվներով ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ցանկացած գործառնությունները (ներառյալ ընթացիկ ակտիվների անհատույց տրամադրումը) հաշվառվում են ընթացիկ հաշվում, մասնավորապես, ապրանքներ, ծառայություններ, եկամուտ և ընթացիկ տրանսֆերտներ ենթահաշիվներում:

Ա) Ապրանքներ

Ապրանքների ներմուծում և արտահանում հաշիվը արտացոլում է տարբեր շարժական ապրանքների արտահանման կամ ներմուծման գործարքները, սեփականության իրավունքի փաստացի կամ պայմանական փոփոխությունը ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև:

Բ) Ծառայություններ

Այս հաշվում արտացոլվում են ծառայությունների արտահանումը և ներմուծումը, մասնավորապես, ուղևորների և բեռների միջազգային

¹² Պետք է նշել որ վճարային հաշվեկշիռը ներկայացնում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև այսպես կոչված տնտեսական «հոսքերը» իսկ միջազգային ներդրումային դիրքը՝ արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների «պաշարը»:

տրանսպորտային փոխադրումները, կապի, նախագծակոնստրուկտորային, ապահովագրական, ֆինանսական և այլ ծառայությունները:

Գ) Եկամուտ (Ձուտ գործոնային եկամուտ արտասահմանից)

Արտադրության գործոնների օգտագործումից ստացված եկամուտներն արտացոլվում են ընթացիկ հաշվի «եկամուտ» ենթահաշվում: Այն ներառում է վարձատրությունը աշխատանքի դիմաց և եկամուտները ներդրումներից: Վերջին ենթաբաժինը ներառում է եկամուտներն ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներից:

Դ) Ընթացիկ տրանսֆերտներ (Ձուտ ընթացիկ տրանսֆերտներ արտասահմանից)

Ընթացիկ տրանսֆերտները սահմանազատվում են կապիտալ տրանսֆերտներից, որոնց հաշվառումը տարվում է կապիտալի և ֆինանսական հաշվում: Ընթացիկ տրանսֆերտները ներառում են պետական կառավարման մարմինների կողմից տրվող տրանսֆերտները (օրինակ՝ պաշտոնական մակարդակով միջոցների փոխանցում) և այլ տրանսֆերտները (օրինակ՝ աշխատողների դրամական փոխանցումներ, ապահովագրական վճարներ՝ առանց կյանքի ապահովագրման հետ չկապված ծախսերի):

5.3.2. Կապիտալ հաշիվ և ֆինանսական հաշիվ

Կապիտալ և ֆինանսական հաշվի մեջ մտնում են երկու հիմնական հաշիվներ՝ կապիտալ գործառնությունների հաշիվ և ֆինանսական հաշիվ: Կապիտալ հաշիվը ցույց է տալիս տնտեսության արտասահմանյան ֆինանսական ակտիվների և պասիվների վիճակը: Ակտիվները ոչ ռեզիդենտներին ներկայացվող պահանջներն են, իսկ պասիվները պարտավորություններն են ոչ ռեզիդենտներին նկատմամբ:

Այս հաշվում արժեքի գնահատման ցանկացած փոփոխություն չի արտացոլվում: Այդ արվում է միջազգային ներդրումների հաշվեկշռում:

Ա) Կապիտալ գործառնությունների հաշիվ

Այն բաղկացած է երկու մասից՝ կապիտալ տրանսֆերտներից և չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերումից/վաճառքից:

Կապիտալ տրանսֆերտների շարքին են դասվում այն տրանսֆերտները, որոնք ներառում են՝

- Հիմնական կապիտալի սեփականություն իրավունքի փոխանցման իրավունքը,
- միջոցների փոխանցումը, որոնք այս կամ այն կերպ պայմանավորված կամ կապված են հիմնական կապիտալի ձեռքբերման կամ վաճառքի հետ,
- պարտքի ներումը վարկատուի կողմից:

Չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերումը/վաճառքը ներառում է հիմնականում ոչ նյութական ակտիվները՝ պատենտները, կապալի կամ այլ պայմանագրերը, որոնք կարող են փոխանցվել ուրիշներին:

Բ) Ֆինանսական հաշվի բաղադրիչների դասակարգումը կատարվում է՝ ելնելով ներդրումների տիպից կամ դրանց գործառնական դերից: Այսինքն.

1. ուղղակի ներդրումներ,
2. պորտֆելային ներդրումներ,
3. այլ ներդրումներ,
4. պահուստային ակտիվներ:

Այս բաժնի բաղադրիչների խմբավորումը կատարվում է նաև ըստ ակտիվների և պասիվների, ըստ դրանց ժամկետայնության ընդունված տարանջատման, ինչպես նաև ըստ ակտիվներում օգտագործվող ֆինանսական գործիքի ձևի: Վերջին խմբավորումը հիմնականում կիրառվում է պորտֆելային և այլ ներդրումների համար:

Ուղղակի ներդրումներն արտացոլում են երկարաժամկետ տնտեսական շահագրգռվածությունը մի երկրի տնտեսական միավորի մեկ այլ երկրի ռեզիդենտ հանդիսացող տնտեսական միավորի գործունեության մեջ: Որպեսզի կատարված ներդրումները համարվեն ուղղակի ներդրումներ, պետք է բավարարվի նշանակալից փայամասնակցության պայմանը, որը ենթադրում է տնտեսավարող միավորի կապիտալի մեջ ձայնի իրավունք տվող առնվազն 10 տոկոս մասնակցություն:

Պորտֆելային ներդրումները ներառում են բաժնետոմսերի, պարտատոմսերի, մուրհակների, դրամական շուկայի կարճաժամկետ գործիքների, ֆինանսական ածանցյալների հետ կատարվող գործառնությունները:

Այլ ներդրումները ներառում են կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը, առևտրային վարկերն ու կանխավճարները, պահուստ չհամարվող արտարժույթն ու դեպոզիտները:

Պահուստային ակտիվները ներառում են դրամավարկային կարգավորման մարմինների տրամադրություն տակ եղած այն ակտիվները, որոնք կարող են օգտագործվել վճարային հաշվեկշռի կարգավորման համար: Ներառվում են դրամական ոսկին, փոխառություն հատուկ իրավունքը (SDR), պահուստային դիրքը ԱՄՆ-ում, արտարժույթային ակտիվները և այլ ֆինանսական ակտիվները:

Չնայած վճարային հաշվեկշիռը երկմուտքանի համակարգ է, երբեմն որոշ գործառնություններ չեն գրանցվում երկու անգամ: Դրա պատճառը սովորաբար կայանում է նրանում, որ պետական գրանցող մարմինները չունեն բավականին տեղեկատվություն մեկ տարում կատարվող բոլոր միջազգային գործառնությունների մասին: Փոխարենը, նրանք երբեմն կատարում են մեկ մուտք տարբեր հաշիվներում, կախված տարբեր աղբյուրներից, դրանց վստահության աստիճանից և այլ պատճառներից: Արդյունքում առաջացած շեղումները գրանցվում են սխալների և բացթողումների հաշվում:

Վճարային հաշվեկշռի բաժիններին ծանոթանալուց հետո կարելի է դուրս բերել մակրոտնտեսական կարևորագույն բանաձևերից մեկը, որը բացատրում է կապը վճարային հաշվեկշռի և մակրոտնտեսական այլ ցուցանիշների միջև:

Ինչպես արդեն գիտենք՝

$$\begin{aligned} \text{Համախառն ներքին արդյունք} &= \text{Մասնավոր սպառում} + \\ &\text{Պետական սպառում} + \text{Ներդրումներ (պետական և մասնավոր)} + \\ &\text{Արտահանում} - \text{Ներմուծում} \\ \text{Համախառն ազգային արդյունք} &= \text{Համախառն ներքին արդյունք} \\ &+ \text{Ձուտ գործոնային եկամուտ արտասահմանից} \\ \text{Համախառն ազգային տնօրինվող եկամուտ} &= \text{Համախառն} \\ &\text{ազգային արդյունք} + \text{Ձուտ տրանսֆերտներ արտասահմանից} \end{aligned}$$

Հայտնի է նաև, որ խնայողությունները հավասար են համախառն տնօրինվող եկամտի և սպառման տարբերությանը: Տարածելով այս տրամաբանությունը ողջ տնտեսության վրա՝ կստանանք.

Խնայողություններ = Համախառն ազգային տնօրինվող եկամուտ – Մասնավոր սպառում – Պետական սպառում,

ինչը նույնն է թե՛

Խնայողություններ = Մասնավոր սպառում + Պետական սպառում + Ներդրումներ + Ձուտ արտահանանում + Ձուտ գործոնային եկամուտ + Ձուտ տրանսֆերտներ – Մասնավոր սպառում - Պետական սպառում

Կատարելով համապատասխան կրճատումները և ներդրումների մեծությունը «-» նշանով տեղափոխելով ձախ՝ կստանանք.

Խնայողություններ - Ներդրումներ = Ձուտ արտահանում + Ձուտ գործոնային եկամուտ + Ձուտ տրանսֆերտներ

Ակնհայտ է, որ վերջին հավասարման աջ մասը վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվն է:

Մասնավոր հատվածի խնայողություններ - Մասնավոր ներդրումներ + Պետական հատվածի պակասուրդ = Ընթացիկ հաշվի պակասուրդ

Այսինքն ընթացիկ հաշվի պակասուրդը մի կողմից ներկայացնում է ներքին տնտեսության զուտ պահանջարկը արտասահմանյան ապրանքների և ծառայությունների նկատմամբ, մյուս կողմից զուտ պահանջարկը արտաքին ներդրումների նկատմամբ, այսինքն ներդրումների այն մասը, որը ներքին խնայողությունների չբավականացման պատճառով պետք է կատարվեն արտաքին խնայողությունների հաշվին: Միևնույն ժամանակ ընթացիկ հաշվի պակասուրդը ցույց է տալիս ներքին տնտեսության արտաքին պարտքի ավելացման չափը:

Բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտների կողմից որոշումներ է ընդունվում ներդրումային և ընթացիկ գործառնությունների շուրջ: Հարց է առաջանում, եթե այդ որոշումների վրա ազդող գործոնները առաջին հայացքից իրար հետ ուղղակիորեն փոխկապակցված չեն, ապա ինչպես է ընթացիկ հաշվի ու Ֆինանսական և կապիտալի հաշվի մեծությունները հավասարակշռվում: Այդ հավասարությունը հաստատվում է այն արտասահմանյան պահուստների քանակով, որոնք մենք ցանկանում ենք պահել, այսինքն մեր ներդրումային և

ընթացիկ գործառնությունների շուրջ կայացված որոշումների արդյունքում մենք նաև որոշում ենք արտասահմանյան պահուստների այն մակարդակը, որը համապատասխանում է այդ մեծություններին: Այստեղ պետք է առանձնացնել կապիտալի և ֆինանսական հաշվի պաշտոնական պահուստների բաժինը, որը դիտարկվում է կապիտալ և ֆինանսական հաշվի կազմում և հանդես է գալիս որպես պարզ հաշվեկշռող հոդված: Այսինքն, պաշտոնական պահուստների մակարդակի փոփոխությունը պետք է փոխհատուցի Ընթացիկ ու Կապիտալ և ֆինանսական հաշիվների (չներառած Պահուստային ակտիվները) մակարդակների փոփոխությունից առաջացած անհաշվեկշռվածությունը: Պաշտոնական պահուստների մակարդակը որոշվում է կենտրոնական բանկի հաշվեկշռով, այսինքն այն հանդիսանում է կենտրոնական բանկի քաղաքականության տարր: Սակայն անհրաժեշտ է նկատի առնել, որ պահուստների այս կամ այն մակարդակը պայմանավորում է նաև դրամական բազայի համապատասխան մակարդակ՝ արդյունքում նաև փողի առաջարկի մակարդակ: Այսինքն արտաքին հատվածում անհաշվեկշռվածությունը ազդում է նաև ներքին տնտեսության գների մակարդակ վրա:

6 Պետական քաղաքականության իրականացման իրավասու մարմինները

Տնտեսության հատվածների, առանձին ինստիտուցիոնալ միավորների կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության և ազգային հաշվետարության նման կապն անհրաժեշտություն է առաջացնում ավելի մանրամասն ներկայացնել ոչ միայն պետական կառավարման ու դրամավարկային կարգավորման մարմինները՝ որպես տնտեսության հատվածներ, այլ նաև այդ հատվածներում տնտեսական քաղաքականության մշակման և իրացման հիմնական սկզբունքները:

Տնտեսության սուբյեկտների շարքում իրենց տեղն ունեն պետական տնտեսական քաղաքականություն մշակողները, որոնք, իրենց լիազորությունների շրջանակներում, իրականացնում են որոշակի նպատակային գործառնություններ:

Պետական տնտեսական քաղաքականության շրջանակում առանձնանում են քաղաքականությունների երկու առանցքային ուղղություն՝ դրամավարկային և հարկաբյուջետային: Ակնհայտ է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի մակրոտնտեսական քաղաքականության կարգավորման իր ոլորտները, որի հետևանքով պետական քաղաքականություն մշակող մարմինների միջև առկա է որոշակի մասնագիտացում: ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության մշակման և իրացման համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ դրամավարկային քաղաքականության համար՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

Հաշվի առնելով դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության՝ ընդհանուր մակրոտնտեսական հավասարակշռվածության և միկրոմակարդակի վրա ունեցող զգալի ազդեցությունը, ստորև կքննարկվի այդ քաղաքականությունների նպատակները, գործիքները և իրացման մեխանիզմները:

Տնտեսության կառավարման գործում իրենց ունեցած դերի տեսանկյունից տնտեսական քաղաքականություն մշակողներին կարելի է նույնացնել այն հատվածի հետ, որում նրանք գործում են: Այսպես, կարելի է ասել, որ տնտեսական քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկի և

կառավարություն, կողմից, համապատասխանաբար դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն միջոցով:

6.1. Կենտրոնական կառավարություն

Սույն գլխի շրջանակներում փորձ կկատարվի պատասխանել այն հարցին, թե ազգային հաշիվների տեսանկյունից, ինչպես են պետական կառավարման մարմիններն իրենց տրված լծակների օգնությամբ իրականացնում հարկաբյուջետային քաղաքականությունը, և տնտեսության մյուս գործակալներն ինչ սպասելիքներ ունեն այդ քաղաքականությունից:

Ինչպես հայտնի է, պետական կառավարման մարմինների գործունեությունն իր արտացոլումն է գտնում պետական բյուջում, այսինքն՝ պետական տնտեսական քաղաքականության (առաջին հերթին հարկաբյուջետային) փոփոխությունն անխուսափելիորեն իր արտացոլումը կստանա պետական բյուջեում՝ եկամուտների, ծախսերի և պակասուրդի, ինչպես նաև դրանց ենթահոդվածների կառուցվածքում: Այսինքն տնտեսվարող սուբեկտները կարող են գնահատել հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները, վերլուծելով պետական բյուջեն և, հիմնվելով այդ վերլուծությունների վրա, ճշգրտել իրենց տնտեսական վարքագիծը:

Պետությունն իր հիմնական տնտեսական գործառույթն իրականացնում է հարկերի ու պետական ծախսերի մակարդակների որոշմամբ, հասարակության գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող օրենքների և այլ նորմատիվային ակտերի ընդունմամբ և այլն: Թվարկված լծակների շարքում իրենց ուրույն տեղն ունեն պետական եկամուտների և ծախսերի, ինչպես նաև խնայողությունների և ներդրումների բնագավառում կիրառվող միջոցառումների համակարգը, որը տնտեսագիտության մեջ և գործնականում ունի հարկաբյուջետային քաղաքականություն անվանումը:

Ինչպես և ցանկացած քաղաքականություն, հարկաբյուջետայինը նույնպես ի կատար է ածվում որոշակի գործիքների միջոցով: Այդ գործիքները նեղ ըմբռնմամբ հարկերն ու պետական ծախսերն են, իսկ ավելի լայն առումով՝ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը: Վերջին մտքի հետ կապված կարելի է նշել, որ եկամուտները, ծախսերը և պակասուրդը միաժամանակ չեն կարող լինել հարկաբյուջետային քաղաքականության

գործիքներ, քանի որ դրանցից ցանկացած երկուսի ընտրությամբ միարժեքորեն որոշվում է երրորդը:

Հարկաբյուջետային քաղաքականության յուրաքանչյուր գործիք յուրովի է ազդում տնտեսության վրա, ինչն էլ հիմք է ծառայում կոնկրետ իրավիճակում դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու համար: Միևնույն ժամանակ գործիքների ընտրության տեսանկյունից կարևոր է նաև կիրառման ժամանակահատվածը, ազդեցության չափը, քաղաքական գործոնները և այլն:

Ազգային հաշիվների տեսանկյունից պետությունը մի կողմից վերցնում է վճար իր մատուցած ծառայությունների համար, մյուս կողմից՝ մասնավոր հատվածի փոխարեն որոշում է ընդունում նրա ստացված եկամուտների մի մասի սպառման և խնայման մակարդակների շուրջ:

Հարկերը ցույց են տալիս թե պետությունը մասնավոր հատվածի եկամտի որ մասն է վերցրել, ինչպես նաև ելնելով հարկային օրենսդրությունից պայմանավորում են հարկային բեռի բաշխվածությունը, այսինքն ցույց են տալիս, թե հարկային քաղաքականությունը ինչպես է ազդել հարկ վճարողների տարբեր խմբերի վրա:

Միևնույն ժամանակ պետության ծախսերի մի մասի՝ աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների գնում, պետական ներդրումներ, միջոցով մենք պարզում ենք, թե պետական հատվածը ինչքան է ՀՆԱ ստեղծել:

Հիշենք, որ.

ՀՆԱ = Մասնավոր սպառում + Մասնավոր ներդրումներ + պետական հատվածի ծախսերը աշխատավարձի, ապրանքների և ծառայությունների գնման վրա + պետական ներդրումներ + զուտ արտահանում:

Տրանսֆերտային ծախսերը ցույց են տալիս պետության կողմից եկամուտների վերաբաշխման ծավալները և ուղղությունները, միևնույն ժամանակ պետք է հիշել, որ վերաբաշխումը սերտորեն կապված է նաև հարկային բեռի բաշխվածության հետ, քանի որ ցույց է տալիս, թե հարկաբյուջետային քաղաքականության միջոցով ինչպես են փոփոխվել բնակչության եկամուտները:

Արտաքին և ներքին տոկոսավճարները մատնանշում են, թե փոխառու միջոցների համար պետությունը որքան գործոնային եկամուտներ է վճարել ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին:

Հարկաբյուջետային քաղաքականության գործիքների շարքում կարելի է առանձնացնել պետական բյուջեի պակասուրդը, քանի որ վերջին ժամանակներս մեծ ուշադրություն է դարձվում այս ցուցանիշին և նրա ֆինանսավորմանը: Դա նշանակում է, որ պետական կառավարման մարմինները փոփոխության են ենթարկում պակասուրդի մեծությունը: Պետական բյուջեի պակասուրդի կապը տնտեսության մյուս հատվածների ֆինանսական հոսքերի հետ առավել ցայտուն կերպով է երևում հետևյալ բանաձևից՝

$$\text{CAB} = (\text{Sp} - \text{Ip}) + \text{Def},$$

որտեղ՝

CAB-ը ընթացիկ հաշվի հաշվեկշիռն է, Sp-ն և Ip-ն՝ համապատասխանաբար մասնավոր հատվածի խնայողությունները և ներդրումները, իսկ Def-ը՝ պետական բյուջեի պակասուրդը:

Այս բանաձևը նշանակում է, որ անփոփոխ ընթացիկ հաշվի պայմաններում պակասուրդի մեծացումը կբերի $(\text{Sp} - \text{Ip})$ մեծության նվազման, ինչը համարժեք է մասնավոր ներդրումների անկման, իսկ ֆիքսված $(\text{Sp} - \text{Ip})$ -ի պայմաններում մեծանալու է ընթացիկ հաշվի պակասուրդը: Այս օրինակը ցույց է տալիս, որ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ենթադրում է մասնավոր կամ օտարերկրյա խնայողությունների կլանում:

Տնտեսության այլ հատվածների խնայողությունների կլանում ասելով հասկանում ենք այն ներդրումները, որոնք կարող էին կատարվել առաջիններիս կողմից, սակայն օգտագործվել են պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման համար:

Նման կլանմամբ, հարկային բեռի բաշխվածությամբ և ազգային եկամտի վերաբաշխման չափերով էլ հենց պայմանավորված է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության գնահատումը:

6.2. Կենտրոնական բանկ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերջնական նպատակը հանդիսանում է գների կայուն մակարդակի պահպանումը, որը դիտարկվում է որպես իրականացվող մակրոտնտեսական կայուն քաղաքականության անկյունաքար:

Ազատ շուկայի պայմաններում կենտրոնական բանկը, բնականաբար, չունի անմիջական վերահսկողություն գների մակարդակի վրա, և դրա համար էլ ընտրվում է դրամավարկային կարգավորման այս կամ այն միջոցը: Ընդհանրապես, գոյություն ունի գների կայունության պահպանման երկու հնարավորություն՝


- դրամական ագրեգատների վերահսկողություն,
- տնտեսությունում «անվանական խարխիխ» սահմանում:

Երկրորդն իրենից ներկայացնում է Ֆիքսված փոխարժեքի ռեժիմի սահմանում, որի պայմաններում քիչ հավանական է գների արագ աճ:

Ինչ վերաբերում է առաջին տարբերակին, որը կիրառվում է նաև Հայաստանի Հանրապետությունում, ապա կենտրոնական բանկը, վերահսկելով դրամի առաջարկը, վերահսկում է նաև ապրանքների և ծառայությունների նկատմամբ տնտեսությունում ձևավորվող ամբողջական պահանջարկը: Դրա արդյունքում վերահսկվում է նաև գների մակարդակը:

Միևնույն ժամանակ, հայտնի է, որ կենտրոնական բանկն իր գործառնություններով ազդում է դրամական բազայի վրա, իսկ ամբողջական պահանջարկի վրա անմիջականորեն ազդում է դրամի լայն իմաստով առաջարկը, որը նույնն է թե՛ դրամական զանգվածը: Հետևաբար կենտրոնական բանկը սահմանում է իր համար գործառնական կամ անմիջական նպատակ, որը հանդիսանում է դրամական բազան: Այն կոչվում է գործառնական, քանի որ որոշվում է անմիջականորեն ԿԲ գործառնություններով:

Դրամական զանգվածը հանդիսանում է կենտրոնական բանկի համար միջանկյալ նպատակ, իսկ վերջնական նպատակը հանդիսանում է սղաճը (տե՛ս կից գծապատկերը):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 17. ղրամավարկային գործիքների ազդեցության մեխանիզմը

Սղաճի այս կամ այն մակարդակի սահմանումը կապված է այն հանգամանքի հետ, թե սղաճի ինչ մակարդակն է համարվում անհրաժեշտ պոտենցիալ տնտեսական աճի դրսևորման համար: Այդ ցուցանիշները համադրվում են պետական բյուջեի ցուցանիշների հետ: Այսպես, եթե բյուջեի դեֆիցիտը բավականին մեծ է և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների մեջ զգալի է արտաքին ֆինանսավորումը, ապա սղաճի մակարդակը պետք է սահմանվի իրատեսական, որպեսզի չխախտվի արտաքին և ներքին հաշվեկշռվածությունը: (Արտաքին հաշվեկշռվածությունը բնութագրվում է դրամի փոխարժեքի կայունությունը, իսկ ներքին հաշվեկշռվածությունը՝ գների կայունությունը:)

Կենտրոնական բանկն իր գործառնական նպատակին՝ դրամական բազայի ծրագրային մակարդակին հասնելու համար կիրառում է դրամավարկային գործիքներ: Անուղղակի դրամավարկային գործիքներն այն ֆինանսական գործիքներն են, որոնք Կենտրոնական բանկը կիրառում է ֆինանսական շուկաներում՝ հանդես գալով որպես շուկայի մասնակից: Այսինքն, Կենտրոնական բանկը չի հարկադրում որևէ գործառնություն, այլ հանդես գալով շուկայում որոշակի ֆինանսական ակտիվների նկատմամբ առաջարկով կամ պահանջարկով, կատարում է իր գործառնությունները:

Ըստ գործառնությունների իրականացման բնույթի անուղղակի գործիքները կարելի է բաժանել երկու խմբի՝ բաց շուկայական գործառնություններ և մշտական հնարավորություններ:

Բաց շուկայական գործառնություններն այն գործիքներն են, որ կենտրոնական բանկը կիրառում է շուկայում, հանդես գալով որպես շուկայի մասնակից: Դրանք իրականացվում են աճուրդների, բանակցությունների միջոցով, ինչպես ֆինանսական շուկայի մյուս մասնակիցների միջև կնքվող գործարքները:

Բաց շուկայական գործառնություններն են.

- երկրորդային շուկայում պետական արժեթղթերի առք և վաճառքը,
- ռեպո գործառնությունների իրականացումը:

Մշտական հնարավորությունն այն գործիքն է, որը միշտ գործում է կենտրոնական բանկում և ցանկացած պահի հասանելի է շուկայի մասնակիցների համար: Դա բացատրվում է նրանով, որ կենտրոնական բանկը հանդիսանում է տնտեսությունում վերջին ատյանի վարկատու, և բանկերն իրենց կարճաժամկետ խնդիրները լուծելու համար միշտ պետք է ունենան (թեկուզ և բարձր տոկոսներով) վարկ վերցնելու հնարավորություն: Դրա համար էլ մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները ամենաբարձրն (երբ կենտրոնական բանկը վարկ է տալիս) ու ամենացածրն (երբ կենտրոնական բանկն ավանդներ է ընդունում) են: Դրան հակառակ բաց շուկայական գործիքների տոկոսադրույքները միշտ մոտ են շուկայի մնացած տոկոսադրույքներին:

Մշտական հնարավորության գործիքներն են.

- լոմբարդային վարկեր (ներարկող գործիքներ),
- ավանդներ (ներքաշող գործիքներ):

Եթե առևտրային բանկերն իրենց կարճաժամկետ խնդիրների լուծման համար (այլ ոչ թե մշտական բնույթ կրող բարդությունների լուծման համար) ունեն իրացվելիություն կարիք, ապա նրանք ցանկացած պահի կարող են դիմել կենտրոնական բանկ և գրավի առկայության դեպքում ստանալ շուկայում ամենաբարձր տոկոսադրույքներով վարկեր: Իսկ եթե բանկերը ունեն ավելցուկային միջոցներ, ապա կենտրոնական բանկը տրամադրում է բանկերին դրանք իր մոտ ավանդ ձևակերպելու հնարավորություն, ընդ որում շուկայում առկա ամենացածր եկամտաբերություններով:

7 Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Ազգային հաշիվներ

	Ա	Բ
1	Սպառում:	=Բ3+Բ4:
2	Պետական	=(Պետական կառավարում)Բ7+(Պետական կառավարում)Բ12
3	Մասնավոր	· 000
4	Ներդրումներ:	=Բ5+Բ6:
5	Պետական	=(Պետական կառավարում)Բ13+(Պետական կառավարում)Բ14
6	Մասնավոր	· 000
7	Կլանում:	=Բ1+Բ4:
8	Ապրանքների և ծառայությունների արտահանում:	=(Վճարային հաշվեկշիռ)Բ2+(Վճարային հաշվեկշիռ)Բ5:
9	Ապրանքների և ծառայությունների ներմուծում:	=(Վճարային հաշվեկշիռ)Բ3+(Վճարային հաշվեկշիռ)Բ6:
10	Ջրտ գործունային եկամուտներ արտասահմանից:	=(Վճարային հաշվեկշիռ)Բ7:
11	Ջրտ տրանսֆերտներ արտասահմանից:	=(Վճարային հաշվեկշիռ)Բ10:
12	ՀՆԱ	=Բ7+Բ8+Բ9
13	ՀԱԱ	=Բ10+Բ12
14	ՀԱՏԵ	=Բ11+Բ13

Հավելված 2

Պետական կառավարում

	Ա	Բ
1	Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	=Բ2+Բ3+Բ4
2	Հարկային եկամուտներ	000
3	Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	000
4	Պաշտոնական տրանսֆերտներ	=(Վճարային հաշվեկշիռ)Բ12+(Վճարային հաշվեկշիռ)Բ15
5	Ընդամենը ծախսեր և զուտ վարկավորում	=Բ6+Բ13
6	Ընթացիկ ծախսեր	=Բ7+Բ8+Բ9+Բ12
7	Աշխատավարձ	000
8	Տրանսֆերտներ և սուբսիդիաներ	000
9	Տոկոսավճարներ	=Բ10+Բ11
10	Արտաքին	=(Վճարային հաշվեկշիռ)Բ8
11	Ներքին	000
12	Ապրանքների և ծառայությունների գնում	000
13	Կապիտալ ծախսեր	000
14	Զուտ վարկավորում	000
15	Պակասորդ (-) / Ավելցուկ (+)	=Բ2-Բ5
16	Ֆինանսավորում	=Բ17+Բ19
17	Արտաքին ֆինանսավորում	=(Վճարային հաշվեկշիռ)Բ18+(Վճարային հաշվեկշիռ)Բ21
18	այդ թվում ԳՊ	=(Վճարային հաշվեկշիռ)Բ18
19	Ներքին ֆինանսավորում	=Բ20+Բ22
20	Բանկեր	000
21	Ոչ բանկային համակարգ	000
		0

Հավելված 3

Դրամական հատված

	Ա	Բ	Գ
		Նախորդ ժամանակահատված	Ընթացիկ ժամանակահատված
1	Ձուտ արտաքին ակտիվներ:	000	000
2	Ձուտ ներքին ակտիվներ:	=Բ3+Բ6:	=Գ3+Գ6:
3	Ձուտ ներքին վարկավորում:	=Բ4+Բ5:	=Գ4+Գ5:
4	Կառավարություն (զուտ)	000	=(Պետական կառավարում)Բ20+Բ4
5	Տնտեսություն	000	000
6	Ձուտ այլ ակտիվներ:	000	000
7	Դրամական զանգված:	=Բ1+Բ2:	=Գ1+Գ2:

Հավելված 4

Վճարային հաշվեկշիռ

	Ա	Բ
1	Առևտրային հաշվեկշիռ	=Բ2+Բ3
2	Ապրանքների ներմուծում	000
3	Ապրանքների արտահանում	000
4	Ծառայություններ (զուտ)	=Բ5+Բ6
5	Դեբետ	000
6	Կրեդիտ	000
7	Զուտ գործունային ցկանուտներ	=Բ18+Բ9
8	այդ թվում պետական կառավարում	000
9	այդ թվում դրամավարկային կարգավորման մարմիններ	000
10	Ընթացիկ տրանսֆերտներ	=Բ11+Բ12
11	Մասնավոր (զուտ)	000
12	Պաշտոնական (զուտ)	000
13	Ընթացիկ հաշիվ	=Բ1+Բ4+Բ7+Բ10
14	Կապիտալ և ֆինանսական հաշիվ	=Բ15+Բ16+Բ17+Բ20
15	Կապիտալ տրանսֆերտներ	000
16	Ուղղակի ներդրումներ	000
17	Պորտֆելային ներդրումներ	=Բ18+Բ19
18	պետական կառավարում	000
19	այլ հատվածներ (բացի Բանկային համակարգից*)	000
20	Այլ ներդրումներ	=Բ21+Բ22
21	պետական կառավարում	000
22	այլ հատվածներ (բացի Բանկային համակարգից*)	000
23	Ախալներ և բացթողումներ	000
24	ԶԱԱ-ի փոփոխություն	=-(Գ1-Բ1)
25	Ընդհանուր հաշվեկշիռ	=Բ13+Բ14+Բ23+Բ24
		0

*- Պարզության համար հաշվի չեն առնվել բանկային համակարգի որոշ հոդվածներ

Հավելված 5

Հուշերի արտասակ

	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
	Վզգային հաշիվներ	Մնացորդ հատված	Պետական կառավարումներ	Պետական կառավարումներ	Վերադարձված հատված	Գումար
1 Տնօրինվող եկամուտ	= (Ազգային հաշիվներ)Բ12+(Վճարային հաշիվներ)Բ7+(Վճարային հաշիվներ)Բ10	= -Ա1-Գ1	= (Պետական կառավարում)Բ1- (Վճարային հաշիվներ)Բ5- (Պետական կառավարում)Բ9- (Պետական կառավարում)Բ12			= Գումար(Ա1:Ե1)
2 Ապառում	= (Ազգային հաշիվներ)Բ1	= - (Ա2+Գ2)	= - (Պետական կառավարում)Բ6- (Պետական կառավարում)Բ9- (Պետական կառավարում)Բ12			= Գումար(Ա2:Ե2)
3 Ներդրումներ	= (Ազգային հաշիվներ)Բ4	= - (Ա3+Գ3)	= (Պետական կառավարում)Բ13			= Գումար(Ա3:Ե3)
4 Արտահանում (Ա և Ծ)	= (Վճարային հաշիվներ)Բ2+(Վճարային հաշիվներ)Բ5				= (Վճարային հաշիվներ)Բ2+(Վճարային հաշիվներ)Բ5	= Գումար(Ա4:Ե4)
5 Ներմուծում (Ա և Ծ)	= (Վճարային հաշիվներ)Բ3+(Վճարային հաշիվներ)Բ6				= (Վճարային հաշիվներ)Բ3+(Վճարային հաշիվներ)Բ6	= Գումար(Ա5:Ե5)
Գործնային եկամուտներ (զուտ)	= (Վճարային հաշիվներ)Բ7				= -Ա6	= Գումար(Ա6:Ե6)
Ընթացիկ տրամաֆերտներ (զուտ)	= (Վճարային հաշիվներ)Բ10				= -Ա7	= Գումար(Ա7:Ե7)
8 Հաշվեկշիռ	= Գումար(Ա7:Ա7)	= Գումար(Բ1:Բ3)	= Գումար(Գ1:Գ3)			= Գումար(Ա8:Ե8)
9 Արտաքին ֆինանսավորում						= Գումար(Ա9:Ե9)

Հավելված 5

	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
	Ազգային հաշիվներ	Մասնավոր հաշիվներ	Պետական կառավարման նախններ	Դրամական հատված	Արտաքին հատված	Գումար
10	Կապիտալ տրանսֆերտներ		=(Վճարային հաշվեկշիռ)Բ15		=Գ10	=Գումար(Ա10:Ե10)
11	Ուղղակի ներդրումներ	=(Վճարային հաշվեկշիռ)Բ16			=Բ11	=Գումար(Ա11:Ե11)
12	Վարկավորում (զուտ)	=(Գ12+Ե12)	=(Պետական կառավարում)Բ17		=(Վճարային հաշվեկշիռ)Բ17+(Վճարային հաշվեկշիռ)Բ20	=Գումար(Ա12:Ե12)
13	ԶԱԱ-ի փոփոխություն			=Ե13	=(Վճարային հաշվեկշիռ)Բ24	=Գումար(Ա13:Ե13)
14	Ներքին ֆինանսավորում					=Գումար(Ա14:Ե14)
15	Վարկավորում	=(Դրամական հատված)Գ9-(Դրամական հատված)Բ9	=(Պետական կառավարում)Բ20	=(Դրամական հատված)Գ3-(Դրամական հատված)Բ3		=Գումար(Ա15:Ե15)
16	Ոչ բանկային (պետական կառ.)	=Գ16	=(Պետական կառավարում)Բ21			=Գումար(Ա16:Ե16)
17	Զուտ վարկավորում (պետական կառ.)	=Գ17	=(Պետական կառավարում)Բ14			=Գումար(Ա17:Ե17)
18	Դրամի արաջարկի փոփոխություն	=Դ18		=(Դրամական հատված)Գ7-(Դրամական հատված)Բ7		=Գումար(Ա18:Ե18)
19		=(Դ19+Ե19)		=(Դրամական հատված)Գ6-(Դրամական հատված)Բ6	=(Վճարային հաշվեկշիռ)Բ23	=Գումար(Ա19:Ե19)
20	Գումար	=(Գ18+Գ19+Գ9)	=(Գումար(Գ8,Գ9,Գ19))	=(Գումար(Դ8,Դ9,Դ19))	=(Վճարային հաշվեկշիռ)Բ20	=Գումար(Ա20:Ե20)
	0	0	0	0	0	0

Ազգային հաշիվների հորվածների և ցուցանիշների փոխապահովության սխեման

	Արտադրության		Եկամուտների ձևավորում		Սկզբնական եկամուտների բաշխում		Եկամուտների երկրորդական բաշխում		Եկամուտների օգտագործման հաշիվ		Կապիտալի հետ գործառնությունների հաշիվ	
	զմանում	նվազում	զմանում	նվազում	զմանում	նվազում	զմանում	նվազում	զմանում	նվազում	զմանում	նվազում
Համախառն թողարկում		1391										
Ապրանքների և ներմուծման հարկեր		67.2	67.2									
Ապրանքների և ներմուծման սուբսիդիաներ		-2.9	-2.9									
Միջանկյալ սպառում	651											
Համախառն ներքին արդյունք	804.3			804.3								
Վարձու աշխատողների վարձատրություն			336.1			336.1						
Արտադրության և ներմուծման հարկեր			74.3			74.3						
Համախառն շահույթ			396.8			396.8						
Սեփականությունից ստացված եկամուտներ արտերկրից			2.1			2.1						
Սեփականությունից փոխանցված եկամուտներ արտերկիր			0.9			0.9						
Համախառն ազգային եկամուտ			805.5			805.5		805.5				
Ընթացիկ տրանսֆերտներ արտերկրից								92.5				
Ընթացիկ տրանսֆերտներ արտերկիր							17.5					
Համախառն ազգային տնօրինվող եկամուտ							880.5		880.5			
Վերջնական սպառում								922.9				
Համախառն խնայողություններ								42.4				
Կապիտալ տրանսֆերտներ արտերկրից												
Հիմնական կապիտալի համախառն կուտակում						805.5						5.4
Պաշարների փոփոխություն												130.3
Կապիտալ տրանսֆերտներ արտերկիր												23
Չուտ վարկարդում + Չուտ փոխառություն -												190.3

ԱԲԴ-ի բաժինները	1	2	3	4	5	6	7
1. Արտադրություն	Ծախսերի- թողարկում վերլուծություն, Արտադրողականության ան վերլուծություն	Սպառողական պահանջարկի վերլուծություն, Պետական ծախսերի հետազոտում	Հիմնական կապիտալի ծնավորման գործընթացների վերլուծություն, Ներդրումային վարքագծի հետազոտում	Ստատիստիկական պահանջարկի վերլուծություն			
2. Սպառում	Գործոնների արտադրողականության և տնտեսության արդյունավետության վերլուծություն	Եկամուտների բաշխում և վերաբաշխում, Հարկաբյուջետային քաղաքականություն	Մաշվածքի և մաշվածքի քաղաքականության վերլուծություն	Օտարերկրյա ներդրումների շահութաբերության հետազոտում, կրկնակի հարկման քաղաքականություն			
3. Կուտակում	Զուտ սեփական կապիտալի հետազոտում	Խնայողությունների դինամիկայի վերլուծություն	Դրամավարկային քաղաքականություն	Միջազգային ֆինանսների և իրացվելիության վերլուծություն, Երկարաժամկետ օտարերկրյա օգնության քաղաքականություն	Եկամուտների և կորուստների վերլուծություն		Զուտ ակտիվների վերլուծություն
4. Մնացյալ աշխարհ	Ներմուծման պահանջարկի վերլուծություն	Կարծաժամկետ օտարերկրյա օգնության քաղաքականություն	Միջազգային ֆինանսներ և իրացվելիություն, Երկարաժամկետ օտարերկրյա օգնության քաղաքականություն	Արտաքին առևտրի հաշվեկշի վերլուծություն			

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ
ձեռնարկ

Թողարկման պատասխանատու՝

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
www.ichd.org

Երևան, Սայաթ-Նովա 19
հեռ. 52 70 82, 58 26 38
էլ.փոստ mail@ichd.org

Ձեռնարկը պատրաստել են՝

փորձագետներ
Սասուն Մուրադյանը,
Աննա Սարգսյանը

Մասնագիտական խմբագիրներ՝

տնտեսագիտության թեկնածու
Ս. Վ. Լալայան,
տնտեսագիտության թեկնածու
Ա. Մ. Խուրշուդյան

Տպագրված է՝

«REM» տպագրական գործակալությունում

Թուղթը՝ օֆսեթ 1. Չափսը՝ 14,84x21:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

01.06.2001թ.

